# Ս. ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻ

Armenian Church Library http://hygradaran.weebly.com

# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

## Ե

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Armenian Church Library http://hygradaran.weebly.com

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻ**

# ՄՈՎՍԵՍԻ ԿՅԱՆՔԸ

**Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007**

ՀՐԱՄԱՆԱՒ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒ ՀԱՅՐԵՐ

## Ե

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

# Կ

ՀՏԴ
ԳՄԴ
Ս –

Թարգմ. ֆրանսերենից՝
**Պ. Շահբազյանի**

Խմբագիր՝
**Ասողիկ եպիսկոպոս**

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻ**
Ս – Մովսեսի կյանքը: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 168 էջ:

ԳՄԴ

Տպագրվում է մեկենասությամբ՝

.............................

ISBN © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

ապադովկյան երեք պանծալի և մեծագործ հայրերի մեջ իր մատենագրական վաստակով Ս. Գրիգոր Նյուսացին ամենաբեղուն հեղինակն է: Նրա մատենագրական վաստակը աչքի է ընկնում մտքի խորությամբ և այլաբանական պատկերներով, հատկանիշներ, որոնք գերազանցում են Ս. Բարսեղ Կեսարացու և Ս. Գրիգոր Նազիանզացու գործերին: Նյուսացին իր ոճի և իր խոսքի արվեստով հիացմունք է պատճառում: Նա իր երկերը շարադրել է հիմնականում կյանքի վերջին տարիներին՝ 380-394 թվականներին:

Նյուսացու դավանաբանական գրվածքները կրում են հակաճառական բնույթ: Նրա մատենագրական վաստակում կարևոր տեղ են գրավում նաև մեկնողական գրությունները, որոնցից մտքի փայլատակմամբ առանձնանում է «Մովսեսի կյանքը» երկասիրությունը: Այն մի փառաբանություն է կատարյալ կյանքի մասին, կամ առաքինի մի կյանք՝ կատարելության մասին:

«**Ի՞նչ բան է կատարյալ կյանքը մարդկանց համար**» հարցադրմանը Նյուսացին պատասխանում է Մովսեսի կյանքով:

Ո՞վ է Մովսես մարգարեն և ի՞նչ է ուսուցանում մեզ «կատարելության մասին»:

Նա այն մեծ առաջնորդն է, որ իսրայելացիներին ազատեց Եգիպտոսի ստրկությունից և անապատի միջով առաջնորդեց Քանանի սահմանները: Մովսեսը ծնվել է Եգիպտոսում: Նրան մեծացրեց փարավոնի քույրը և դաստիարակեց եգիպտական ոգով: Երբ արդեն չափահաս էր, նա այնպես վրդովվեց իսրայելացիների հանդեպ դաժան վերաբերմուն-

քից, որ սպանեց եգիպտացի վերակացուներից մեկին: Երբ փարավոնն իմացավ այդ մասին, Մովսեսը հարկադրված եղավ փախչել Եգիպտոսից: Անապատում նա հովվի կյանքով ապրեց և ամուսնացավ Յոթորի դուստրերից մեկի հետ:

Քառասուն տարի անց Աստված հայտնվեց Մովսեսին: Մովսեսը տեսավ, որ անապատի մորենին հրով վառվում է, բայց չի այրվում, և հասկացավ, որ Աստված է խոսում իր հետ: Աստված նրան պատվիրեց վերադառնալ Եգիպտոս և իր ժողովրդին այնտեղից դուրս բերելու համար թույլտվություն խնդրել փարավոնից: Փարավոնը մերժեց, որի հետևանքով եգիպտացիները տասը պատուհասների ենթարկվեցին: Այնուհետև փարավոնը Մովսեսին թույլատրեց իսրայելացիներին դուրս բերել Եգիպտոսից, բայց անմիջապես փոխեց իր միտքը. եգիպտացիները մինչև Կարմիր ծով հետապնդեցին իսրայելացիներին: Իսրայելացիները հասան անապատ, իսկ փարավոնի զորքը խեղդվեց ծովում:

Երեք ամիս անց Իսրայելի ժողովուրդը հասավ Սինա լեռը: Այստեղ առաջնորդ Մովսեսը դարձավ օրենսդիր Մովսես: Աստված նրան տվեց Տասը պատվիրանները և պաշտամունքի վրան կառուցելու հրահանգները:

Նախքան ժողովրդի առաջնորդությունը Յեսուին փոխանցելը Մովսեսն Աստծո օրենքը հանձնեց նոր սերնդին: Ժողովրդին օրհնելուց հետո նա բարձրացավ Նաբավ լեռը, որպեսզի կարողանա տեսնել Քանանը՝ այն երկիրը, որտեղ իր երբեմնի անհնազանդությունը թույլ չտվեց ոտք դնել: Մովսեսը մահացավ Մովաբի երկրում հարյուր քսան տարեկան հասակում:

Նրա կյանքի պատմությունը բաժանվում է երեք մասի, յուրաքանչյուրը՝ քառասնամյա ժամանակահատվածով:

**Առաջինը** նրա մանկությունն է, այսինքն՝ գետը նետվելուց և հանվելով փարավոնի դստեր որդեգիրը դառնալուց



մինչև նրա փախուստը Մադիամ: Այս ընթացքում Մովսեսն ապրեց փարավոնի արքունիքում. «եգիպտացիների ողջ իմաստությամբ կրթվեց և հզոր էր իր խոսքերով ու գործերով» (Գործք, Է 22):

**Երկրորդը** նրա փախուստից մինչև վերադարձն է Եգիպտոս (Գործք, Է 22), և հավանաբար այս ամբողջ ժամանակ Մովսեսն ապրեց Մադիամում՝ այսօրվա բեդվին-շեյխերի սովորության համեմատ: Այնտեղ ամուսնացավ Յոթորի Սեփորա դստեր հետ և անապատական կյանք վարեց: Որքա՜ն մեծ տարբերություն Մովսեսի այս և առաջին կյանքի միջև, այսինքն՝ արքունական շքեղության ու իմաստության և պարզ, վրանաբնակ կյանքի միջև: Բայց և այնպես Աստված նրան, ի փրկություն իր ժողովրդի, այս ճանապարհով պատրաստեց կյանքի **երրորդ** ժամանակի համար, որ սկսվում է Եգիպտոսից ելնելիս և հասնում մինչև Նաբավ լեռան վրա նրա մահը: Այս ժամանակահատվածում որքա՜ն գործ կատարեց Մովսեսը՝ որպես Բարձրյալի անմիջական պաշտոնյա:

Աստծո այս ծառայի անունը հաճախ է հիշվում հույն և լատին մատենագիրների մոտ, ավելի հաճախ՝ արաբական և հրեա րաբբունիների երկերում: Մովսեսին, որպես հռչակավոր անձի և իրենց բոլոր օրենքների ու կարգերի հիմնադրի, պատվում են հատկապես հրեաները իրենց գրվածքների մեջ: Յին ու Նոր Կտակարաններում բազմաթիվ անգամներ երևում է, թե որքան բարձր են գնահատում նրան սրբազան մատենագիրները. Սաղմ. , ճգ 7, ճե 26, ճԶ 16. Ես., ԿԳ 12. Երեմ., ԺԵ 1. Դան., Թ 11. Մատթ., Ը 4. Յովհ., Ե 45, Թ 28. Գործ., Է 20, 37. Յռովմ., Ժ 5, 19. Եբր., Գ, ԺԱ 23:

Ինչ որ գործեց և սովորեցրեց Մովսեսը, գործեց և սովորեցրեց իբրև Բարձրյալի պաշտոնյա, բայց և այնպես ակնհայտ է, որ Մովսեսը հարմար էր այդ պաշտոնին իր բարո-

# ՄՈՎՍԵՍԻ ԿՅԱՆՔԸ

յական նկարագրով և առաքինություններով: Նրա բարեպաշտությունը, խոնարհությունն ու համբերատարությունը, իմաստությունն ու ժողովրդին ղեկավարելը, նախանձի բացակայությունն ու հավատն առ Աստված և անձնուրաց հայրենասիրությունը արժանի են նրան նմանվելու: Շատ բան է զարմանալիորեն նման Քրիստոսին Մովսեսի վարքուբարքում, որն իբրև ազատարար, ղեկավար և առաջնորդ ժողովրդի, որ կրում էր իր սրտի վրա, եղավ նրանց բարեխոսը, օգնականը, ուսուցիչն ու սնուցիչը մինչև խոստացված երկիրն հասնելը:

Գրիգոր Նյուսացին «Մովսեսի կյանքը» այլաբանական աշխատության մեջ ներկայացնում է Մովսես մարգարեի իդեալական կերպարը` որպես մեծ առաջնորդի:

Աշխատությունը բաղկացած է երկու մեկնություններից:

Առաջին մասում Նյուսացին ներկայացնում է Մովսեսի գործնական կյանքը` ըստ «Ելից և Թուոց» գրքերի պատմության:

Աշխատության երկրորդ և կարևոր մասում ներկայացվում է Մովսես մարգարեի կյանքը այլաբանական մեկնությամբ, որի մեջ Իսրայելի մեծ օրենսդիրն ու հոգևոր առաջնորդը դառնում է խորհրդանիշը երկրի վրա մարդու միստիկ պանդխտության և հոգու վերացմանը առ Աստված: Կյանքի կատարելության մասին գաղափարը Մովսեսի կյանքով դառնում է ուղեցույց սերունդների համար: Քրիստոնյաների համար կատարելությունը Հիսուսին հետևելու հարատև ընթացքն է:

**Ասողիկ եպիսկոպոս**

# ՆԱԽԱԲԱՆ

*1. Ձիարշավի մրցումների հանդիսատեսները, տեսնելով մրցամարտի մեջ ներգրավված իրենց հովանավորյալներին (թեև այս վերջինները ոչ մի բան բաց չեն թողնում արագ արշավելու համար), նրանց հաղթական տեսնելու ցանկությամբ տարված, չկարողանալով զսպել իրենք իրենց, խելահեղ աղաղակներ են արձակում տրիբունաների վրայից: Նրանց հայացքը անշեղորեն հետևում է արշավողներին. նրանք գրգռում են հեծյալին (գոնե այդպես են կարծում), որպեսզի ավելի արագ արշավի. նրանք ծալում են իրենց ծնկները ձիերի հետ միաժամանակ և իրենց ձեռքը մեկնում դեպի հեծյալները՝ մտրակի նման այն շարժելով օդում: Այս ցույցերն անշուշտ չեն օգնում հաղթանակին, բայց այն շահագրգռությունը, որ նրանք ցուցաբերում են դեպի մրցակիցները, մղում է նրանց՝ արտահայտելու իրենց համակրանքը ձայներով և շարժումներով:*[1] *Ինձ թվում է, որ ես նույնանման մի բան եմ անում քո կապակցությամբ, ո՜վ իմ բարեկամների և եղբայրների մեջ ամենահարգելին, տեսնելով, որ առաքինության մրցասպարեզում մասնակից ես դառնում աստվածային մրցավազքին և արագ ու թեթև քայլքով շտապում դեպի «այն վարձատրությունը, որին Աստված կոչում է մեզ վերևից», գրգռում եմ քեզ իմ խոսքերով, շտապեցնում և հորդորում, որ ավելացնես քո արագությունն ու եռանդը: Այս բանն անում եմ թելադրված ոչ թե ինչ-որ անխորհուրդ մղումից, այլ քեզ միշտ բարիքներով բեռնավորված տեսնելու իմ ցանկությունից՝ որպես ամենասիրելի հարազատ որդու:*

*2. Վերջերս ինձ ուղարկած քո նամակում խնդրում էիր, որ քեզ որոշ ցուցումներ տամ կատարելության վերաբերյալ: Քո խնդրանքն ինձ թվաց միանգամայն ընդունելի: Գուցե իմ ասելիքներից ոչ մեկը քեզ օգտակար չլինի: Բայց գոնե ժամանակս ամբողջովին կորցրած չեմ լինի՝ հնազանդության մի օրինակ տալով քեզ:[2] Արդարև, նկատի ունենալով, որ ես հաստատված եմ այնքան շատ հոգիների վրա որպես հայր, մտածեցի, որ իմ սպիտակած մազերին հարմար կլինի[3] ընդառաջել առաքինազարդ երիտասարդի քո խնդրանքին: Այս օրինակով դու առավել ամրացած կլինես հնազանդության մեջ՝ քո երիտասարդ անձն արդեն վարժված լինելով հոժարակամ համոզվելու իմ խոսքերին:*

*3. Բայց բավական է այս մասին: Այժմ պետք է ձեռնամուխ լինենք մեր աշխատանքին՝ խնդրելով Աստծուն, որ առաջնորդի մեզ: Ուրեմն, սիրելի եղբայր, դու խնդրեցիր, որ քեզ նկարագրեմ, թե ընդհանրապես ինչ բան է կատարյալ կյանքը: Եթե դու ուզում ես գտնել այն, ինչ փնտրում ես իմ պատասխանի մեջ, ապա բնականաբար դա այն նպատակով է, որ քո սեփական կյանքն օգտվի այն բարիքից, որ քեզ տալու են իմ խոսքերը: Դժբախտաբար կարծում եմ, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը անկարելի բաներ են: Արդարև, եթե խոսքը վերաբերում է կատարելությունը մտքով ըմբռնելուն կամ մտքով ըմբռնվածը սեփական կյանքով ցույց տալուն, ապա կասեմ, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը մեր ուժերից վեր են: Թերևս ես միակ անձը չեմ, որ այսպես եմ մտածում, և որ առաքինության մեջ առաջ գնացած բազմաթիվ սուրբ անձնավորություններ կխոստովանեն, որ նման բան իրենց կարողությունից վեր է: 4. Այսուհանդերձ, ինչպես Սաղմոսերգուն է ասում, որպեսզի սարսափից չդողամ այնտեղ, ուր սարսափ չկա, ավելի հստակ կերպով կասեմ քեզ իմ մտածումը:*



*5. Կատարելությունը զգացական կյանքի բոլոր բաներում պարփակվում է՝ հաստատված որոշակի սահմանների մեջ, ինչպես շարունակվող կամ ընդհատվող քանակությունը: Արդարև, քանակական ամեն չափ ենթադրում է որոշակի սահմաններ: Եվ նա, ով նկատի ունի կանգունը կամ 10 թիվը, լավ գիտե, որ դրանց համար կատարելությունը կայանում է այն բանի մեջ, որ դրանք ունեն մի սկիզբ և մի վախճան: Բայց եթե խոսքը առաքինության մասին է, ապա մենք հենց Պողոս առաքյալից սովորեցինք, որ իր կատարելությունն ունի միայն մեկ սահման. դա ոչ մի սահման չունենալն է: Արդարև, բարձր իմացականության տեր այս մեծ մարդը, աստվածային այս առաքյալը, վազելով առաքինության ճանապարհի վրա, երբեք չդադարեց «ձգտել դեպի առջևում եղածները»[4]: Կանգ առնել վազելուց՝ նրան թվում էր վտանգավոր: Ինչո՞ւ: Նրա համար, որ ամեն բարի բան, իր բուն էությամբ, սահման չունի, այն սահմանափակվում է՝ միայն հանդիպելով իր հակառակին. այսպես՝ կյանքը սահմանափակվում է մահով, լույսը՝ խավարով: Եվ ընդհանրապես ամեն բարի բան կանգ է առնում, երբ հանդիպում է իր հակառակին: Ուրեմն, ինչպես որ կյանքի վախճանը մահվան սկիզբն է, այնպես էլ կանգ առնել առաքինության ճանապարհի վրա՝ նշանակում է սկսել վազել արատի ճանապարհի վրա: 6. Ահա թե ինչու մեր խոսքերն այնքան էլ սխալ չէին, երբ ասում էինք, թե՝ ինչ վերաբերում է առաքինությանը, անկարելի է սահմանել նրա կատարելությունը: Արդարև, մենք ցույց տվեցինք, որ այն, ինչ պարփակվում է սահմանների մեջ, առաքինություն չէ:*

*Գալով այն մյուս հաստատմանը, թե՝ նրանք, ովքեր փնտրում են առաքինի կյանքը, անկարելի է, որ հասնեն կատարելության, պետք է հստակեցնել նաև դրա իմաստը:*

7. Այն, ինչ բարի է իր առաջնային և բուն իմաստով, և որի էությունը բարությունն իսկ է, այսինքն՝ Աստվածությունն ինքը, իրականում այն է, ինչ բովանդակում է իր էությունը: Արդ, հաստատեցինք, որ առաքինությունն ուրիշ սահման չունի բացի արատից: Մյուս կողմից՝ ասացինք, որ Աստվածությունը բացառում է ամեն հակառակ բան: Ուրեմն կարող ենք եզրակացնել, որ աստվածային բնությունն անեզր է և անսահման: Բայց նա, ով փնտրում է ճշմարիտ առաքինությունը, ի՞նչ բանի է մասնակցում, եթե ոչ ՝ Աստծուն, քանի որ կատարյալ առաքինությունն ինքը Աստված է: Բացի դրանից, եթե նրանք, ովքեր ճանաչում են ինքն իր մեջ Գեղեցիկը, ապա ձգտում են մասնակցելու դրան, և քանի որ այդ Գեղեցիկն անսահման է, անհրաժեշտորեն դրան մասնակցել ուզողի ցանկությունը կլինի նույնքան ծավալուն, որքան անսահմանը և հանգիստ չի ճանաչի բնավ: 8. Հետևաբար բացարձակապես անհնար է հասնել կատարելության, քանի որ, ինչպես հաստատեցինք, կատարելությունը չի պարփակվում սահմանների մեջ, և առաքինությունն ունի միայն մի սահման՝ անեզրը, անչափելին: Ինչպե՞ս կարելի է հասնել փնտրված սահմանին, եթե այն գոյություն չունի[5]:

9. Մենք ցույց տվեցինք, որ այն, ինչ փնտրում ենք, բացարձակապես դուրս է մեր կարողությունից: Սակայն դրա համար չէ, որ պիտի անտեսենք Տիրոջ հետևյալ պատվիրանը, որն ասում է. «Եղե՛ք կատարյալ, ինչպես որ կատարյալ է ձեր երկնավոր Հայրը»: Արդարև, եթե նույնիսկ հնարավոր չէ լիովին ձեռք բերել ճշմարիտ բարիքները, համենայն դեպս խելամիտ մարդու համար արդեն իսկ մեծ բարիք է ամբողջովին զրկված չլինել դրանցից: 10. Հարկավոր է, ուրեմն, մեծ եռանդ ցուցաբերել՝ չզրկվելու համար այն կատարելությունից, որին ունակ ենք, և այն ձեռք բերելու այն չափով, որ տրված է մեզ ունենալ: Հիրավի, ո՞վ գիտե արդյոք, թե միշտ ավելի մեծ բարիքի տիրանալու ձգտումը մարդկային բնության կատարելությունը չէ[6]:

11. Մեր սույն ուսումնասիրության մեջ մենք կարող ենք մեծ օգուտ ունենալ՝վերցնելով Աստվածաշունչը որպես առաջնորդ: Աստծու խոսքն ասում է Եսայի մարգարեի բերանով. «Նայեցե՛ք Աբրահամին՝ ձեր հորը, և Սառային, որը ծնեց ձեզ»: Այս խոսքն ուղղված է մոլորված հոգիներին: Արդարև, ինչպես որ նավահանգստի ուղղությունից հեռու քշված նավաստիների համար բարձունքի վրա գտնվող կամ հեռվից լեռան գագաթին երևացող փարոսը նշանացույց է ծառայում ճիշտ ճանապարհը վերագտնելու համար, այնպես էլ կյանքի օվկիանոսի մեջ մոլորված, առանց նավավարի մնացած հոգիները, Աբրահամի և Սառայի օրինակով, վերադառնում են աստվածային կամքի նավահանգիստը: 12. Եվ քանի որ մարդկությունը բաժանված է երկու սեռերի միջև, և բարու ու չարի միջև ընտրությունն առաջարկված է մեկին և մյուսին, Աստվածաշունչը, հանձին մեկի և մյուսի, մեզ առաջարկում է առաքինության օրինակներ, որպեսզի յուրաքանչյուրը նայելով նրան, ով համապատասխանում է իրեն, տղամարդը՝ Աբրահամին, իսկ կինը՝ Սառային, երկու սեռերն էլ համապատասխան օրինակներ ունենան առաքինության ճանապարհի վրա:

13. Ուրեմն մենք կբավարարվենք հիշեցնելով այս ականավոր անձնավորություններից մեկի կյանքը, որպեսզի փարոսի դեր կատարել տանք նրան և այդպիսով ցույց տանք, թե ինչպես հնարավոր է հոգին մերձեցնել առաքինության խաղաղ նավահանգստին[7], որտեղ նա այլևս ենթակա չի լինի կյանքի փոթորիկներին և մեղքի անդունդներում այլևս նավաբեկության վտանգներին չի ենթարկվի կրքերի իրարահաջորդ ալիքների ուժգին բախումից: Այս

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

## ՄՈՎՍԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*սուրբ հոգիների կյանքի պատմությունը գրի առնելու պատճառն այն չի՞ եղել միթե, որ հին ժամանակների արդար մարդկանց օրինակով առաջնորդվեն նրանց հաջորդները բարու ճանապարհի վրա*[8]*:*

*14. Բայց, կասի մեկը, եթե ես ո՛չ քաղդեացի եմ (ինչպես ոմանք ասում են, թե քաղդեացի էր Աբրահամը) և ո՛չ էլ եգիպտացի մի աղջկա կաթնակեր որդեգիրը (ինչպես մեզ սովորեցնում է Մովսեսի պատմությունը), եթե ես իմ ապրելու ձևի մեջ ընդհանուր ոչինչ չունեմ անցյալի այս մարդկանցից ոչ մեկի հետ, ինչպե՞ս կարող եմ նմանեցնել իմ կյանքը նրանցից մեկի կյանքին: Պատասխանենք այս հարցադրումին՝ ասելով, որ, ըստ մեր կարծիքի, ո՛չ առաքինությունը և ո՛չ էլ արատը քաղդեացիներ չեն, և որ ո՛չ Եգիպտոսում ապրելը և ո՛չ էլ Բաբելոնում բնակվելը որևէ մեկին չի հեռացնում առաքինի կյանքից: Միայն Հրեաստանում չէ, որ Աստված ճանաչվում է արդարների կողմից, և Աստծու Տունը միայն պատմական Սիոնը չէ: Բայց հարկավոր է, որ մենք ճարտար միտք և խորաթափանց հայացք ունենանք, որպեսզի կարողանանք պատմական տառից այն կողմ որոշել, թե ո՛ր քաղդեացիներից և ո՛ր եգիպտացիներից պետք է հեռանանք և բաբելոնյան ո՛ր գերությունից պետք է խույս տանք՝ հասնելու համար երանական կյանքին*[9]*: 15. Ինչ էլ որ լինի, վերցնենք Մովսեսին որպես օրինակ: Նախ արագ մի ակնարկով ցույց տանք նրա կյանքն այնպես, ինչպես Աստվածաշունչն է մեզ դրան ծանոթացնում: Այնուհետև կքննենք այդ կյանքի հոգևոր իմաստը, որը համապատասխանում է պատմությանը՝ դրա մեջ գտնելու համար առաքինի կյանքի մի կանոն: Եվ հենց դրանով էլ կսովորենք ճանաչել, թե ինչ բան է կատարյալ կյանքը մարդկանց համար:*



*16. Ուրեմն Մովսեսը, ասում է պատմությունը, ծնվում է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ բռնակալի օրենքը արգելում էր մեծացնել արու զավակներին: Նրա գեղեցկությունն արդեն գուշակել էր տալիս, թե նա մեծանալով որքան ավելի գեղեցիկ կլինի: Նրա ծնողները՝ տեսնելով, որ երեխան իր օրորոցից իսկ «այնքան գեղեցիկ» է, վարանում են վերացնել նրա կյանքը: 17. Բայց երբ բռնակալի սպառնալիքները սաստկանում են, փոխանակ նրան պարզապես Նեղոս գետը նետելու, դնում են մի արկղի մեջ, որի կցվածքները խայծղանով և ձյութով ծեփելով՝ այն գետեղում են գետի ջրերի վրա: Այսպես են գոնե պատմագրում նրանք, ովքեր մանրամասնորեն ուսումնասիրել են նրա մանկության շրջանին վերաբերող պատմությունը: Արկղը, առաջնորդվելով ինչ-որ զորությունից և քշվելով ջրի շարժումից, գնում-խրվում է գետեզրին գտնվող մի հողակույտի մեջ: Արդ, թագավորի դուստրը մի օր գալիս է զբոսնելու մարգագետնում, որը ծածկում էր գետափի այն մասը, որտեղ խրված մնում էր արկղը: Լսելով արկղից եկող նորածին մանկան լացի ձայնը՝ նա հայտնաբերում է Մովսեսին: Հենց որ տեսնում է նրան, գերվում է նրա գեղեցկությունից և նրան դարձնում իր որդեգիր զավակը: Բայց երեխան բնածին մի զգվանքով հրաժարվում էր սնվել օտար կնոջ կրծքից: Եվ ահա նա իր հարազատների մի հնարանքի շնորհիվ սնվում է մայրական կրծքից:*

*18. Երբ նա դուրս է գալիս մանկական տարիքից, իշխա-*

նական իր դաստիարակության ընթացքում թեև կրթված լինելով աշխարհիկ հեթանոսական մշակույթով[10], չի ընտրում սակայն այն ասպարեզը, որ պատվաբեր էր համարվում հեթանոսների մոտ, և երկար ժամանակ չի ընդունում որպես մայր ճանաչել նրան, ով իրականում իր մայրը չէր, բայց որդեգրել էր իրեն։ Նա վերադառնում է այն կնոջ մոտ, որ իր հարազատ մայրն էր, և միանում իր հայրենակիցներին։ Մի օր սպառնալից մի կռիվ է ծագում մի եգիպտացու և մի հրեայի միջև։ Մովսեսն, իր ազգակցի կողմը բռնելով, սպանում է օտարականին։ Մի ուրիշ օր տեսնելով, որ երկու հրեաներ ծեծկվում են իրար հետ, փորձում է խաղաղեցնել նրանց կռիվը՝ խրատելով նրանց (քանի որ եղբայրներ էին), որպեսզի իրենց վեճը հարթեն՝ ոչ թե հանձնվելով զայրույթին, այլ՝ բնությանը։

19. Մերժվելով այն հրեայից, որն անիրավ էր, Մովսեսը հիասթափվում է, և դա առիթ է դառնում նրա համար բարձրագույն մի փիլիսոփայության[11]։ Հեռանալով ամբոխի ընկերակցությունից՝ նա իր հետագա տարիներն անցկացնում է առանձնության մեջ՝ դառնալով մի օտարականի փեսան։ Սա ճարպիկ մի մարդ էր՝ ընդունակ որոշելու մարդկանց արժանիքները և ճիշտ դատելու նրանց բարքերն ու սովորությունները։ Բավական է լինում իր համար այն միակ պատահարը՝ հովիվների վրա նրա հարձակվելն ու նրանց քշելը, որպեսզի բացահայտի երիտասարդ Մովսեսի արժեքը։ Արդարև, նա իսկույն անդրադառնում է, որ Մովսեսն իր սեփական շահից դրդված չէ, որ պաշտպանել էր արդարությունը, այլ նա գտնում էր, որ արդարությունն ինքնին արժանի է սիրվելու ու գնահատվելու, և ահա թե ինչու է նա վրեժ առել հովիվներից այն դեպքում, երբ նրանք ոչ մի անիրավություն չէին արել իրեն։ Հետևաբար, գնահատելով այս առթիվ երիտասարդին և նկատի ունե-



նալով, որ նրա առաքինությունը, հակառակ նրա բացահայտ աղքատությանը, ավելի մեծ գին ունի, քան բոլոր հարստությունները, նրան կնության է տալիս իր աղջկան՝ թույլ տալով, որ նա ապրի կյանքն այնպես, ինչպես հաճելի է իրեն։ Այսպիսով, Մովսեսն ապրում է սարերի առանձնության մեջ, հեռու քաղաքների ժխորից, անապատում մեկուսացած՝ պահելով ոչխարների հոտերը։

20. Պատմությունն ասում է մեզ, որ որոշ ժամանակ այսպիսի կյանքով ապրելուց հետո նա տեսնում է աստվածային սարսափազդու մի տեսիլք։ Օրը ցերեկով արեգակի լույսից ավելի փայլուն մի լույս շլացնում է նրա աչքերը։ Այս տարօրինակ տեսիլքից զարմացած՝ նա իր աչքերը բարձրացնում է դեպի լեռը և տեսնում մի մորենի, որի միջից լույսը ժայթքում էր բոցի նման։ Մորենու ճյուղերը բոցում թարմ էին մնում, ինչպես ցողի մեջ։ Նա ասում է ինքն իրեն. «Գնանք տեսնենք այս շքեղ տեսարանը»։ Բայց հազիվ էր այս խոսքն ասել, երբ հրաշագործ լույսը ոչ միայն այլևս չի կսկծեցնում իր աչքերը, այլև, ինչ որ ավելի զարմանալի է, լույսի ճառագայթներն սկսում են փայլել նաև նրա ականջների վրա։ Արդարև, լույսի գեղեցկությունը ցրվում էր այս ու այն կողմ՝ լուսավորելով նրա աչքերը ճառագայթների ցոլացումով և պայծառացնում նրա ականջները՝ լուսավորելով միտքը անեղծ ուսուցումներով։ Լույսի ձայնը[12] արգելում է Մովսեսին, որ նա հնամաշ կոշիկներից ծանրացած մարմնով մոտենա լեռանը։ Բայց «երբ նա իր ոտքերից հանում է կոշիկները», կարողանում է դիպչել հողին, որը գտնվում էր աստվածային լույսի շրջանակի մեջ։

21. Դրանից հետո (չեմ ուզում երկար կանգ առնել զուտ պատմական հարցերի վրա, որպեսզի չհեռանամ իմ նյութից) զորացած աստվածահայտնության տեսիլքով՝ նա

*հրաման է ստանում՝ ազատելու իր ժողովրդին եգիպտացիների գերությունից: Եվ որպեսզի լիովին տեղյակ լինի այն կարողությանը, որ վստահվում է իրեն Աստծու կողմից, վերջինիս հրամանով նա այն փորձարկում է իր տրամադրության տակ գտնվող մի առարկայով: Փորձարկումը կայանում է հետևյալում. այն գավազանը, որ նա, ձեռքից բաց թողնելով, գցում է գետին, կենդանանում է և դառնում օձ. ապա իր ձեռքով այն վերցնում է գետնից, և օձը վերստին դառնում է այն, ինչ որ էր իր կերպարանափոխությունից առաջ: Բացի դրանից, երբ նա իր ձեռքը դուրս է հանում ծոցից, ձեռքի մաշկը դառնում է ձյունի նման սպիտակ. ապա երբ նորից դնում է ծոցը, այն վերստանում է իր բնական տեսքը:*

*22. Մովսեսն իջնում է Եգիպտոս՝ հետը տանելով օտարազգի իր կնոջն ու իր երեխաներին, որոնք ծնվել էին նրանից: Պատմությունը հիշատակում է, որ «նա հանդիպում է մի հրեշտակի», որը նրան վախեցնում է մահվան սպառնալիքով: Նրա կինը հանգստացնում է հրեշտակին՝ հեղելով իր երեխայի թլփատության արյունը: Այնուհետև Մովսեսն հանդիպում է Ահարոնին, որին Աստված ինքն էր մղել, որ գա նրան ընդառաջ:*

*23. Այն ժամանակ նրանք երկուսով հավաքում են ժողովրդին և հորդորում թոթափել գերության շղթան, որը ճնշում էր նրանց տաժանագին աշխատանքների բեռան տակ: Այս մասին մի խոսակցություն է տեղի ունենում հենց իր՝ բռնակալի հետ: Բայց այդ խոսակցությունը ավելացնում է միայն վերջինիս զայրույթը իսրայելացիների դեմ: Աղյուսաշինությունը դառնում է առավել ծանր մի աշխատանք, երբ մի հրաման գերեվարված իսրայելացիներին ստիպում է կավի հետ տարվող բռնի աշխատանքի վրա ավելացնել նաև հարդի և խոզանի հայթայթումը:*



*24. Այնուհետև փարավոնը (այդ էր եգիպտացիների բռնակալի անունը) փորձում է Մովսեսի և Ահարոնի կատարած հրաշքներին հակադրել իր մոգերի կեղծ կախարդությունները: Եգիպտացիների աչքերի առաջ Մովսեսի գավազանը նորից օձի փոխվելուց հետո մի պահ թվում է, թե մոգերի գավազանների միջոցով կատարված կախարդությունը նույն հրաշքն է գործում: Բայց արդյունքը երևան է հանում նրանց խաբեությունը: Արդարև, Մովսեսի գավազանի կերպարանափոխությամբ առաջացած օձը հոշոտում է մոգերի գավազանները, այսինքն՝ նրանց կեղծ օձերը: Այսպիսով, հայտնի է դառնում, որ մոգերի գավազանները ոչ մի ուժ չունեին ո՛չ պաշտպանվելու և ո՛չ էլ ապրելու համար, այլ միայն ցույց էին տալիս մոգերի խաբեությունը որպես պատրանք դյուրախաբ մարդկանց աչքերին:*

*25. Այն ժամանակ Մովսեսը, տեսնելով, որ ամբողջ ժողովուրդը մեղսակից է իր ղեկավարի վատ ծրագրերին, ընդհանուր մի հարված է հասցնում եգիպտացի ազգին՝ ոչ ոքի չբացառելով չարիքների փորձությունից: Եգիպտացիներին տրված հարվածի ժամանակ Մովսեսի հրամաններին ենթակա բանակի նման, նրա հետ գործակցելու համար, շարժման մեջ են մտնում տիեզերքի բոլոր տարրերը՝ հողը, ջուրը, օդը և կրակը՝ փոխելով իրենց հատկությունները՝ ըստ մարդկանց տրամադրությունների: Արդարև, նույն երևույթը տեղի ունենալով միևնույն ժամանակում և միևնույն տեղում՝ մեղավորը պատժվում էր, իսկ նա, ով անմասն էր չարագործությունից, մնում էր անվնաս:*

*26. Այսպես է, որ Եգիպտոսում գոյություն ունեցող ամբողջ ջուրը փաստորեն Մովսեսի հրամանով փոխվում է «արյան», այնպես որ երբ ջուրը թանձրանալով լերդանում է, նրա մեջ եղած ձկները սատկում են: Բայց երբ եբրայե-*

*ցիները խմում էին, արյունը նորից դառնում էր ջուր: Մոգերը եբրայեցիների մոտ եղած ջուրը առիթ էին ծառայեցնում՝ ցույց տալու համար, թե իրենք իբր ավելի ճարտարությամբ են ջուրը վերածում արյան: 27. Նույն բանն է պատահում նաև գորտերի հետ, որոնք սկսում են վխտալ Եգիպտոսում: Գորտազգիների այսպիսի առատություն և արագ բազմացում չէր կարող վերագրվել բնությանը, այլ տվյալ պահին գորտերի ցեղին ուղղված հրամանն է, որ պատճառ է դառնում այս տեսակ կենդանիների ի հայտ գալուն: Եգիպտոսն ամբողջ լցվում է այս կործանարար կենդանիներով, որոնք մտնում էին տներից ներս և ամեն ինչ ավերում. սակայն եբրայեցիների կյանքը զերծ է մնում այս պատուհասից:*

*28. Նույն ձևով դարձյալ եգիպտացիների համար մթնոլորտը դադարում է ցերեկն ու գիշերը իրարից տարբերելուց. նրանք մնում էին մշտական խավարի մեջ: Եբրայեցիների համար, ընդհակառակը, ոչինչ չէր փոխվել իրերի բնականոն ընթացքից: Նրանք զերծ էին մնում մնացած ամեն ինչից՝ կարկուտից, կրակից, մժեղներից, ուռուցքներից, մորեխների բազմությունից: Այս բաներից յուրաքանչյուրը, իր բնությանը համապատասխան, ներգործում էր եգիպտացիների վրա: Եբրայեցիները իրենց հարևանների պատմածներից էին իմանում այս պատահարների մասին, բայց իրենք հարձակման ոչ մի փորձ չէին անում: Այնուհետև վրա է հասնում «անդրանիկների» մահը, որը հայտնապես ցույց է տալիս եգիպտացիների և եբրայեցիների միջև եղած տարբերությունը. ոմանք դառնագին հառաչանքներով ողբում էին իրենց ամենասիրելիների կորուստը, մյուսները մնում էին բացարձակապես հանգիստ և անխռով: Այս վերջինների փրկությունը երաշխավորվում է արյան օծումով, բոլոր դռների յուրաքանչյուր կողմի դրանդիները, ինչպես նաև դրանց վերևում գտնվող բարավորը՝ օծված լինելով արյամբ:*

*29. Դրանից հետո, մինչ եգիպտացիներն ընկճված էին իրենց անդրանիկ զավակներին պատահած դժբախտությունից և յուրաքանչյուրն առանձին ու բոլորը միասին ողբում էին իրենց գլխին եկած այս փորձանքների համար, Մովսեսն առաջնորդում է իսրայելացիների ելքը Եգիպտոսից՝ նախօրոք զգուշացրած լինելով նրանց, որ իրենց հետ տանեն այն բոլոր հարստությունները, որ փոխ էին առել եգիպտացիներից: Եգիպտոսից դուրս երբ նրանք երեք օրվա ճանապարհ էին գնացել, փարավոնը, ասում է մեզ պատմությունը, սկսում է ափսոսալ, որ իսրայելացիները չմնացին իր ծառայության տակ: Պատերազմի դուրս բերելով իր բոլոր հպատակներին՝ նա իր հեծելազորով սկսում է հետապնդել հրեա ժողովրդին: Սրանք, տեսնելով իրենց վրա արձակված ձիերն ու զինված եգիպտացիներին և իրենք էլ չունենալով պատերազմելու փորձ, այլև վարժված չլինելով այսպիսի տեսարանների, հանկարծական մի սարսափից բռնված, ընդվզում են Մովսեսի դեմ: Պատմությունն այստեղ շատ տարօրինակ մի հիշատակություն է անում Մովսեսի մասին. ասում է, որ Մովսեսն այն ժամանակ կրկնապատկելով իր եռանդը՝ մի կողմից իր ձայնով և իր խոսքով հորդորում էր իսրայելացիներին և կոչ անում չկորցնել իրենց հույսը, սակայն մյուս կողմից՝ ներքուստ, իր սրտում աղաչում էր Աստծուն նրանց համար, որոնք անձկության մեջ էին, և ինքն էլ Ամենաբարձրյալի խորհրդով տեղյակ էր դառնում, թե ինչպես կարող է խուսափել վտանգից: Աստված ինքը, ասում է պատմությունը, ականջ էր դնում նրա անձայն աղաղակին[13]:*

*30. Մի ամպ առաջնորդում էր ժողովրդին աստվածային զորության ազդեցությամբ: Դա սովորական բնույթի մի*

ամպ չէր: Արդարև, դա կազմված չէր այն գոլորշիներից կամ արտաթորումներից, որոնք առաջանում են գոլորշիների միջոցով օդի թանձրացումից՝ նրանց խոնավության և քամու միջոցով նրա խտացման պատճառով[14], այլ դա շատ ավելի մեծ բան էր և վեր էր մարդկային իմացությունից[15]: Այս ամպը (Աստվածաշունչն է վկայում այդ մասին) ուներ հրաշալի մի հատկություն. երբ արևի ճառագայթների շողը դառնում էր կիզիչ, այն կազմում էր մի տեսակ հրարգել պահպանակ, որ ստվեր էր գցում ներքևում գտնվողների վրա՝ թեթև մի ցողով զովացնելով հրաշունչ օդը, իսկ գիշերը դառնում էր բոցավառ կրակ և իր սեփական շողքով, ինչպես մի ջահ, առաջնորդում իսրայելացիներին մինչև առավոտ:

31. Մովսեսն ինքը, աչքերը հառած ամպին, ժողովրդին սովորեցնում է հետևել այդ տեսիլքին: Այսպես, առաջնորդվելով ամպից, նրանք հասնում են Կարմիր ծով, մինչև այն տեղը, որտեղից պետք է անցնեին ծովը: Եգիպտացիներն իրենց բոլոր զորքերով հետևի կողմից շրջապատել էին ժողովրդին: Իրենց սարսափելի թշնամիներից փախչելու ոչ մի միջոց չէր մնացել իսրայելացիներին ոչ մի կողմից՝ բռնված լինելով եգիպտացիների և ծովի միջև: Ահա այդ ժամանակ է, որ Մովսեսը, քաջալերված Աստծու զորությունից, կատարում է իր ամենաանհավատալի գործողությունը: Մոտեցած լինելով ծովափին՝ նա իր գավազանով հարվածում է ծովին, և ահա նույն վայրկյանին ճեղքվում է ծովը: Եվ ինչպես որ ապակու կտորվածքը, մի ծայրից տարածվելով, հասնում է մինչև մյուս ծայրը, այնպես էլ ծովը՝ գավազանի հարվածի տակ ճեղքված լինելով մի ծայրից, նրա ջրերի բաժանումը տարածվում է մինչև հանդիպակաց ափը: Մովսեսը, իջած լինելով ներքև, այնտեղ, որտեղ բաժանված էր ծովը, իր ամբողջ ժողովրդի հետ



գտնվում էր ծովի հատակին՝ մարմինը չոր և պայծառ արևի տակ: Նրանք չոր ոտքերով կտրում-անցնում են հատակում գտնվող անդունդները առանց վախենալու ջրի հաստաբեստ պատերից, որոնք հանկարծակի ցցվում էին իրենց երկու կողմերում՝ ծովը աջ և ձախ կողմից սառած լինելով ինչպես մի պարիսպ:

32. Բայց երբ փարավոնը ջրերի մեջ նոր բացված ճանապարհով եգիպտացիների հետ մտնում է ծովը, ջրերը նորից միանում են իրար, և ծովը, ինքն իր վրա ընկրկելով ու իր նախկին ձևն ստանալով, մարդկանց աչքերին նորից պարզում է իր ջրերի միակցված հարթ մակերեսը: Հանդիպակաց ափին իսրայելացիներն արդեն հանգստանում էին այն մեծ հոգնությունից հետո, որ ծովը կտրել-անցնելը պահանջել էր իրենցից: Այն ժամանակ, երբ նրանք սկսում են երգել իրենց հաղթանակի օրհներգն առ Աստված, որը կանգնեցրել էր իրենց համար անարյուն հաղթանակի մի հուշակոթող, բոլոր եգիպտացիները իրենց զինական ամբողջ հանդերձանքով՝ ձիերով, զենքերով ու ձիակառքերով, ոչնչացել էին ջրերի մեջ:

33. Դրանից հետո Մովսեսը շարունակում է առաջանալ: Բայց երեք օր քայլելուց հետո առանց ջուր գտնելու, նա մտատանջության մեջ է ընկնում՝ չիմանալով ինչպես հագեցնել բազմության ծարավը: Նրանք ի վերջո գտնում են ծանծաղ ջրի մի շերտ, որի մոտ բանակ են դնում: Բայց դա ծովի ջուր էր և ավելի դառնահամ, քան ծովի ջուրը: Ուրեմն նրանք նստած էին այդ ջրի մոտ՝ ջուր խմելու ցանկությունից սաստիկ տանջվելով: Այդ ժամանակ է, որ Մովսեսը, Աստծու խորհրդին հետևելով, գետնից վերցնում է մի փայտ, որ այդ տեղում էր գտնվում, և այն գցում ջուրը: Իսկույն ջուրը դառնում է քաղցր՝ փայտը իրեն հատուկ զորությամբ աղի ջուրը վերածելով քաղցրահամ ջրի:

34. Այն ժամանակ ամպը շարժվում է դեպի առաջ: Իսրայելացիներն իրենք էլ, հետևելով նրա շարժմանը, սկսում են նորից առաջանալ: Նրանք միշտ այդպես էին անում. դադարում էին քայլելուց այնտեղ, որտեղ կանգ էր առնում ամպը՝ հանգստի ազդանշան տալով իրենց, և վերսկսում էին քայլել, երբ ամպը կրկին ճանապարհ էր ընկնում իրենց գլխավերևում: Հետևելով առաջնորդող ամպին՝ նրանք հասնում են քաղցրահամ ջրով ոռոգված մի տեղ: Տասներկու աղբյուրներից առատ ջուր էր տարածվում ամեն կողմ, և արմավենիների մի փոքրիկ անտառակ ստվեր էր գցում այդ տեղանքի վրա: Արմավենիները յոթանասուն հատ էին, բայց չնայած իրենց փոքր քանակությանը, մեծ տպավորություն էին թողնում դիտողների վրա իրենց բացառիկ գեղեցկության և բարձրության պատճառով[16]:

35. Բայց նրանց առաջնորդող ամպը չի թողնում, որ նրանք երկար ժամանակ մնան այդ վայրում, և նրանց առաջնորդում է մի այլ տեղ: Դա կիզիչ ավազով ծածկված մի երաշտ անապատ էր. ջրի մի կաթիլ անգամ չկար այն ոռոգելու համար: Ծարավը նորից էր ճնշել ժողովրդին: Բայց Մովսեսն իր գավազանով հարվածում է բարձունքի վրա գտնվող մի ժայռի, և ժայռից բխում է քաղցրահամ և հաճելի ջուր՝ այնքան առատ, որ բավարարում է ամբողջ բանակի կարիքները: 36. Սննդի այն պաշարները, որ նրանք Եգիպտոսից բերել էին իրենց հետ, սպառված լինելով, այս անգամ ժողովրդին տանջում էր քաղցը: Այստեղ է դարձյալ, որ տեղի է ունենում ամենաանհավատալի հրաշքը: Արդարև, ինչպես սովորաբար, հողը չէ, որ նրանց տալիս է սնունդ, այլ այդ սնունդն իջնում է երկնքից ցողի նման: Հիրավի, առավոտյան դեմ ցողը ընկնում էր նրանց վրա, և այդ ցողը դառնում էր սնունդ նրանց համար, ովքեր այն հավաքում էին: Ինչ որ ընկնում էր երկնքից, հեղուկ չէր,



ինչպիսին լինում է սովորական ցողը, այլ ջրի կաթիլները փոխարինվում էին մանր-մանր հատիկներով, որոնք սառույցի տեսք ունեին և գնդաձև էին, ինչպես «գինձի» հատիկը: Նրանց համը մեղրի նման քաղցր էր:

37. Այս հրաշքին ավելանում էր մեկ ուրիշը: Բոլորը դուրս էին գալիս հավաքելու՝ լինելով բնականաբար տարբեր տարիքի և տարբեր ուժի տեր մարդիկ: Սակայն թե՛ ոմանք և թե՛ մյուսները, համաձայն իրենց ուժի տարբերության, բերում էին ավելի կամ պակաս, բայց բերքը բաշխվում էր ըստ կարիքի, այնպես որ ամենաուժեղը ավելի չէր ստանում, իսկ ամենաթույլը չէր զրկվում իր բաժնից: Պատմությունը հիշատակում է նաև մեկ ուրիշ հրաշագործություն. յուրաքանչյուր ոք հավաքում էր այնքան, որքան պետք էր այդ օրվա համար և ոչինչ մի կողմ չէր դնում հետագայի համար, և եթե մեկը, խնայողությամբ, իր օրական բաժնից վերցնում և պահում էր ապագայի համար, այն դառնում էր անօգտագործելի՝ կերպարանափոխվելով մակաբույծ «մանրաճճվի»:

38. Վերջապես մի վերջին զարմանալի կետ է մնում այս սննդի պատմության մեջ: Շաբաթվա օրերից մեկը, խորհրդավոր մի պատճառով, նշվում էր որպես հանգստի օր: Արդ, նախընթաց օրը, մինչ երկնքից ընկածը նույն քանակությունն էր ունենում, ինչ որ նախորդ օրերինը, և բերքը հավաքողներն էլ նույն չափի աշխատանք էին կատարում, սակայն հավաքված բերքը սովորական չափի կրկնապատիկն էր լինում. և սա նրա համար, որպեսզի սնվելու անհրաժեշտության պատճառով նրանք ոչ մի պատճառ չունենային չկատարելու հանգստի օրենքը: Աստվածային զորությունը հատկապես ի հայտ է գալիս այս օրը (քանի որ մյուս օրերին մի կողմ դրվածը փչանում էր), երբ ժողովուրդը նախապատրաստվում էր շաբաթին (սա հանգստի մյուս

օրվա անունն է), որովհետև այն ամենը, ինչ ի պահ էր դրվում այդ օրը, մնում էր անաղարտ և նույնքան թարմ, որքան այն, ինչ նոր էր հավաքվել:

39. Դրանից հետո մի պատերազմ է սկսվում նրանց համար օտար մի ազգի դեմ: Աստվածաշնչի բնագիրը ամաղեկացիներ է կոչում այն մարդկանց, որոնք համախմբվում են նրանց դեմ: Առաջին անգամ լինելով՝ իսրայելացիները զինվում են պատերազմելու համար: Ոչ թե ամբողջ բանակն է ոտքի կանգնում կռվելու, այլ պատերազմի մեջ են մտնում միայն խնամքով ընտրված մարդիկ՝ զորքերի ընտրանին: Այս պատերազմում Մովսեսը փորձարկում է մի նոր ռազմավարություն: Հեսուն, որը Մովսեսից հետո առաջնորդում էր ժողովրդին, բանակը շարժում էր ամաղեկացիների դեմ: Մովսեսը, պատերազմից դուրս, քաշվել էր մի բլրի գագաթին և այնտեղից, ինչպես մի դիտանոցից, նայում էր դեպի երկինք: Նրա երկու կողմում կանգնել էին նրա հարազատներից երկուսը: 40. Արդ, ահա այն հրաշքը, որ պատմությունը հիշատակում է մեզ, թե տեղի է ունեցել այն ժամանակ: Եթե Մովսեսը «ձեռքերը բարձրացներ» դեպի երկինք, ապա յուրայինները առավելության կհասնեին թշնամիների նկատմամբ. եթե ձեռքերն իջեցներ, ապա բանակը տեղի կտար հակառակորդի գրոհի առաջ: Հասկանալով դա՝ Մովսեսի աջ և ձախ կողմում գտնվողները, երբ տեսնում էին, թե նրա ձեռքերը հոգնությունից ծանրանում են, և դժվար է լինում դրանք վեր պահելը ինչ-որ անհայտ մի պատճառով, ապա մտնում էին նրա թևերի տակ՝ դրանք վեր պահելու համար: Եվ որովհետև իրենք չափազանց տկար էին, որպեսզի կարողանան Մովսեսին ուղիղ պահել, նրան նստեցնում են մի քարի վրա: Հենց իրենք էին պահում Մովսեսին՝ նրա ձեռքերը դեպի երկինք բարձրացրած: Այդ օրվանից ամաղեկացիներն ընկան իսրայելացիների գերիշխանության տակ:



41. Այնքան ժամանակ, որ ժողովրդին առաջնորդող ամպը մնում էր նույն տեղում, ժողովուրդը չէր կարող տեղափոխվել, քանի որ առաջնորդող չուներ տեղափոխվելու համար: Կարևորն այն էր, որ նրանք առանց հատուկ ջանք թափելու իրենց տրամադրության տակ ունեին առատ ուտելիք. օդը վերևից նրանց համար անձրևի նման թափում էր պատրաստի հաց, իսկ ժայռը ներքևից տալիս էր առատ խմելու ջուր: Ամպը նվազեցնում էր բաց օդում մնալու անպատեհությունները. ցերեկը նա հովանի էր լինում շոգի դեմ, իսկ գիշերը ցրում էր խավարը՝ կրակի նման փայլ արձակելով, այնպես որ նրանց այս կեցությունը անապատում, լեռան ստորոտին, որտեղ հաստատված էր նրանց բանակատեղին, առանձին ոչ մի դժվարություն չէր ներկայացնում:

42. Հենց այս ժամանակ է, որ Մովսեսը նրանց համար դառնում է առավել խորհրդավոր մի ուսուցման[17] առաջնորդը՝ աստվածային զորությունն ինքը թե՛ ժողովրդին և թե՛ միաժամանակ նրա առաջնորդին հաղորդակից դարձնելով այդ խորհրդին այնպիսի հրաշագործություններով, որ հնարավոր չէ արտահայտել մարդկային լեզվով: Կրոնական այդ սրբազան խորհրդի ուսուցումը կատարվում է հետևյալ ձևով. ժողովրդին նախ զգուշացնում են թե՛ մարմնով և թե՛ հոգով հեռու մնալ ամեն պղծությունից և մաքրվել հաճախակի լվացումներով, մասնավորապես հրաժարվել որոշ ժամանակ ամուսնական հարաբերությունից: Այսպես, մաքրվելով զգայական և մարմնական ամեն տրամադրվածությունից, ժողովուրդը, ձերբազատված կրքերից, կմերձենար լեռանը՝ հաղորդվելու համար նրա խորհրդին: Այս լեռան անունը «Սինայի» էր: Իր այս հանդամանքով նա մատչելի էր դառնում միայն բանականությամբ օժտ-

ված էակներին և նրանց մեջ՝ այն մարդկանց ու սրանց մեջ էլ դարձյալ նրանց, ովքեր մաքրված էին ամեն գարշահոտությունից: Խիստ հսկողություն էր սահմանված, որ բանականությունից զուրկ ոչ մի էակ չբարձրանար այս լեռան վրա: Եթե այդպիսի մի բան պատահում էր, ապա ժողովուրդը քարկոծում էր բանական բնությունից զուրկ ամեն էակի, որ համարձակվում էր երևալ լեռան մոտերքում:

43. Դրանից հետո թափանցիկ մթնոլորտը, որը մինչ այդ լուսավոր էր, մռայլվում և դառնում է խավարամած, այնպես որ լեռը մնում է անտեսանելի՝ չորս կողմից ծածկված լինելով թանձր խավարով: Խավարի մեջ երևում էր ուժեղ մի բոցավառություն՝ տեսարանը դարձնելով զարհուրելի: Կրակը լափլիզում էր լեռան շուրջբոլորը, այնպես որ ամբողջ բնանկարը, շրջանակաձև այդ կրակի պատճառով, լցված էր ծխով: Մովսեսը ժողովրդին առաջնորդում էր դեպի լեռան բարձունքը: Այս տեսարանի առջև նույնիսկ նա զերծ չէր երկյուղից: Նրա հոգին ահաբեկված էր, և մարմինը դողում էր զարհուրանքից: Նրա հոգեկան հուզումը չէր վրիպում իսրայելացիների ուշադրությունից, և ինքն էլ ընդունում էր, որ սարսափում է իր տեսածից, և մարմինը դողում է:

44. Այս տեսարանը միայն հոգին չէ որ լցնում էր սարսափով՝ թափանցելով նրա աչքերից ներս, այլ վախը տարածվում էր նաև նրա ականջների մեջ: Արդարև, վերևից եկող ձայնի ճայթյունը ահավոր կերպով տարածվում էր ամբողջ շրջավայրի վրա: Դրա առաջին հարվածն արդեն տաժանելի էր և անհանդուրժելի ամեն ականջի համար: Դրա հնչականությունը նման էր շեփորի հնչյունին, բայց իր ահարկու ուժգնությամբ գերազանցում էր գոյություն ունեցող այդ կարգի ամեն հնչյուն: Այդ ձայնը, մոտենալով, դառնում էր էլ ավելի ահազդեցիկ՝ ավելացնելով իր



հզորությունը հետզհետե ավելի սարսափելի ձևով[18]: Այդ ձայնը հոդավորված էր, որովհետև Աստծու զորությունը հոդավորում էր խոսքը առանց հնչարտաբերական օրգանների: Այդ խոսքը զուր չէր արտասանվում, այլ այն հրապարակում էր աստվածային հրամանները: Ձայնը աստիճանաբար ավելացնում էր իր հզորությունը, և շեփորը գերազանցում էր ինքն իրեն՝ հաջորդող հնչյունները միշտ գերազանցություն ունենալով նախորդ հնչյունների վրա:

45. Ամբողջ ժողովուրդը անկարող էր տանելու, ինչ որ տեսնում և լսում էր: Ահա թե ինչու նրանք միաբանաբար խնդրում են Մովսեսին, որ լինի Օրենքի միջնորդ՝ հավաստիացնելով նրան, որ այն ամենը, ինչ նա, ըստ վերևից իր ստացած ուսուցման, կհրամայի անել, իրենք կասկածի չեն ենթարկի բնավ, որ դա կլինի միայն և միայն Աստծու հրամանը: Ուրեմն բոլորն իջնում են լեռան ստորոտը, իսկ Մովսեսը մնում է մենակ՝ ներքուստ ցույց տալով հակառակն այն բանի, ինչ սպասելի էր: Արդարև, մինչ ուրիշները ավելի լավ են դիմակայում վտանգին, երբ այն բաժանում են մեկ ուրիշի հետ, նա իրեն ուղեկցողներից մեկուսանալուց հետո ձեռք է բերում ավելի ինքնավստահություն՝ ցույց տալով այդպիսով, որ ինքն իր անձի համար չէ, որ զգացել էր այն վախը, որից բռնվել էր սկզբում, այլ դա զգացել էր՝ միայն կարեկցելով նրանց, ովքեր ընկճված էին դրանից:

46. Այսպես, ամփոփվելով ինքն իր մեջ և ձերբազատվելով ամբոխի երկչոտությունից, ինչպես մի ծանր բանից, նա դիմակայում է խավարին և մխրճվում անտեսանելի իրականությունների մեջ՝ ծածկվելով տեսողությունից: Արդարև, մուտք գործելով աստվածային խորհրդի սրբարանը՝ նա շփման մեջ է մտնում Անտեսանելիի հետ՝ անհետանալով տեսողությունից և այդպիսով, կարծում եմ, ուսուցանելով բոլորին, որ նա, ով ուզում է մոտենալ Աստծուն,

պետք է բաժանվի տեսանելի ամեն ինչից և, մտքով բարձրանալով դեպի անտեսանելին և անհասկանալին, ինչպես դեպի լեռան գագաթը, պետք է հավատա, որ Աստված բնակվում է այնտեղ, ուր այլևս չի կարող հասնել մարդկային իմացությունը:

47. Հասնելով այնտեղ՝ նա ստանում է աստվածային պատվիրանները: Դրանք վերաբերում էին առաքինության առնչվող մի ուսուցման. առաջինը մեծարանքն էր աստվածային բնության հանդեպ և նրա մասին ճիշտ մտածում ունենալը, այսինքն՝ մտածել, թե աստվածային բնությունը անդրանցնում է ճանաչելի իմացության վերաբերյալ ամեն հասկացություն և ամեն պատկերացում՝ լինելով տարբեր ամեն ինչից, որ ճանաչելի է: Արդարև, նա ստանում է հրաման, որ Աստծու մասին իր ունեցած մտածումների մեջ պետք չէ տեղ տա մտքով ըմբռնելի ոչ մի բանի և իր մտապատկերներից ճանաչելի ոչինչ պետք չէ նմանեցնի այն բնությանը, որն անդրանցնում է Տիեզերքը, այլ պետք է հավատա Նրա գոյությանը և, որպես անմատչելի բան, առանց որոնելու պետք է թողնի այն ամենը, ինչ վերաբերում է որակին, քանակին, եղանակին, ձևին և ծագումին: 48. Սրան Աստծու խոսքն ավելացնում է այն ամենը, ինչ վերաբերում է բարոյական գործունեությանը՝ դրա ուսուցումը հաղորդելով ընդհանուր և մասնավոր օրենքներով: Արդարև, ընդհանուր է այն օրենքը, որը դատապարտում է ամեն անարդարություն՝ պատվիրելով սիրել իր ազգակցին: Դա ապահովվելուց հետո բնական ճանապարհով դրան հետևում է մյուս օրենքը, ըստ որի՝ ոչ մի չար բան չպետք է անել իր մերձավորին: Մասնավոր օրենքներից պետք է նշել հարգանքը ծնողների հանդեպ. դրանց մեջ պետք է հաշվի առնել նաև դատապարտելի հանցանքների ցանկը:



49. Մի անգամ որ միտքը մաքրվում է այս օրենքներով, հասու է դառնում ավելի կատարյալ մի ծանոթության. Աստծու զորությունը նրան ցույց է տալիս «մի տապանակի» ամբողջությունը: Այս տապանակը մի սրբարան էր՝ գեղեցկացած անբացատրելի այլազանություն ունեցող առարկաներով. նախագավիթներ, սյուներ, օթոցներ, սեղան, ջահակալներ, աշտանակներ, անուշահոտությունների խորան, ողջակեզների խորան, քավության սեղան՝ չհաշված սրբարանի ներքնամասում գտնվող անմատչելի Սրբություն սրբոցը: Որպեսզի այս բոլոր բաները, դրանց գեղեցկությունը, դասավորությունն ու հարդարանքը հիշողությունից չջնջվեն բնավ, և այս հրաշալիքը ցույց տրվի ներքևում գտնվողներին, նրան խորհուրդ է տրվում դրանք չնկարել պարզապես, այլ աննյութ այս ստեղծագործությունն ընդօրինակել երկրային մի շինությամբ՝ օգտագործելով երկրի վրա գտնվող ամենաթանկագին և ամենագեղեցիկ շինանյութերը[19]: Սրանց մեջ ոսկին, որ ամենից առատն էր, ծածկում էր սյուների բոլորակաձև ամբողջ մակերեսը: Ոսկու հետ գործածվում էր նաև արծաթը՝ զարդարելու համար սյուների խոյակներն ու խարիսխները, որպեսզի գույների տարբերությունը ավելի ցայտուն դարձնի ոսկու փայլը դրանց երկու ծայրերում: Կային նաև առանձին տեղեր, ուր բրոնզը համարվում էր օգտակար, քանի որ արծաթե փոքր սյուների համար այն ծառայում էր որպես խոյակ և խարիսխ:

50. Օթոցներն ու վարագույրները, ինչպես նաև տապանակի արտաքին երեսը և սյուների վերևից դեպի ներքև ձգված շղարշը հյուսվածքի մի գլուխգործոց էին՝ յուրաքանչյուրը հորինված լինելով համապատասխան նյութով: Կերպասների գույնը դրանցից մի քանիսի համար մանուշակագույնն էր, ծիրանին, փայլարձակ բոսորագույնը և

*բնական, անսեթևեթ տեսք ունեցող մետաքսի գույնը: Մյուսների համար որպես հյուսվածեղեն օգտագործված էր վուշը: Որոշ տեղերում գետեղված էին մորթիներ՝ զարդարելու համար այս շինությունը:*

*51. Մովսեսը լեռից իջնելուց հետո այս բոլոր բաները իրագործել պիտի տար արհեստավորներին՝ ըստ այն տապանակի օրինակի, որ ցույց էր տրվել իրեն: Բայց առայժմ մարդու ձեռքով չկառուցված այս տաճարից ներս մտնելով՝ նա ստանում է նախնական պատվերներ այն զարդարանքների վերաբերյալ, որոնցով պետք է փայլի քահանան, երբ առաջանալով մտնի սրբարան. այս մասին Աստծու խոսքը Մովսեսին տալիս է մանրամասն ցուցումներ, որոնք վերաբերում էին քահանայի ներքին և արտաքին զգեստներին:*

*52. Զգեստի մասերն սկսում են ոչ թե ծածկված բաներից, այլ՝ տեսանելիներից: Նախ «ուսանոցները»՝ ներկված այլազան գույներով, ինչպիսին էր շղարշը, բայց որոնք հավելյալ ունեն ոսկե թել: Ուսանոցները երկու կողմերից իրար են կապվում գմրուխտներով ընդելուզված ճարմանդներով: Ակնաքարերի գեղեցկությունը դրսևորվում էր մի կողմից բնական փայլով, իսկ մյուս կողմից՝ իրենց արձակած խաժագույն ճառագայթներով, բայց արվեստը դրան ավելացնում էր սքանչելի խորաքանդակներ, ոչ այն արվեստը, որով քանդակվում են ինչ-որ կուռքի դրոշմը կրող փորագիր պատկերներ: Սրանց գեղեցկությունը կայանում է ակնաքարերի վրա նրբորեն փորագրված նահապետների անունների մեջ՝ վեց անուն յուրաքանչյուր ակնաքարի վրա: 53. Ուսանոցների վրա՝ առջևի կողմից, ամրացված էին կապիճներ, և ոլորուն առասանի ձևով ու կանոնավոր հաջորդականությամբ մեկը մյուսին շարամանված ոսկեհյուս շղթայիկներ վերևում՝ երկու կողմից, կախված էին*



*կապիճների ճարմանդի վրա, որպեսզի, կարծում եմ, հյուսվածքի գեղեցկությունն ավելի փայլեր ներքևում գտնվող առարկայի արձակած փայլից:*

*54. Կար նաև ոսկով աշխատված այն նշանավոր զարդը, որը կախված էր կրծքի առաջամասում, և որի վրա ամրացված էին տարբեր տեսակի ակնաքարեր նահապետների թվին հավասար թվով, քառաշար դասավորությամբ, որոնցից յուրաքանչյուրն իր վրա էր կրում փորագրված երեք անուն՝ ցեղերին տրված անվանադիրները (էպոնիմ): Ուսանոցների տակ պատմուճանն իջնում էր ծոծրակից մինչև ոտքի թաթերը հիանալիորեն զարդարված կախովի ծոպերով: Պատմուճանի քղանցքի զարդերիզը ոչ միայն գեղեցիկ գործվածք էր իր գույների պեսպիսությամբ, այլ նաև՝ ոսկյա զարդերով, որոնք կախված էին պատմուճանից ցած: Դրանք «բոժոժիկներ և նռնաձև ոսկյա բողբոջներ» էին՝ կանոնավոր հաջորդականությամբ շարված պատմուճանի քղանցքի վրա: 55. Կար նաև գլխին դրվող խույրը՝ ամբողջությամբ մանուշակագույն, ինչպես նաև ճակատի կողմից խույրին ամրացված տափարակ և անոսր թիթեղը՝ մաքուր ոսկուց պատրաստված և փորագրված խորհրդավոր մի դրոշմով: Ավելացնենք նաև զգեստի թույլ ծալքերը, մարմնի մերկ մասերը ծածկող անդրավարտիքը և այն ամենը, ինչ զգեստավորման միջոցով խորհրդանշաններով ուսուցվում է քահանայական առաքինության մասին:*

*56. Երբ Մովսեսը, շրջապատված անտեսանելի խավարով, Աստծու անպատմելի ուսուցումով ծանոթանում է այս և սրա նման ուրիշ բաների՝ գաղտնի վարդապետությունների ձեռքբերումով դարձած լինելով ինքն իրենից ավելի մեծ, այն ժամանակ, դուրս գալով խավարից, իջնում է դեպի իր ժողովուրդը՝ հայտնելու համար նրան այն հրաշալիքները, որոնք ցույց էին տրվել իրեն աստվածահայտ-*

նության միջոցով, հանձնելու նրան աստվածային օրենքները և հաստատելու նրա համար Աստծու տաճարն ու քահանայության կարգը՝ ըստ այն օրինակի, որ ցույց էր տրվել իրեն լեռան վրա: 57. Նա իր ձեռքերում բռնել էր նաև այն սուրբ տախտակները, որոնք մի հնարանք էին ու աստվածային ընծա և որոնք պատրաստվելու համար մարդկային ոչ մի գործակցություն չէին պահանջել, այլ, ինչպես դրանց նյութը, այնպես էլ դրանց վրա արձանագրված տառերը, թե՛ մեկը և թե՛ մյուսը հավասարապես Աստծու գործերն էին: Տառերը հաղխանում էին Օրենքը: Բայց ժողովուրդը արգելք է լինում աստվածային այս շնորհին՝ նախքան Օրենսդրի վերադարձը շեղված լինելով դեպի կռապաշտություն:

58. Արդարև, մինչ Մովսեսը երկար ժամանակ զբաղված էր մնում՝ խոսելով Աստծու հետ այս աստվածային խորհրդազգացության մեջ և «քառասուն օր ու քառասուն գիշեր» խավարի մեջ մասնակցում էր այս հավիտենական կյանքին՝ դուրս եկած լինելով իր բնությունից[20] (արդարև, այդ բոլոր օրերի ընթացքում նա կարիք չունեցավ նյութական որևէ սննդի), այդ նույն ժամանակ ժողովուրդը, ինչպես մի երեխա, որ փախչում է իր ուսուցչի հայացքից, սանձարձակ մղումներով տարվում է անկարգությամբ և հավաքվելով Ահարոնի մոտ՝ ստիպում նրան, որպես քահանայի, առաջնորդել իրեն դեպի կռապաշտության: 59. Եվ նրանք, պատրաստելով մի ոսկե կուռք (այդ կուռքը ձուլածո մի հորթ էր), անձնատուր էին լինում ամբարշտության: Երբ Մովսեսը վերադառնում է նրանց մոտ, ջարդուփշուր է անում իր հետ բերած տախտակները (դրանք Աստծու կողմից էին տրված իրեն), որպեսզի նրանք արժանի պատիժ ստանան իրենց գործած հանցանքների համար՝ զրկվելով այն շնորհից, որին Աստված նախասահմանել էր նրանց:



60. Այն ժամանակ ղևտացիների շնորհիվ մաքրելով այդ պղծությունը ժողովրդի արյամբ և խաղաղեցնելով Աստծու զայրույթը մեղավորների դեմ դրսևորված իր սեփական բարկությամբ, կուռքը խորտակելուց հետո նա վերստին կոփում է տախտակները քառասուն օրվա ընթացքում: Դրանց վրայի արձանագրությունն աստվածային զորության գործն էր, բայց նյութը պատրաստվում է Մովսեսի ձեռքով: Ուրեմն նա կոփում է քարե տախտակները՝ կրկին դուրս գալով իր բնությունից նույնքան օրերի ընթացքում, ապրելով մի ուրիշ ձևով, քան այն ձևը, որ ծանոթ է մեզ՝ մեր բնությանն անհրաժեշտ եղող բաներից ոչինչ չտալով իր մարմնին այն կերակրելու համար սնունդով:

61. Այսպես, նա կանգնեցնում է նրանց համար վկայության խորանը և փոխանցում պատվիրանները՝ հաստատելով քահանայության կարգը՝ ըստ այն հրահանգների, որոնք տրվել էին իրեն Աստծու կողմից: Աստվածային ցուցումների համաձայն, հաստատելուց հետո այս բոլոր բաները՝ վկայության խորանը, նախասրահը և ամեն ինչ, որ նրա ներքնամասում էր՝ խնկարկության սեղանը, ողջակեզների սեղանը, աշտանակները, վարագույրը, վիժակներն ու օթոցները, սրբարանում քավության սեղանը, քահանայական զարդարանքները, օծության յուղը, զոհագործման տարբեր ընծաները՝ մաքրության, գոհաբանության, մեղքերի ապաշխարության, դժբախտությունների դեմ խնդրվածքների համար տրվող ընծաները, իրենց մոտ եղած այս բոլոր բաները կարգավորելուց հետո այնպես, ինչպես անհրաժեշտ էր, նա իր դեմ հարուցում է մերձավորների նախանձը՝ մարդկային բնությանը շատ հատուկ այդ հիվանդությունը, 62. այնպես որ, նույնիսկ քահանայության պատվավոր աստիճան ունեցող Ահարոնը, ինչպես նաև նրա քույրը՝ Մարիամը, Աստծու կողմից իր եղբորը շնորհված այդ

պատվի դեմ զուտ կանացի խանդից դրդված, երկուսով բարձրաձայն այնպիսի խոսքեր արտասանեցին, որ գրգռելով Աստծուն՝ պատճառ դարձան, որ Նա պատժի իրենց այս հանցանքի համար: Այս պարագայում Մովսեսն իր ցուցաբերած քաղցրության և հեզության համար էլ ավելի արժանի է դառնում հիացման: Մինչ Աստված ուզում էր պատժել կնոջ այս անխորհուրդ չարությունը, նա բարեխոսեց Աստծուն իր քրոջ համար՝ բարկությունից վեր դասելով բնությունը:

63. Ժողովուրդը նորից է նետվում անկարգությունների մեջ: Հանցանքը սկիզբ է առնում որովայնի համար զգացված անզուսպ ցանկությունից: Նրանք չէին բավարարվում այն առողջարար և ախորժահամ սնունդով, որը թափվում էր վերևից, այլ մսի ախորժակը և դրանով պարարտանալու ցանկությունը Եգիպտոսի իրենց գերությունն ավելի գնահատելի էր դարձնում, քան իրենց ներկա երջանկությունը: Այն ժամանակ Մովսեսը խոսում է Աստծու հետ նրանց վրա ծանրացած այս կրքի մասին: Աստված սովորեցնում է նրանց, որ այդպիսի զգացումներ չունենան՝ նրանց տալով այն, ինչ ցանկանում էին ունենալ: Նա նրանց բանակատեղի վրա գետնին հավասար թափում է երամ-երամ թևածող թռչունների մի զանգված ամպի նման, այնպես որ դրանց որսը հեշտացնելով՝ հագեցնում է նրանց մեջ մսի ցանկությունը: 64. Այսօրինակ սննդի չափազանցությունը նրանց մեծ մասի մոտ առաջացնում է մարմնի հյութերի խանգարում, որն իր հերթին առաջացնում է փսխունքներ, և այդպիսով կշտապինդ հագեցվածությունը ավարտվում է նրանց համար մահացու հիվանդությամբ. հիանալի մի օրինակ, որ կարող է չափավորություն սովորեցնել նրանց և այն մարդկանց, որոնք տեսնում էին դա:

65. Դրանից հետո Մովսեսի կողմից դիտորդներ են ուղարկվում այն շրջանը, ուր, ըստ Աստծու խոստման, նրանք հույս ունեին բնակություն հաստատելու: Դիտորդներից ոմանք, վերադառնալով, ճշմարտությունը չեն հաղորդում, այլ տարածում են սուտ և աննպաստ լուրեր, այնպես որ ժողովուրդը նորից է սկսում բարկանալ Մովսեսի դեմ: Տերը դատապարտում է նրանց, ովքեր հուսախաբվել էին աստվածային օգնությունից և հույս չունեին, թե կտեսնեն այն երկիրը, որ խոստացվել էր իրենց: 66. Երբ ժողովուրդը շարունակում է առաջանալ անապատի միջով, ջուրը նորից է պակասում, և աստվածային զորության հիշողությունը միաժամանակ ջնջվում է նրանց մտքից: Ժայռի հետ պատահած նախկին հրաշքը վստահություն չի ներշնչում նրանց, թե հիմա էլ կստանան իրենց անհրաժեշտ եղած բանը: Նրանք, կորցնելով բարի հույսերը, սկսում են մեղադրանքներ տարածել Աստծու և Մովսեսի դեմ, այնպես որ, մի պահ թվում է, թե ինքը Մովսեսն անգամ ընկել է ժողովրդի թերահավատության ծանրության տակ: Սակայն նա նորից հրաշք է կատարում և ջրի վերածում զառիթափ խորդուբորդ ապառաժը: 67. Որկրամոլության գերությունը նրանց մեջ նորից է արթնացնում տրաքվելու աստիճան ուտելու ցանկությունը, ու թեև ապրելու համար անհրաժեշտ եղող բաներից ոչինչ չէր պակասում նրանց, այնուամենայնիվ երազում էին Եգիպտոսի բարիքների մասին: Երիտասարդները՝ ամենից անկարգապահները, ուղղվում են սարսափելի պատիժներով. թունավոր օձերը իրենց թույնն էին ներարկում նրանց մարմնի մեջ մահացու խայթվածքներով: 68. Եվ որովհետև նրանք մեկը մյուսի հետևից կորչում էին այս կենդանիների խածվածքներից, մեծ Օրենսդիրը, աստվածային մի ներշնչանքից մղված, ձուլել է տալիս օձի կերպարանքով անագապղնձե մի կենդանի և կանգնեցնում մի բարձունքի վրա

այնպես, որ այն տեսանելի լինի բանակատեղում գտնվող ամբողջ ժողովրդին: Այսպիսով, նա կասեցնում է այս սողունների պատճառած ավերը իր ժողովրդի մեջ և նրան փրկում կործանումից: Արդարև, ով իր գլուխը շուռ էր տալիս անագապղնձից կերտված այս օձի պատկերին, պատճառ չէր ունենում այլևս վախենալու իսկական օձերի խածվածքից, քանի որ նրա տեսքը չեզոքացնում էր թույնի ազդեցությունը խորհրդավոր մի հակակրանքով:

69. Մի նոր ապստամբություն է առաջանում ժողովրդի մեջ այս անգամ իշխանությունը գրավելու համար: Ոմանք աշխատում էին բռնի ուժով տիրանալ քահանայությանը: Մովսեսն ստիպված է լինում բարեխոսել Աստծուն մեղավորների համար, բայց աստվածային արդար դատաստանն ավելի ուժեղ է լինում, քան Մովսեսի կարեկցանքը իր ազգակիցների համար: Աստծու կամքով հողը անդունդի նման բացվում է և ապա նորից փակվում՝ ընկլուզելով իր մեջ բոլոր նրանց, ովքեր ծառացել էին Մովսեսի հեղինակության դեմ: Գալով նրանց, որոնք հարձակվում էին քահանայության վրա, թվով շուրջ «երկու հարյուր հիսուն հոգի», հրո ճարակ են դառնում: Նրանց գլխին եկած այս պատուհասը դաս է ծառայում իրենց եղբայրների համար:

70. Որպեսզի մարդիկ ավելի լավ համոզվեն, որ քահանայության շնորհը Աստծու կողմից տրվում է նրանց, ովքեր արժանի են դրան, Մովսեսը կարգադրում է, որ գավազաններ տրվեն իրեն յուրաքանչյուր ցեղի ամենաերևելի մարդկանց կողմից, և նրանցից ամեն մեկը տառերով իր անունը նշանակի իր տված գավազանի վրա: Այս գավազանների մեջ էր գտնվում նաև Ահարոնի գավազանը: Մովսեսը, գավազանները զետեղելով սրբարանի առջև, դրանց միջոցով բացահայտում է Աստծու ընտրությունը քահանայության վերաբերյալ: Արդարև, բոլոր գավազանների մեջ



«ծաղկում է միայն Ահարոնի գավազանը», պտուղ է տալիս և հասունացնում պտուղը: Այդ պտուղը մի նուշ էր: 71. Այս եղելությունը դառնում է հիացմունքի առարկա նույնիսկ թերահավատների համար, որոնք զարմանում են՝ տեսնելով, թե ինչպես այդ գավազանը, որ չոր էր, ողորկ և անարմատ, հանկարծ խոնավանում և արմատակալված բույսերի նման պտուղ է տալիս Աստծու զորությամբ, որը փայտի համար դառնում է հող, կեղև, ավիշ, արմատ, տևողություն ու ժամանակ: 72. Դրանից հետո Մովսեսը, որն առաջնորդում էր բանակը օտարազգի ցեղերի երկրամասի միջով, որոնք արգելք էին լինում իր անցումին, երդումով պարտավորվում է չթույլատրել իր ժողովրդին անցնել նրանց դաշտերի և այգիների միջով, այլ ընթանալ «արքայական ճանապարհով»՝ առանց շեղվելու աջ կամ ձախ: Եվ որովհետև նույնիսկ այս պարագայում թշնամիները չէին դադարեցնում իրենց հարձակումները իսրայելացիների վրա, Մովսեսը, պարտության մատնելով նրանց, դառնում է անցուղու տերը:

73. Այն ժամանակ ոմն Բաղակ, որ իշխում էր ավելի կարևոր մի ցեղի վրա (այդ ցեղի մարդիկ կոչվում էին մադիանացիներ), սաստիկ հուզված այն բանից, ինչ պատահել էր պարտված իր ցեղակիցներին, և վախենալով, որ շուտով նույն ճակատագրին կարժանանան նաև իրենք իսրայելացիների կողմից, օգնության է ուղարկում նրանց ոչ թե զենք ու զորականներ, այլ՝ մոգական ձեռնածություններ ոմն Բաղաամի միջոցով, որը ճարտար ձեռնածուի համբավ ուներ այդ բնագավառում և մեծ հեղինակություն էր վայելում այն մարդկանց կողմից, որոնք առիթ էին ունեցել դիմելու նրան՝ որպես բացառիկ կարողությամբ օժտված մարդու: Նրա արհեստը գուշակությունն էր, բայց ինչ որ վտանգավոր էր դարձնում նրան, որոշ դևերի օժանդա-

*կությունն էր[21]. չարադյութությամբ և վիճակ գցելով՝ դժբախտություններ էր առաջացնում: 74. Արդ, մինչ սա գնում էր այն մարդկանց հետևից, որոնք առաջնորդում էին իրեն այդ ցեղի թագավորի մոտ, նրա էշի ձայնը զգուշացնում է իրեն, որ իր բռնած ճանապարհը նպաստավոր ճանապարհ չէ իր համար: Դրանից հետո մի տեսիլքի միջոցով իմանալով, թե ինքը ինչ պետք է անի, հասկանում է, որ իր չարահնար մոգությունը չափազանց տկար է՝ վնասելու համար այն մարդկանց, որոնք Աստծո՛ւն ունեն որպես դաշնակից իրենց: Համակված Աստծու ներշնչանքով, որը փոխարինում էր դևերի գործողությանը, նա արտասանում է այնպիսի խոսքեր, որոնք ճշմարիտ մարգարեություն են այն մասին, թե ինչպիսի նպաստավոր բաներ էին պատահելու հետագայում: Հենց այն իրողությամբ, որ արգելվեց իրեն ի չարը գործադրել իր արհեստը, նա գիտակցում է աստվածային զորությունը և հրաժեշտ տալով գուշակությանը՝ դառնում է Աստծու կամքի մեկնիչը:*

*75. Դրանից հետո բնաջնջվում է այդ ցեղը՝ հրեա ժողովուրդը հաղթանակած լինելով մարտում: Բայց այս վերջինն էլ, իր հերթին, պարտվում է գերեվարվածների կողմից՝ անձնատուր լինելով պղծության կրքին: Միայն այն ժամանակ, երբ Փենեեսը տեգի մի հարվածով խոցելով նրանց, որոնք գրկախառնված ընկել էին անառակության մեջ, Աստծու բարկությունը վերջ է գտնում այն մարդկանց դեմ, ովքեր նետվել էին ապօրինի կենակցությունների մեջ: Այնուհետև Մովսեսը, բարձրանալով մի լեռան վրա և հեռվից դիտելով այն շրջանը, որը նահապետներին տրված Աստծու խոստումով վերապահված էր Իսրայելին, հեռանում է մարդկային այս կյանքից՝ առանց թողնելու ոչ մեկ նշան և ոչ մեկ հիշատակ իր մեկնումի մասին որպես «սգո հուշարձան»: 76. Ժամանակը չէր խաթարել նրա գեղեցկությունը, չէր խամրեցրել նրա աչքերի փայլը և ոչ էլ նվազեցրել նրա դեմքի պայծառ վեհությունը: Նա մնացել էր միշտ նման ինքն իրեն և հարափոփոխ բնության մեջ անփոփոխ էր պահել իր անայլայլ գեղեցկությունը:*

*77. Այս բոլոր բաները այն չափով, որ մարդկային պատմությունն իր տառացի իմաստով սովորեցնում է մեզ, նկարագրեցինք ընդհանուր գծերի մեջ՝ առանց մեզ արգելելու ընդլայնել դրանք, երբ դա պահանջում էր մեր պատմության նյութը: Այժմ ժամանակն է, որ մեր նկարագրած կյանքը պատշաճեցնենք այն նպատակին, որ առաջադրում ենք մեր սույն ուսումնասիրությամբ, որպեսզի ինչ-որ օգուտ քաղենք դրանից առաքինի կյանքի մասին մեր պատկերացման համար: Ուրեմն կրկին անդրադառնանք այդ կյանքի պատմության սկզբին:*

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՅԱՑՔ ՄՈՎՍԵՍԻ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

### Հոգևոր ծնունդ

*1. Մովսեսի ծնունդը զուգադիպում է փարավոնի հրովարտակին, որով հրամայվում էր սպանել բոլոր «արու» զավակներին: Քանի որ տղա զավակի ծնունդը պատահականության արդյունք է, մենք ինչպե՞ս կարող ենք ինքնակամ և ազատ կերպով ծնվել այդպիսին: Արդարև, մեզ կասեն (և իրավամբ), թե մեզնից կախված չէ մեր ինքնաբերական սերումով ընդօրինակել այդ փառավոր ծնունդը: Բայց այս ակնհայտ դժվարությունը արգելք չէ ամենևին, որ մենք սկզբից ևեթ ընդօրինակենք Մովսեսին: 2. Հիրավի, ամեն ոք գիտե, որ լինելության ենթակա էակները երբեք նման չեն մնում իրենք իրենց, այլ փոփոխվելով մեկ վիճակից շարունակաբար անցնում են մեկ ուրիշ վիճակի, որը գնում է միշտ դեպի լավը կամ դեպի վատը: Հակումը դեպի մարմնական կրքերը, որոնք մարդկությանը քաշում են իրենց հետևից և պատճառ դառնում նրա անկումներին, ներկայանում է կանացի սեռի պատկերով, որի բազմացումը հաճույքով է տեսնում բռնակալը: Դրան հակառակ, մարդկության արու շառավիղը, որն ատելի է նրան, և որից նա կասկածում է, թե կարող է տապալվել իր իշխանությունը, ներկայացնում է առաքինությունը, որը բիրտ է և ուժեղ[22]: 3. Արդ, ենթակա լինել փոփոխման՝ նշանակում է ծնվել շարունակաբար: Լինելության աշխարհում մենք չենք գտնում այնպիսի էակներ, որոնք մշտապես նման լի-*

նեն իրենք իրենց: Բայց այստեղ ծնունդը առաջ չի գալիս օտար միջամտությունից, ինչպիսին է պարագան մարմնավոր էակների համար, որոնք ծնում են պատահաբար: Ծնունդն այստեղ արդյունք է ազատ ընտրության, և մենք, այսպիսով, որոշ իմաստով ինքներս ենք դառնում մեր ծնողները՝ ծնունդ տալով ինքներս մեզ այնպիսին, ինչպիսին ուզում ենք լինել, և մեր կամքով ձևավորելով ինքներս մեզ (ըստ այն օրինակի, արու կամ էգ, որ մենք ընտրում ենք) առաքինությամբ կամ արատով: 4. Այսպես, հակառակ բռնակալի հակադրությանն ու դժգոհությանը, մենք հնարավորություն ենք ունենում ծնվելու լավագույն ծնունդով, ուրախությամբ դիտվելու և «ողջ պահվելու» այս գեղեցիկ զավակի ծնողների կողմից (առաքինության հայրերը հոգու տրամադրություններն են), հակառակ բռնակալի հակադրությանը: 5. Ավելի հստակորեն առանձնացնելով այս հատվածի թելադրած հոգևոր իմաստը՝ ասենք, ուրեմն, որ դրանից բխող ուսուցումն այն է, որ առաքինությունն սկսվում է հենց այդ ծննդից, որը դժգոհ է թողնում թշնամուն, ուզում եմ ասել՝ ա՛յդ տեսակի ծննդից, որի վերահսկիչը ազատությունն է[23]: Թշնամու դժգոհությունը նրա պարտության տեսանելի ապացույցն է:

6. Ինչպես որ ազատությանն է պատկանում այս արու և առաքինի զավակին ծնունդ տալու իրավունքը, նմանապես նրան է վերապահված պատշաճ կերակուրներով նրան սնելու և նախազգուշություններ ձեռք առնելու պարտականությունը, որպեսզի առանց վնասվելու նա փրկվի գետի ջրերից: Ովքեր իրենց երեխաներին նվիրում են բռնակալին, նրանց մերկ և անպաշտպան դնում են գետի վրա (գետ ասելով ես այստեղ հասկանում եմ կյանքը, որ փոթորկվում է կրքերի հաջորդական ալիքներով). գետի ջրերին հանձնվելուց հետո նրանք ընկղմվում և ջրասույզ են լինում: 7. Մեր



տղայի ծնողները, որոնք ներկայացնում են խելացի մտքի տեր մարդկանց կանխատեսող հատկությունները, ընդհակառակը, երբ կյանքի օրենքը նրանց ստիպում է իրենց լավ երեխային դնել այս աշխարհի ալիքների վրա, նրան պատսպարում են մի արկղի մեջ, որպեսզի չխեղդվի գետի ջրերում: Այս արկղը, որ պատրաստված է միահյուսված կնյուններով, ներկայացնում է զանազան կանոններից բխող դաստիարակությունը: Այդ դաստիարակությունը՝ արկղը, կյանքի ալեկոծություններից վերև է պահում նրան, ում կրում է իր մեջ: 8. Շնորհիվ այդ դաստիարակության նա չի թափառի ծովում՝ կոհակների շարժումից քշվելով այս ու այն կողմ, այլ կհասնի նավահանգիստ. հենց կոհակների շարժումն էլ նրան կնետի դեպի եզերք, և նա անվտանգ դուրս կգա կյանքի օվկիանոսից: 9. Այս է, որ մեզ սովորեցնում է կենսափորձը: Արդարև, այն մարդիկ, որոնք չեն սուզվել մարդկային պատրանքների ալիքների տակ, դրանք այնպիսիք են, որոնց գործերն իրենք են նրանց դուրս նետում իրենց անհանգիստ շարժումով, ասես, այդ գործերը անօգուտ մի բեռ համարելին նրանց, ում առաքինությունը դիմադրում է իրենց: Համենայն դեպս, ով խուսափել է այդ վտանգներից, նմանվում է Մովսեսին և չի խնայում իր արցունքները, եթե նույնիսկ պատսպարված է մի արկղի մեջ, որովհետև արցունքները ապահով պաշտպանություն են նրանց համար, ովքեր փրկվում են առաքինությամբ:

10. Եթե անզավակ և ամուլ կինը, թեև թագավորի դուստր, իրենն է դարձնում այդ երեխային և այնպես է շարժվում, որ կոչվի նրա մայրը, ապա Սուրբ Գիրքը համաձայն է լինում, որ նրա հարազատ խեղճ մայրը չմերժվի այնքան ժամանակ, որ երեխան գտնվում է անչափահաս տարիքում: Բայց երբ մեկն սկսում է ավելի վեր բարձրանալ, ինչպես այդ տեսանք Մովսեսի պարագայում, այն ժա-

մանակ ամոթ կհամարի լինել ի բնե ամուլ մի կնոջ որդին: 11. Արդարև, ամուլ է իսկապես հեթանոսական մշակույթը, որը հղանում է, բայց երբեք չի ծնում: Այնքան երկար հղությունից հետո, հիրավի, փիլիսոփայությունը երբևէ արտադրե՞լ է մի բան, որ արժանի լինի այդքան մեծ ջանքերի. բոլորը, դատարկ ու անձև, վիժում են առանց հասնելու աստվածաճանաչության լույսին: Նրանք գուցե կկարողանային աշխարհ գալ ու դառնալ մարդիկ, եթե միայն ծածկված չլինեին ամուլ իմաստության արգանդում: 12. Այսպես, եգիպտացիների իշխանուհու կյանքի պայմանները բաժանելուց հետո ինչքան էլ որ թվում էր, թե այդ կյանքի ընձեռած առավելություններից օգուտ քաղելու կարելիություն է ստեղծվել, Մովսեսը վերադարձավ այն կնոջ մոտ, որ իր իսկական մայրն էր: Իշխանուհու մոտ իր դաստիարակության ժամանակ Մովսեսն իրապես բաժանված չէր նրանից՝ շարունակելով, ինչպես պատմությունն է ասում, սնվել մայրական կաթով: Այս փաստը, թվում է, ինքն է մեզ սովորեցնում, որ եթե մեր դաստիարակության ընթացքում մենք հաճախակի շփվում ենք հեթանոսական մշակույթի հետ, չպետք է կտրվենք սակայն մեզ սնուցող Եկեղեցու կաթից: Այդ կաթը մեր հոգին սնուցող բարքերն ու սովորություններն են, որոնք այն զորացնում և ավելի վեր բարձրանալու հնարավորություն են տալիս նրան:

13. Ճշմարիտ է նաև գրքի այն հատվածը, որ երկու թշնամիների միջև մեզ ներկայացնում է նրան, ով դարձել է միաժամանակ դեպի դրսի վարդապետությունները և դեպի ավանդական վարդապետությունները: Արդարև, օտար կրոնը հակադրվում է եբրայական խոսքին՝ ջանալով երևալ ավելի ուժեղ, քան իսրայելական կրոնի խոսքը: Եվ այդպիսին էլ երևացել է այն թեթևամիտ մարդկանցից շատերին, որոնք լքել են ավանդական հավատը՝ միանալու համար իրենց հակառակորդներին և զանց առնելու իրենց հայրերի վարդապետությունը: Բայց ճշմարտապես բարձր մտքի տեր մարդը, որպիսին Մովսեսն է, սպանում է հավատի թշնամուն՝ հարվածելով նրան: 14. Կարող ենք այլ ձևով մեկնաբանել այդ տեսարանը՝ դրանում տեսնելով այն կռիվը, որ մղվում է մեզնից դուրս յուրաքանչյուրի մեջ: Մենք գտնվում ենք դրա մեջտեղում, ինչպես այդ կռվի մրցանակը, որին հավակնում են երկու հակառակորդներ՝ առանց հաշվի առնելու, որ մենք ապահովում ենք նրա՛ հաղթանակը, ում կողմն ենք բռնում: Այն երկու թշնամիները, որոնք կռվում են միմյանց դեմ, ինչպես եբրայեցին և եգիպտացին, կռապաշտությունն են և ճշմարիտ կրոնը, չափավորությունը և անժուժկալությունը, արդարությունը և անարդարությունը, խոնարհությունը և գոռոզամտությունը և այլն: 15. Մովսեսն իր օրինակով մեզ ուսուցանում է պաշտպանել առաքինությունը, որին բազմաթիվ կապեր են միացնում մեզ, և աշխատել պարտության մատնել մեր հակառակորդին: Արդարև, ինչպես որ միևնույն բանն են ճշմարիտ կրոնի հաղթանակը և կռապաշտության պարտությունը, այնպես էլ՝ արդարությունը, որը ջնջում է անարդարությունը, և խոնարհությունը, որը ոչնչացնում է գոռոզությունը:

16. Գալով այն կռվին, որ իրար է հակադրում երկու եղբայրների, մենք դա տեսնում ենք նաև մեզ մոտ: Մենք չէինք տեսնի չարաղետ հերետիկոսությունների և նրանց վարդապետությունների երևան գալը, եթե մոլար մտածելակերպեր չհակադրվեին ուղիղ մտածումներին՝ դրանց հետ մարտնչելու համար: Ուրեմն, եթե մենք մեզ չափազանց տկար ենք զգում ինքնե՛րս ապահովելու համար ճշմարտության հաղթանակը և եթե տեսնում ենք, որ չարի նախաձեռնություններն են հաղթանակ տանում, և ճշմար-

Անկեզ մորենին

տության հեղինակությունը մերժվում է, ապա պետք է հնարավորին չափ շուտ փախչենք այն օրինակի պատկերից, որ պատմությունն առաջարկում է մեզ, որպեսզի վերստին մուտք գործենք հավատի խորհուրդների դպրոցը: 17. Եվ եթե դեռ պիտի ապրենք օտարության մեջ, այսինքն՝ եթե անհրաժեշտությունը մեզ ստիպում է առնչություն ունենալ աշխարհիկ իմաստության հետ, ապա այդ բանն անենք միայն վատ հովիվներին հեռացնելուց հետո այն ջրհորից, որ նրանք գրավել են անարդարորեն, այսինքն՝ դատապարտելուց հետո ստախոս վարդապետներին հոգևոր մշակույթին մատուցած իրենց վատ ծառայության համար: 18. Այն ժամանակ մենք կապրենք առանձնացած[24] և կարիք չենք ունենա ծեծկվելու հակառակորդների հետ, որոնց հովիվներն ենք մենք, քանի որ մեր հոգու բոլոր շարժումները ենթակա կլինեն մեր մտքի առաջնորդությանը, ինչպես ոչխարների մի հոտ, որ առաջնորդվում է իր հովվի կողմից:

19. Մինչ մենք կհանձնվենք այդ խաղաղությանն ու այդ հանգստին, ճշմարտությունը կպայծառացնի մեր միտքը և իր շողերով կլուսավորի մեր հոգու աչքերը: Եվ այդ ճշմարտությունը, որ այն ժամանակ հայտնվեց Մովսեսին խորհրդավոր տեսիլքում, Աստված է: 20. Իսկ այն, թե փշալից մի մացառից է վառվում այն բոցը, որով լուսավորվում է մարգարեի հոգին, դա նույնպես անհետաքրքիր չի լինելու մեր հետազոտության համար: Արդարև, եթե «ճշմարտությունը» Աստված է, և եթե Նա նաև «լույս» է (հենց սրանք են այն բարձրագույն արտահայտությունները, որ գործածում է Աստվածաշունչը՝ ցույց տալու համար այն Աստծուն, որ հայտնվեց մեզ մարմնապես), ապա հետևում է, որ առաքինությամբ առաջնորդվելը մեզ տանում է այդ Լույսի ճանաչմանը, որը խոնարհվեց մինչև մարդկային բնությունը. աստղերի մեջ գտնվող ինչ-որ լուսատուից չէ, որ այն ճառագայթում է (այդ դեպքում նրա փայլը կշփոթվեր թաքուն որևէ նյութի փայլի հետ), այլ, դուրս գալով երկրային մի պարզ մորենուց, իր ճառագայթներով սակայն գերազանցում է երկնքի աստղերին[25]: 21. Այս հատվածը մեզ սովորեցնում է նմանապես սուրբ Կույսի խորհուրդը. աստվածային լույսը, որ, սկզբնավորվելով նրանից, լուսավորեց մարդկությանը, ծնվելիս անաղարտ պահեց այն մորենին, որից բխում էր ինքը, և ծննդաբերությունը չթարշամեցրեց կուսության ծաղիկը[26]:

22. Առաջին ուսուցումը, որ այդ լույսը տալիս է մեզ, այն է, թե ինչ պետք է անենք, որպեսզի մնանք ճշմարիտ լույսի ճառագայթների տակ, և թե հնարավոր չէ կոշիկները ոտքերին վազել դեպի բարձունքը, ուր երևում է ճշմարտության լույսը, այլ պետք է մերկացնել հոգու ոտքերը անկենդան մորթիների երկրային հանդերձանքից, որոնցով հանդերձված էր մեր բնությունն ի սկզբանե, երբ որ մերկացվեցինք աստվածային պատվիրանին չհնազանդվելու պատճառով: Երբ այդ բանը կատարենք, ճշմարտության ճանաչումը կհետևի դրան՝ հայտնվելով ինքն իրեն: Արդարև, ճանաչումն այն բանի, ինչ գոյություն ունի, դառնում է մաքրագտումն այն կարծիքի, որը վերաբերում է մի բանի, որ գոյություն չունի: 23. Իմ կարծիքով՝ դա սահմանումն է այն բանի, որ ճշմարտությունը գոյի ստույգ իմացության արտահայտությունն է. մոլորությունն ինքը մի պատրանք է, որ առաջ է գալիս մարդու մտքում և ստանում երևույթը գոյություն ունեցող մի բանի, որ իրականում գոյություն չունի: Ճշմարտությունը, ընդհակառակը, հաստատ ըմբռնումն է այն բանի, որը գոյություն ունի իրապես: Արդ,

*ինքնամփոփման մեջ անցկացվող երկար ժամանակներ են պետք խոկալու համար այս հարցերի մասին, որպեսզի կարելի լինի դժվարությամբ ըմբռնել, թե իրապես ինչ բան է էությունը, որ գոյություն ունի ի բնե, և ինչ բան է չէությունը, որ սոսկ երևույթն ունի գոյություն ունենալու, բայց ինքնըստինքյան չունի ոչ մեկ իրականություն:*

*24. Ինձ թվում է, որ Մովսեսը աստվածահայտնության լույսի շնորհիվ ինչ որ հասկացել է այն ժամանակ, այն է, թե զգայարանների տակ ընկնող կամ իմացականությամբ դիտարկելի ոչ մեկ բան չի գոյատևում իրապես, այլ հավերժական է միայն ամեն ինչ անդրանցնող և տիեզերքի ստեղծիչ գերագույն էակը, որից կախված է ամեն բան: 25. Արդարև, նրանից դուրս ինչ էլ որ լինեն մյուս էակները, մարդուս իմացականությունը նրանց մեջ չի գտնում այն ինքնաբավությունը, որը թույլ տար նրանց գոյություն ունենալ այդ գերագույն էակի մասնակցությունից դուրս: Բայց այն, որ անփոփոխ է, որ ենթակա չէ ո՛չ աճի և ո՛չ նվազման, որ հավասարապես մերժում է ամեն փոփոխություն, լինի դեպի լավը թե դեպի ավելի վատը (քանզի նա օտար է վատին, և չկա ոչինչ, որ լինի ավելի լավ նրանից), որ կատարելապես բավարարում է ինքն իրեն, որ միակ ցանկալին է, որին մասնակցում է մնացած ամեն ինչ, բայց որը չի նվազում այդ մասնակցությամբ, - ահա այն, որ կա՛ իրապես, և նրա ըմբռնումը ճշմարտության ճանաչումն է:*

*26. Նրան հասնելուց հետո (խոսքը վերաբերի անցյալում Մովսեսին թե այսօր ամեն մարդու, որ նրա նման մերկանում է իր երկրային պատյանից և դառնում Մորենուց եկող լույսին, այսինքն՝ այն ճառագայթին, որը դուրս եկավ մարմնի փշերից, փայլեց մեզ համար և որը, ինչպես մեզ ասում է Ավետարանը, «ճշմարիտ լույսն է և Ճշմարտությունը»), այո՛, նրան հասնելուց հետո միայն կարող ենք օգնել*



*նաև ուրիշներին, որ փրկվեն՝ տապալելով չարի զորությունների բռնակալությունը և ազատության վերադարձնելով բոլոր նրանց, ովքեր ենթարկվել էին նրանց գերությանը[27]: Մովսեսի աջ ձեռքի խաթարումը և նրա գավազանի օձի փոխարկումը հրաշքների առաջին հայտնությունն են: 27. Ինձ թվում է, թե դրանք խորհրդանշականորեն նշանակում են Տիրոջ մարմնի մեջ աստվածային խորհրդի հայտնությունը մարդկանց, խորհուրդ, որը ցույց է տալիս դևի պարտությունը և ազատագրումը բոլոր նրանց, ում նա կեղեքում էր[28]: 28. Ես այս մեկնաբանությամբ եմ առաջնորդվել Հին ու Նոր Կտակարանների վկայություններով: Արդարև, մարգարեն հայտարարում է, որ «Ամենաբարձրյալի աջն այլևս նույնը չէ», ասես, աստվածային բնությունը դիտարկելով իր անփոփոխության մեջ և զիջողություն հանդես բերելով մեր մարդկային բնության հանդեպ՝ նա այն տեսնում էր մարդկային բնության ձև ստացած: 29. Մովսեսի ձեռքը, երբ նա այն դուրս է հանում իր զգեստի ծալքերից, ստանում է մի գույն, որ նրա ձեռքի բնական գույնը չէ. այդ ձեռքը վերագտնում է իր սեփական տեսքը, երբ նա այն նորից մտցնում է իր զգեստի մեջ: Այնպես էլ միածին Աստվածը՝ «Ամենաբարձրյալի աջը», որ «Հոր ծոցում է», 30. երբ դուրս եկավ այնտեղից՝ հայտնվելու համար մեզ, փոխարկվեց մեր պատկերին, ապա, երբ բուժեց մեր տկարությունները և նորից իր սեփական ծոցը տարավ իր ձեռքը, որ գտնվում էր մեր մեջ և ստացել էր մեր գույնը (արդարև, Աստված այն ծոցն է, ուր հանգստանում է ձեռքը), իր անեղծանելի բնությունը չփոխարկեց չարչարելի բնության, ընդհակառակը, փոփոխությունների ենթակա և չարչարելի մեր բնությունն է, որ կերպարանափոխեց անչարչարելի բնության՝ այն մասնակից դարձնելով աստվածային անփոփոխության:*

31. Ինչ վերաբերում է գավազանին, որը օձի փոխարկվեց, թող դա բնավ չանհանգստացնի Քրիստոսի բարեկամներին՝ աստվածային խորհրդին պատշաճեցնելով մի խորհրդանշան, որ անհաշտելի է թվում այդ խորհրդի հետ, որովհետև ճշմարտությունն ինքը, Ավետարանի խոսքով, չի մերժում այն, երբ ասում է. «Ինչպես որ անապատում Մովսեսը բարձրացրեց օձին, այնպես էլ պետք է մարդու Որդին բարձրանա»: 32. Իսկ գաղափարը պարզ է. եթե մեղքի հեղինակը Սուրբ Գրքում կոչվել է օձ, ապա դրանից ծնվածն էլ անհրաժեշտորեն օձ է, որտեղից և հետևում է, որ մեղքն ունի նույն անունը, ինչ որ նա, ով ծնել է այն: Արդ, ընդունելով մեր մեղանչական բնությունը՝ «Տերը մեղք է եղել մեզ համար», ինչպես այդ մասին վկայում է Պողոս առաքյալը: Ուրեմն այս խորհրդանշանն իրավացիորեն է պատշաճեցվել Տիրոջը[29]: 33. Արդարև, եթե մեղքը օձ է, և եթե Տերը եղել է մեղք, ապա բնականոն մի հետևությամբ, ոչ ոքի մտքից չի կարող խուսափել այն, որ, ով եղել է մեղք, եղել է օձ՝ օձը լինելով մեղքի հոմանիշ: Եվ նա եղել է օձ մեր պատճառով, որպեսզի հոշոտի և ոչնչացնի մոգերի կողմից մեջտեղ հանված օձերին: 34. Այս բանն անելուց հետո նա վերստին փոխակերպվում է գավազանի, և գավազանով պատժվում են մեղավորները, իսկ նրանք, ովքեր հետևում են առաքինության դեպի վեր բարձրացող և դժվարին ճանապարհին, օժանդակություն են ստանում՝ իրենց սուրբ ակնկալություններով հենվելով հավատի գավազանին: Արդարև, «հավատը հուսացված բաների գոյացությունն է»:

35. Ով հասկացել է այս բաները, «դառնում է» իսկապես «մի Աստված» այն մարդկանց համեմատությամբ, ովքեր դիմադրում են ճշմարտությանը, հրապուրվում նյութի անբովանդակ պատրանքով և գոռոզամտությամբ մերժում են լսել Նրան, ով գոյ է մշտապես, ասես դա անկարևոր մի բան



լիներ նրանց համար: Հենց այդպես է վերաբերվում փարավոնը, երբ ասում է. «Ի՞նչ բան է դա, որ ես հնազանդվեմ նրա ձայնին: Ես չեմ ճանաչում Տիրոջը»: Նա արժեք է տալիս միայն նյութական և մարմնական բարիքներին, որոնք վերաբերում են զգայարանական կյանքին: 36. Ընդհակառակը, նա, ով վերին աստիճանի զորացավ աստվածային լույսի ճառագայթումով և մեծ առույգություն ու հզորություն ստացավ իր թշնամիների դեմ, նման է այն ըմբշամարտիկին, որն ուժային վարժությունների միջոցով հիանալիորեն մարզվել է իր մարզիչի մոտ և այժմ, ինքնավստահությամբ ու համարձակությամբ լի, մերկանում է իր հագուստներից՝ կռվի մեջ մտնելու համար: Նա ձեռքում բռնել է գավազանը, այսինքն՝ հավատի ուսմունքը, որով հաղթանակ պիտի տանի Եգիպտոսի օձերի դեմ:

37. Նրան կուղեկցի իր կինը, որը օտար մի ցեղի ծնունդ է: Հեթանոսական մշակույթի մեջ կա ինչ-որ բան, որ չպետք է արհամարհենք և որին միանալ չպետք է մերժենք առաքինությանը ծնունդ տալու նպատակով[30]: Արդարև, բարոյական և բնական փիլիսոփայությունը կարող է լինել կյանքի ընկերուհի, որին կապվում է բարձրագույն կյանքով ապրող մարդը և որի հետ բաժանում իր կյանքը, այն պայմանով, սակայն, որ իր պտուղը օտար պղծությունից ոչինչ չպահի[31], 38. որովհետև եթե նա չէ թլփատված և զերծ չէ ամեն տեսակ վնասակար ու պիղծ տարրից, ապա նրանց ընդառաջ եկող հրեշտակը մահվամբ կսպառնա նրանց. կինը պետք է խաղաղեցնի նրան՝ մաքրելով իր որդուն անդամահատվածության այն հատուկ նշանով, որով ճանաչում են օտարականին:

39. Կարծում եմ, որ, ով տեղյակ է պատմության սիմվոլիկային՝ նրա խորհրդանշանների մեկնաբանմանը, առաքինության մեջ մարդու առաջընթացի շարունակությունը, որ

Հանդիպում հրեշտակների հետ

ցույց ենք տալիս, հստակորեն կերևա նրան, երբ որ նա հետևի խորհրդանշանների շարակարգությանը: Արդարև, մարմնական և անթլփատ ինչ-որ բան կա փիլիսոփայությունից ծնունդ առած վարդապետությունների մեջ: Երբ այն վերցվի, ինչ որ մնում է, դա իսրայելական ցեղի մաքուր ծնունդ է: Ահա մի քանի օրինակներ. 40. Հեթանոսական փիլիսոփայությունը ևս ընդունում և սովորեցնում է հոգու անմահությունը. հենց սա էլ այն լավն է, որ կա նրա երեխայի մեջ: Բայց այս փիլիսոփայությունը սովորեցնում է նաև հոգեփոխությունը և հոգևոր էակի վերամարմնավորումը մի անասունի մեջ. ահա սա է օտար թլիփը՝ հավելամաշկը[32]: Կան նաև ուրիշ օրինակներ. այսպես՝ այդ փիլիսոփայությունը ընդունում և սովորեցնում է Աստծու գոյությունը, բայց մյուս կողմից հավատում է, որ նա նյութական է[33]. դավանում է, որ նա տիեզերքի արարիչն է, բայց ավելացնում է, որ նա կարիք ունի նյութի՝ աշխարհն արարելու համար[34]. վերագրում է նրան բարություն և զորություն, բայց շատ բաներում նրան ենթակա է դարձնում ճակատագրի բռնադատությանը[35]: 41. Եվ վերջապես յուրաքանչյուր հարց քննելիս տեսնում ենք, թե հեթանոսական փիլիսոփայությունն ինչպես է ապականում ու եղծում հիանալի վարդապետություններ իր անհեթեթ հավելումներով: Եթե վերցնենք այդ հավելումները, ապա Աստծու հրեշտակը մեր նկատմամբ կլինի հաշտ ու բարեհաճ՝ միայն և միայն ուրախանալով այդ վարդապետությունների օրինական ծնունդով:

42. Բայց պետք է վերադառնալ տեքստի շարունակությանը՝ տեսնելու համար, թե ինչպես եգիպտացիների հետ



կռվի մեջ մտնելու պահին գալիս է եղբայրական մի օգնություն: Մենք հիշում ենք, որ առաքինության ճանապարհին առաջին հանդիպումները, որ Մովսեսն ունեցավ Եգիպտոսում իր կյանքի սկզբնական շրջանում, եղան կռվասեր և ըմբոստ մարդու հանդիպումներ. դրանք նրա հանդիպումներն էին եգիպտացու կողմից կեղեքված մի եբրայեցու և իր ազգակցի վրա հարձակվող մեկ ուրիշ եբրայեցու հետ: 43. Հիմա, երբ նա հոգևոր առաքինությունների մեջ ավելի բարձր աստիճանի վրա է կանգնած միաժամանակ թե՛ իր երկարատև կրթվածության և թե՛ լեռան վրա իր ունեցած ներքին լուսավորության շնորհիվ, հիմա, ընդհակառակը, բարեկամական և խաղաղ մի հանդիպում է ունենում իր եղբոր հետ, որն Աստծու կողմից ուղարկվել է իրեն ընդառաջ: Եթե մենք այս դրվագը վերցնենք փոխաբերական իմաստով, ապա գուցե դա անօգուտ չի լինի մեր նպատակի համար, 44. որովհետև, իրավամբ, ովքեր կյանքում ի գործ են դնում առաքինությունը, տեսնում են Աստծու կողմից իրենց մարդկային բնությանն ընծայված օժանդակությունը, օժանդակություն, որը, ինչ վերաբերում է նրա ծագմանը, գոյություն ուներ մեզնից առաջ, բայց որը երևում է, և մենք դրա գիտակցությունն ունենում ենք միայն այն ժամանակ, երբ բավարար չափով ընտելացած ենք լինում բարձրագույն կյանքին ուշադրությամբ և կենտրոնացումով և, որպես ըմբշամարտիկներ, մերկանում ենք մեր զգեստներից՝ ամենաբիրտ հակառակորդների դեմ կռվի դուրս գալու նպատակով:

45. Բայց խորհուրդը մի ուրիշ խորհրդով բացատրողի տեսք չընդունելու համար ավելի բացահայտ կերպով ցույց կտամ այդ հավատի իմաստը: Վստահության արժանի մի վարդապետություն կա, որ իր հեղինակությունն ստացել է Եկեղեցու Հայրերի ավանդությունից և ասում է, թե մեր

բնությունը մեղքի մեջ ընկնելուց հետո աստվածային Նախախնամությունը մեզ չլքեց մեր անկման մեջ, այլ մեզնից յուրաքանչյուրի կողքին դրեց անմարմին բնությամբ մի հրեշտակ՝ կյանքում մեզ օգնելու համար: Դրան հակառակ, մարդկային մեր ցեղի ապականիչը, փորձելով վնասել մարդու կյանքին, նրա դեմ գործադրեց նույն միջոցը հանձին վատ և չարագործ մի դևի[36]: 46. Այսպես, մարդը դրվում է միմյանց հակառակ դիտավորություն ունեցող երկու հակառակորդների միջև: Իրենից է կախված մեկի կամ մյուսի հաղթանակը: Բարի Ոգին գործում է մարդու հոգու մեջ և ցույց է տալիս այն մարդկանց հուսացած վարձատրությունները, որոնք վարում են առաքինի կյանք, իսկ մյուսը տալիս է զգայական հաճույքներ, որոնցից ոչ մի բարի բան քաղելու հույս չկա, բայց որոնց պատճառած հետևանքը ներկա պահին գերում-շղթայում է անմիտ մարդկանց զգայարանները: 47. Եթե մարդն զգուշանա չարի հրապույրներից և ներքուստ կողմնորոշվի դեպի բարին՝ իր թիկունքը դարձնելով արատին, ապա նրա հոգին, դրված լինելով ապագա բարիքների դիմաց, կնմանվի մի հայելու, որի մեջ առաքինության պատկերն ու ձևերը, որոնք ներկայացված են Աստծու կողմից, դրոշմվում են իրենց ամբողջ մաքրությամբ: Եվ ահա այն ժամանակ է, որ օգնական մի եղբայր ներկայանում է նրան և տեղ գրավում նրա կողքին: Արդարև, հրեշտակը կարող է կոչվել մարդու եղբայրը որպես նրա հոգու բանական և իմացական մասը: Ինչպես ասվեց, նա հայտնվում և գալիս է օգնելու մեզ, երբ մենք մոտենում ենք փարավոնին:

48. Թող ոչ ոք չկարծի, թե կատարյալ զուգահեռություն կա պատմական նյութի և դրան կապակցված հոգևոր մեկնաբանման միջև, այնպես որ, եթե նա տեքստի մեջ գտնի ինչ-որ մանրամասնություն, որ չի համապատասխանում այդ մեկնաբանմանը, թող դա պատճառ չբռնի դատապարտելու համար ամբողջը: Թող միշտ հիշի այն նպատակը, որին մենք դարձրինք մեր աչքերը սույն աշխատասիրության ընթացքում և հստակորեն այն արտահայտեցինք ներածության մեջ. դա մեծ մարդկանց կյանքն է, որ առաջարկվում է իրենց հաջորդներին որպես առաքինության օրինակ: 49. Բայց նրանց համար, ովքեր փառատենչություն ունեն նմանվելու նրանց, հնարավոր չէ անցնել միևնույն նյութական իրադարձությունների բովից: Հիրավի, ինչպե՞ս կարելի է նորից տեսնել այն ժողովրդին, որը բազմացավ Եգիպտոսում իր պանդխտության հետևանքով, կամ այն բռնակալին, որը ստրկության դատապարտեց նրան և, լինելով թշնամի արու զավակներին, նպաստեց քնքուշ և տկար սեռի աճին: Եվ այսպես, կարելի է անդրադառնալ նաև պատմության մյուս դրվագներին: Տրված լինելով, որ անկարելի է ըստ էության ընդօրինակել սրբերի հիանալի գործերը, պետք է պատմական մակարդակից դեպի բարոյական մակարդակ շրջել այն բաները, որ ունակ են շրջվելու, որպեսզի ջերմեռանդ հոգիները դրանց մեջ ինչ-որ օգնություն գտնեն սրբակրոն կյանքի համար: 50. Եթե պատմության կողմից հիշատակված եղելություններից որևէ մեկը չի կարող պատշաճել հոգևոր մեկնաբանման համատեքստին՝ դուրս ցատկելով այնտեղից որպես մեր նյութին անհարիր և անօգուտ բան, ապա դրա համար մենք չենք ընդհատի առաքինությանը վերաբերող մեր մեկնաբանությունը:

51. Կանխելով դեպքերի շարունակությունը՝ մենք նրան կպատասխանենք՝ կրկնելով այն, ինչ արդեն ասացինք, այսինքն՝ մոլորեցուցիչ և անսովոր մի դրվագ չի ջնջում այն սերտ կապակցվածությունը, որ գոյություն ունի ամբողջի մեջ: Մենք կասենք նաև, որ հրեշտակ և եղբայր համանման

Առաջին փորձություններ

արտահայտությունները կարող են ունենալ հակադիր երկու նշանակություններ. 53. արդարև, հրեշտակ ասելով՝ մենք չենք հասկանում միայն «Աստծու հրեշտակ», այլ նաև՝ «Սատանայի հրեշտակ». և մենք եղբայր չենք կոչում միայն նրան, ով լավ է, այլ նաև՝ վատին: Այսպես, Սուրբ Գիրքը խոսում է լավերի մասին, երբ ասում է, թե `«Եղբայրներն իրար օգտակար են լինում կարիքի մեջ», իսկ վատերի մասին խոսում է այնտեղ, ուր գրված է, թե`«Ամեն եղբայր քար է դնում իր նմանի ոտքի տակ»:

54. Այս փակագծից հետո եա իր սեփական տեղն ուղարկենք այս հարցերի մասին մեր ուշադիր դիտարկումը և վերադառնանք մեր նյութին: Մենք տեսանք Մովսեսին՝ զորացած Լույսի տեսիլքից և ամրապնդված իրեն դաշնակից և զորավիգ հանդիսացող մի մարդու կողմից՝ հանձին իր եղբայր Ահարոնի, որի մասին խոսեցինք: Այժմ, վստահությամբ լի, նա հորդորում է ժողովրդին ազատագրվելու, հիշեցնում նրան անցյալի նրա մեծությունները և իր կարծիքն է տալիս նրան, թե ինչ ձևով կարելի է ազատվել աղյուս թրծելու և կաղապարելու տարապարտ, ծանր աշխատանքից: 55. Դրանով ի՞նչ է ուսուցանում մեզ պատմությունը. հավակնություն չունենալ բնավ մեր խոսքն ուղղելու ամբոխին առանց համապատասխան նախապատրաստության, որ այդ խոսքը հասու դարձներ մեծ բազմությունների: Տեսնում եք, արդարև, թե ինչպես Մովսեսը, որ իր երիտասարդության ժամանակ դեռևս չէր հասել առաքինության այս բարձր աստիճանին, չէր հաջողել խաղաղության իր խորհուրդներն ընդունել տալ իրար հետ կռվող երկու մարդկանց, հիմա նա հազարավոր մարդկանց է դիմում միաժամանակ: Ի՛նչ նշանակություն ունի, թե այդպիսով պատմությունը բարձրաղաղակ ասում է քեզ, որ անձդ վտանգի չենթարկես՝ ունկնդիրներիդ առաջարկություններ անելով և խորհուրդներ տալով, քանի դեռ երկար ու լուրջ մի ուսումնասիրությամբ ձեռք չես բերել դրանք կյանքի կոչելու հեղինակությունը:

56. Բայց Մովսեսն իր սքանչելի խոսքերով հազիվ էր իր ունկնդիրներին հորդորել նվաճելու իրենց ազատությունը, հազիվ էր նրանց մեջ բոցավառել այն ձեռք բերելու ցանկությունը, երբ թշնամին, զայրանալով դրանից, կրկնապատկեց իր գործադրած չարչարանքները նրանց նկատմամբ, ովքեր հնազանդվում էին նրա ճառախոսությանը: Սա նույնպես խորհելու առիթ է տալիս մեզ: Արդարև, շատ շատերը, ոգևորությամբ ընդունած լինելով բռնակալությունից փրկվելու մասին նրա խոսքը և հնազանդված լինելով նրա քարոզին, այժմ գտնվում են հակառակորդի սպառնալիքներից առաջացած փորձությունների դիմաց: 57. Նրանց մեջ մեծ թվով մարդիկ այդ քարոզից դարձան ավելի ինքնավստահ ու հավատի մեջ ավելի հաստատակամ, և թշնամու հարձակումը հոգեպես ավելի ևս զորացրեց նրանց: Այսուհանդերձ ամենաթույլերից ոմանք կքեցին նրա գրոհների տակ՝ բացեիբաց ասելով, որ ավելի լավ է խոզ մնալ ազատության այդ քարոզի առջև, քան դրա պատճառով ընկնել նման դժվարությունների մեջ: 58. Նաև ահա թե ինչ տեղի ունեցավ այդ ժամանակ. իսրայելացիները, թուլանալով, սկսեցին վատաբար մեղադրել այն մարդկանց, որոնք իրենց մղում էին ազատվելու գերությունից: Բայց այդ պատճառով Մովսեսի խոսքը չի դադարելու դեպի բարին առաջնորդելու համար մարդկանց, եթե նույնիսկ նրանք, ովքեր հոգեպես մանուկ են և մտքով անկատար, երեխայի նման վախենում են այն փորձություննե-

Եգիպտոսի պատիժները

րից, որոնց սովոր չեն բնավ:

59. Արդարև, դևը փորձում է վնասել մեր բնությանը և կործանել այն. աշխատում է իր իշխանության տակ գտնվող մարդկանց ոչ միայն արգելել, որ նայեն դեպի երկինք, այլև, ընդհակառակը, նրանց խոնարհեցնում է դեպի հողը՝ ցեխով պատրաստված աղյուսներ կաղապարելու համար նրանց մեջ: Պարզ է, որ այն ամենը, ինչ պատկանում է նյութական վայելքների կարգին, անհրաժեշտորեն կազմված է հողից ու ջրից, դրանք վերաբերեն ստամոքսին թե սեռական հաճույքներին կամ որևէ այլ բանի, որը կապ ունի հարստությունների հետ: 60. Այս տարրերի խառնուրդը կազմում է ցեխ և միանգամայն արժանի է այդ անվան: Ովքեր ագահորեն փնտրում են այդ վայելքները, որոնք ցեխով են պատկերված, իզուր են փորձում դրանցով հագենալ. միևնույն է, նրանք երբեք չեն կարող լցված պահել այն տեղը, որն ընդունում է իրենց հաճույքները, այլ ինչ չափով որ լցվում է այդ տեղը, նույն չափով այն նորից է դատարկվում, որպեսզի դարձյալ լցվի: Այսպես, աղյուսագործն անդադար նոր հող է լցնում կաղապարի մեջ, հենց որ այն դատարկվում է: Այս խորհրդանշանը, ինձ թվում է, շատ հեշտ է հասկանալ, եթե մտածենք մարդ արարածի երբեք չդադարող տարփատենչ ախորժակի մասին: 61. Արդարև, փնտրված մի բանի ցանկությունը հազիվ իր գոհացումը գտած՝ ծնվում է մեկ ուրիշ բանի ցանկությունը, որի վերաբերմամբ այդ ցանկությունը նորից է ուզում բավարարվել, և երբ դրանից էլ է հագենում, այն կրկին գլուխ է բարձրացնում հաջորդի համար. և այսպես, նույն երևույթն անընդհատ կրկնվում է մեր մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չենք ձերբազատվել նյութական կյանքից[37]: 62. Գալով «խոզանին» և «հարդին», որ ձեռք են բերում այդ կյանքից, նա (բռնակալի հրամաններին ենթարկվող մարդը) դրանք պետք է խառնի ցեխին՝ աղյուսներ պատրաստելու համար: Սուրբ Ավետարանը և առաքյալի վեհասքանչ ձայնը մեզ արդեն տվել են դրանց իմաստը՝ մեկը և մյուսը (հարդը և խոզանը) մեկնաբանելով նմանապես որպես հրո ճարակ եղող բաներ:



63. Ուրեմն, երբ իր առաքինությամբ հարգարժան մի անձ աշխատում է մոլորությունից դուրս բերել այն հոգիներին, որոնք գերի են դարձել դրան, և նրանց առաջնորդել ազատ և իմաստուն մի կյանքի, նա, ով, ինչպես Պողոս առաքյալն է ասում, ճարպիկ է և կարող տեսակ-տեսակ որոգայթներ հնարելով որսալու մեր հոգիները, շատ լավ գիտե Աստծու օրենքին հակադրել ստի հնարանքները: Ես այս բանն ասում եմ Եգիպտոսի օձերի մասին, այսինքն՝ ստի միջոցով ի գործ դրված բազմազան չարիքների մասին, որոնց խորտակումը տեղի ունեցավ Մովսեսի գավազանի շնորհիվ: Մենք արդեն բավականաչափ խոսել ենք նրա մասին: 64. Ով ունի այդ անպարտելի գավազանը, որ առաքինությունն է, և որի միջոցով ոչնչացնում է մոգերի գավազանները, նա հետևության ճանապարհով գնում է դեպի մեծամեծ հրաշքներ: Այդ հրաշքները նպատակ չունեն բնավ ապշության մատնելու այն մարդկանց, որոնք ականատես են լինում դրանց, ընդհակառակը, դրանք կատարվում են հօգուտ նրանց, ովքեր պետք է փրկվեն: Արդարև, առաքինությամբ կատարված հրաշքներով է, որ պարտվում է թշնամին, և զորություն ստանում բարեկամը:

65. Բայց, ընդհանուր ձևով, սկսենք հասկանալ այս հրաշքների նպատակը նաև հոգևոր տեսանկյունից. այն ժամանակ հնարավոր կլինի մեզ գտնել առանձնապես

դրանցից յուրաքանչյուրին պատշաճեցված իմաստը: Փաստ է, որ ճշմարտության ուսուցումը տարբեր ձևով է ընկալվում ըստ այն մարդկանց տրամադրվածության, որոնք ընկալում են այն. Բանը, որ բարին և չարը ներկայացնում է հավասարապես բոլորին, մեկը, որ լավ է տրամադրված այն բանի հանդեպ, որը ներկայացվում է իրեն. լույսի մեջ է զգում իր հոգին, մյուսը, որ հակառակ ուղղությամբ է տրամադրված և չի կամենում իր հոգու հայացքը սևեռել ճշմարտության ճառագայթի վրա, մնում է տգիտության խավարի մեջ: Եթե այն հոգևոր մեկնաբանությունը, որ մենք տվեցինք հատվածի ամբողջության վերաբերյալ, ճիշտ է, ապա այն ամենևին տարբեր չի կարող լինել նաև նրա մանրամասնությունների վերաբերյալ՝ մասերի ամբողջությունը բովանդակված լինելով ամբողջի մեկնության մեջ: 66. Ուրեմն զարմանալի ոչինչ չկա այն բանի մեջ, որ եբրայեցին անզգա է մնում Եգիպտոսին հարվածող պատիժների նկատմամբ, չնայած որ շրջապատված է օտարներով: Նույն բանը տեղի չի՞ ունենում նաև այսօր: Արդարև, մեր մեծ քաղաքների մեջ, որտեղ քրիստոնյաները բաժանված են իրար հակառակ վարդապետությունների միջև, ոմանց համար հավատի աղբյուրը ժայթքում է սուրբ ուսուցումներով բյուրեղացած մաքուր ու վճիտ ջուր, մինչդեռ նրանց համար, ովքեր խեղաթյուրված կարծիքների հետևանքով փոխակերպվել են եգիպտացիների, թունավորված արյունն է, որ փոխարինում է ջրին: 67. Հաճախ ստի հոռի խորամանկությունը փորձում է արյան փոխել նույնիսկ այն ջուրը, որ եբրայեցիներն են խմում՝ այն ապականելով մոլորություններով, այսինքն՝ փորձելով մեր վարդապետությունը ցույց տալ մեզ ոչ այնպես, ինչպես որ կա. բայց այդ սուտը չի կարող ամբողջապես ապականել մաքուր ջուրը, եթե նույնիսկ մոլորությունը հարմար պահին



կարմրավուն դարձնի այն. եբրայեցին խմում է ճշմարիտ ջուրը, եթե նույնիսկ այն ճարտարորեն եղծված է հակառակ բաներով՝ կանգ չառնելով բնավ նրա մոլորեցուցիչ տեսքի վրա:

68. Նույն բանը կարող ենք ասել տգեղ և չաղակրատ գորտազգիների մասին: Այս կենդանիները, որոնք երկկենցաղ են, որոնց ցատկը սողոսկուն է, և որոնք իրենց տեսքով նույնքան զազրելի են, որքան իրենց մաշկի հոտով, մտնում են եգիպտացիների տներից, սենյակներից, շտեմարաններից ներս, բայց չեն դիպչում և չեն վնասում եբրայեցիների կյանքին: 69. Կենդանիների այս գարշելի տեսակը խորհրդանշում է արատի այն աղետալի հետևանքները, որոնք ծնունդ են առնում պիղծ սրտից, ինչպես մի ճախճախուտից: Այս գորտերը բնակվում են այն մարդկանց տներում, որոնք նախընտրեցին ապրել եգիպտավարի՝ երևալով սեղանների վրա, դուրս չգալով անկողիններից, մտնելով շտեմարանների գաղտնի անկյունները: 70. Նայի՛ր պիղծ և անառակ մարդկանց կյանքին. ծագում առնելով տղմոտ իսկական մի ճահճուտից և անասունների ապրելակերպի նմանությամբ չմնալով ճիշտն ասած ո՛չ այս և ո՛չ այն բնության մեջ, լինելով բնությամբ մարդկային, իսկ կրքերով՝ անասնական, այդ կյանքը հենց այս պատճառով ներկայացնում է երկկենցաղ և երկդիմի մի գոյության ձև[38]: Դրա մեջ դու կգտնես այդ պատժի նշանը ոչ միայն անկողնում, այլ նաև սեղանի վրա, շտեմարանների և ամբողջ տան մեջ: 71. Արդարև, անառակ և չվայտ մարդը իր նշանը դրոշմում է ամենուրեք, այնպես որ ամենքի համար հեշտ է նրան զատորոշել պարկեշտ մարդուց հենց միայն իր տունը կարգի բերելու նրա ձևից: Մեկի մոտ պատի ծեփի վրա տեսնում ես որմնանկարներ, որոնք ներկայացնում են զգայական հաճույք առաջացնող տեսարաններ, հիշեցնում

Նախախնամություն և ազատություն

մարդուն իր հիվանդությունը և անպատշաճ նկարների պատկերումով նրա հոգու մեջ տարածում մեղքի հրապուրանքը: Պարկեշտ մարդը, ընհակառակը, խնամքով աշխատում է իր հայացքը մաքուր և հեռու պահել զգայական տեսարաններից: 72. Նույնպես ժուժկալ մարդու սեղանը պարզ է, համեստ, մինչդեռ այն մարդու սեղանը, որը թավալվում է տղմաթաթախ կյանքի մեջ, լի է շռայլությամբ և գեխությամբ: Եվ եթե, վերջապես, դու թափանցես շտեմարաններից ներս, այսինքն՝ եթե մտնես անառակ մարդու հոգու գաղտնի և թաքուն ծալքերի մեջ, ապա այնտեղ կգտնես առավել շատ գործերի մի կույտ:

73. Գուցե զարմանաք՝ մտածելով, որ, ըստ պատմության վկայության, եգիպտացիների դեմ այս չարիքները գործադրվել են առաքինության գավազանի միջոցով: Չէ՞ որ գրված է, թե՝ «Փարավոնի սիրտը կարծրացավ Աստծու կողմից»: Ուրեմն ինչպե՞ս նա կարող էր դատապարտելի լինել, եթե վերին զորությունն էր կանխորոշել նրա մեջ դնել կարծրացման այդ տրամադրությունները: Պողոս առաքյալը մոտավորապես նույն ձևով չի՞ արտահայտվում, երբ ասում է, թե՝« Այնքան ժամանակ, քանի դեռ նրանք մտահոգված չէին, որպեսզի լավ ճանաչեն Աստծուն, Աստված նրանց մատնեց ամոթալի կրքերի խայտառակության»՝ խոսելով այն մարդկանց մասին, որոնք ապրում էին հակաբնական բարքերով և գեխության անարգ ու ամոթալի ձևերով նվաստացնում իրենք իրենց: 74. Բայց եթե ճիշտ է, որ Սուրբ Գիրքն այսպես է արտահայտվում, և ուրեմն եթե Աստված այդպես հոռի զգայասիրության է մատնում միայն նրան, ով հակված է դրան, ապա աստվածային կամ-



քով չէ, որ փարավոնը կարծրացավ, և չվայտ կենցաղը բնավ առաքինության գործը չէ: Արդարև, եթե Աստված էր ուզում դա, ապա այդ դեպքում ամեն ընտրություն իր արժեքով կլիներ բացարձակապես հավասար, և բարու ու չարի միջև կջնջվեր ամեն տարբերություն. ոմանք կմասնակցեին այս ձևի կյանքի, ուրիշներ՝ մի այլ ձևի, ոմանք իրենց անձը կիրագործեին՝ տրվելով առաքինությանը, իսկ ուրիշները՝ ընկնելով արատի մեջ: Արդ, ոչ ոք տրամաբանորեն չէր կարող աստվածային կամքի կողմից հրամանագրված գերբնական մի ճակատագրի պատասխանատվությանը վերագրել կյանքի տարբերությունները՝ ազատ ընտրությունը տերը լինելով յուրաքանչյուրի համար:

75. Առաքյալը հստակորեն ուսուցանում է մեզ, թե ովքեր են այն մարդիկ, որոնք մատնվել են «հոռի զգայասիրության». «Ով բարվոք չի համարել պահել Աստծու ճշմարիտ ճանաչումը», հենց նա է, որից Աստված ոչ թե վրեժ է լուծում, այլ որին մատնում է կրքերի նրա համար, որ չի ճանաչում իրեն: Ուրեմն Աստծու ճանաչումը մերժելն է պատճառը, որ նրանք ընկնում են զգայական և անարգ կյանքի մեջ: 76. Դա նման է այն մարդուն, որը, տեսողությունից զուրկ լինելով, կասի, թե արևի պատճառով է, որ ինքն ընկել է փոսը. դրանից, իհարկե, մենք չենք եզրակացնի, թե արևն է, որ դժկամությամբ փոսի մեջ է հրել այդ մարդուն, որը չէր ուզում նայել նրան, այլ կճշմարտենք նրա խոսքը՝ ասելով, որ տեսողությունից զուրկ այդ մարդու մոտ լույսի բացակայությունն է պատճառ եղել, որ նա ընկնի փոսը: Այս օրինակը հստակորեն ասում է մեզ, որ պետք է հասկանալ առաքյալի մտածումը, երբ նա խոսում է ամոթալի կրքերի հանձնված այն մարդկանց մասին, որոնք չեն ճանաչում Աստծուն, կամ խոսում է Աստծու կողմից եգիպտացի բռնակալի սրտի կարծրացման մասին ոչ

*թե այն իմաստով, որ աստվածային կամքն է առաջացնում այդ կարծրացումը փարավոնի հոգու մեջ, այլ այն իմաստով, որ ազատությունը, կողմնորոշվելով դեպի չարը, վանում է այն խոսքը, որը ջանում է կոտրել նրա դիմադրությունը: 77. Նաև նույն ձևով է, որ առաքինության գավազանը, երևալով Եգիպտոսում, եբրայեցուն մաքրում է գեխ կյանքից և ցույց տալիս, որ եգիպտացին թաթախված է դրա մեջ:*

*78. Պատահում է նաև, որ նույնիսկ եգիպտացիների մոտ գորտերը ոչնչանում են, երբ Մովսեսն իր ձեռքերը տարածում է նաև նրանց համար, ինչ որ մենք տեսնում ենք դեռ այսօր էլ: Արդարև, այն մարդիկ, որոնք ճանաչել են Օրենսդրի տարածված ձեռքերը (կարծում եմ դու գուշակում ես այս խորհրդանշանի իմաստը, թե օրենսդիր ասելով՝ պետք է հասկանալ ճշմարիտ Օրենսդրին, և տարածված ձեռքեր ասելով՝ նրա տարածված ձեռքերը Խաչի վրա), այդ մարդիկ, ուրեմն, եթե նույնիսկ նախապես ապրել են պիղծ և գեխ պայմանների մեջ, հենց որ դառնում են դեպի Նա, ով մեզ համար տարածեց իր ձեռքերը, ազատվում են այդ տհաճ և վնասակար «հյուրերից» կրքերի քայքայումով ու խորտակումով: 79. Հենց դա է, որ պատահում է նրանց, ովքեր ազատվել են նման մի հիվանդությունից: Նրանց մեջ խլրտացող այդ շարժումների անհետացումից հետո իրենց անհեթեթ և գարշելի անցյալի հիշողությունն ու դրանից զգացված զզվանքը լցնում են նրանց զղջացող հոգիները, ինչպես այդ մասին ասում է Պողոս առաքյալը՝ իր խոսքն ուղղելով նրանց, որոնք հեռանում են մեղքից՝ փնտրելու համար առաքինությունը. «Ի՞նչ պտուղ էիք քաղում այն ժամանակ այդ բաներից, որոնց համար հիմա ամաչում եք» (Հռոմ. 6, 21):*

*80. Այն փաստը, որ փայտե գավազանի միջոցով օդը մռայլվում է եգիպտացիների համար, իսկ այն շարունակում է արևոտ ու պայծառ մնալ եբրայեցիների համար, ներկայացնում է նույնանման մի իմաստ: Այդ փաստի վրա է հենվում մանավանդ այն մեկնաբանությունը, որ արդեն տվել ենք, ըստ որի՝ ոչ թե վերևից ինչ-որ ճակատագիր է ընկղմում մեկին լույսի մեջ, իսկ մյուսին՝ խավարի, այլ մենք ինքներս՝ մարդիկս է, որ ունենք մեր մեջ՝ մեր բնության ու ազատ կամքի մեջ, լույսի և խավարի սկզբունքները, նայած թե դեպի ո՛ր մեկն ենք դառնում: 81. Նշենք, արդարև, որ Մովսեսի այս պատմության մեջ ինչ-որ բարձրաբերձ պատի կամ լեռան արգելապատնեշը չէ, որ խափանում է արևի ճառագայթները և խավարի մեջ թաղում եգիպտացիների աչքերը: Բայց ամեն ինչ հավասարապես լուսավորված լինելով արեգակի ճառագայթներով՝ եբրայեցիները վայելում էին լույսը, մինչդեռ եգիպտացիները չէին զգում դրա փայլը: Նույն ձևով լուսավոր կյանքը առաջարկվում է հավասարապես բոլորի ազատ ընտրությանը, բայց ոմանք իրենց վատ արարքներով իրենք իրենց գլորում են դեպի չարի խավարը և քայլում մթության մեջ, մինչդեռ մյուսները ողողվում են առաքինության լույսով:*

*82. Եթե խավարի այս տանջանքներից երեք օր հետո եգիպտացիները վերսկսում են վայելել լույսը, ապա գուցե դա կարելի է մեկնաբանել որպես երկնքի թագավորությանն սպասող այն մարդկանց վերջնական վերականգնում* (apocatastasis)*, որոնք դատապարտվել էին դժոխքի*[39]*: Արդարև, այս «իրական խավարը», որի մասին խոսում է պատմությունը, մեծ նմանություն ունի (ինչ վերաբերում է բառին ու տառին) «արտաքին խավարի» հետ: Թե՛ սրանք և թե՛ մյուսները ցրվում են, երբ Մովսեսը, ինչպես դա նախապես բացատրեցինք, իր ձեռքերը տարածում է այն մարդկանց համար, որոնք խավարի մեջ են: 83. Նույն ձևով*

Անդրանկածինների մահը

Հավանորեն կարող ենք մեկնաբանել նաև «Հնոցի մոխիրը»․ որը եգիպտացիների մոտ առաջացնում է ցավոտ ուռուցքներ․ «Հնոցի» խորհրդանշանը բացահայտ կերպով ցույց է տալիս կրակի ցավը, որն սպառնում է դժոխքում և որը տանջում է միայն նրանց, ովքեր ապրել են եգիպտական ձևով: 84. Իսկական իսրայելացին, որը Աբրահամի որդի է և որը իր կյանքով ու վարքով դառնում է դեպի նա, որպեսզի իր ազատ գործունեությամբ ցույց տա իր պատկանելիությունը ընտրյալների ընտանիքին, խուսափում է Հնոցի պատճառած ցավից: Նշենք նաև, որ մյուսների համար ևս, համաձայն վերևում մեր տված մեկնաբանության, Մովսեսի ձեռքերի տարածումը կարող է նրանց բուժել իրենց վերքերից և պատիժը հեռացնել իրենցից:

85. Գալով այն թեթև մժեղներին, որոնք եգիպտացիներին տանջում են իրենց խայթվածքներով, այն բզեզներին, որոնց խայթոցները կսկծացնելով մտնում են նրանց մարմինների մեջ, այն մորեխներին, որոնք ավերում են մշակված դաշտերը, շանթի այն հարվածներին, որոնք ընկնում են երկնքից խոշոր կարկտահատերով, մեր նախորդ բացատրությունների հաջորդականությանը հետևողներից ոչ մեկը դժվարություն չի ունենա գտնելու այն իմաստը, որը պատշաճում է սրանցից յուրաքանչյուրին: 86. Այս բոլոր հարվածները տեղի են ունեցել գլխավորաբար եգիպտացիների ազատության պատճառով և գործադրվել Աստծու անբեկանելի արդարության կողմից, հարվածներ, որոնց արժանի են եղել նրանց այդ ազատությունները: Պատմության տառից կառչելով՝ չմտածենք դարձյալ, որ Աստված ինքն է եղել պատճառն այն մարդկանց տառապանքների, որոնք արժանացել են դրանց, այլ յուրաքանչյուր ոք ինքն է իր վրա հասած դժբախտությունների պատճառը՝ իր սեփական կամքով ամեն ինչ անելով, որպեսզի իր վրա հրավիրի այդ դժբախտությունները՝ ըստ առաքյալի այն խոսքի, որն ասում է այդ կարգի մարդկանցից մեկին․«Քո խստասրտությամբ և անզիղջ հոգով ինքդ քեզ վրա բարկություն ես կուտակում Աստծու բարկության և նրա արդար դատաստանի հայտնության օրվա համար, Աստծու, որ կհատուցի յուրաքանչյուրին՝ ըստ իր գործերի» (Հռոմ. 2, 5): 87. Արդարև, եթե անկարգ կենցաղի պատճառով մաղձալից և չարորակ մի հյութ կազմվի մարդուս աղիների մեջ, և եթե բժիշկն այն արտաքսի ործացուցիչ մի դեղի միջոցով, ոչ թե բժիշկն է մեղադրվելու այն բանի համար, որ մարմնի մեջ այդ վատ նյութն է ներարկել, այլ՝ հիվանդի սեղանի ծայրահեղ ճոխությունը՝ բժիշկն ինքը միայն արտաքսած լինելով այդ հյութը․ Նույնպես երբ ասում են, թե Աստված ցավառիթ ծանր մի պատժի է արժանացնում նրանց, որոնք ի չարն են գործադրում իրենց ազատությունը, միանգամայն հասկանալի է, որ նրանց այդ տառապանքների սկզբնավորությունն ու պատճառը գտնվում են հենց իրենց մեջ: 88. Արդարև, ով որ ապրել է առանց մեղք գործելու, նա չի ճանաչելու ո՛չ խավար, ո՛չ որդ, ո՛չ գեհեն, ո՛չ կրակ և նման սարսափելի պատուհասներից ոչ մեկը: Պատմությունն ինքը ցույց է տալիս, որ Եգիպտոսի հարվածները չվերաբերեցին եբրայեցիներին: Ուրեմն, եթե նրանք միևնույն պայմաններում գտնվելով հանդերձ՝ եգիպտացին չարի զոհ է լինում, իսկ եբրայեցին՝ ոչ, և եթե նրանք միայն իրենց ազատ կամքի տարբերությամբ են զատորոշվում իրարից, ապա պետք է ընդունել, որ առանց մեր հավանության ոչ մեկ չար բան չի կարող առաջ գալ:

89. Բայց առաջ գնանք տեքստի շարունակության մեջ՝

հիշելով այն, ինչ նախապես բացատրեցինք, թե ինչպես Մովսեսը (նաև նա, ով նրա օրինակով բարձրանում է առաքինության ճանապարհին), երբ նրա հոգին երկարատև ջանադրությամբ և վերևից եկած ներքին լուսավորությամբ զորացավ լեռան վրա երկնային կյանքով ապրելու համար, մտածում է, որ իր կողմից անարդարություն կլիներ իր հայրենակիցների գլուխը չանցնել՝ նրանց դեպի ազատություն առաջնորդելու համար: 90. Գալով և գտնելով նրանց՝ նա աշխատում է իր ազգակիցների մեջ արթնացնել ազատության սերը՝ հիշեցնելով նրանց այն դժբախտությունները, որոնց ենթարկվում են: Այն ժամանակ իր ազգակիցներին այդ թշվառությունից դուրս բերելուց առաջ նա մահվամբ պատուհասեց եգիպտացիների բոլոր անդրանկածիններին. այն օրինակը, որ նա մեզ տալիս է այդ արարքով, այն է, թե չարը պետք է կործանել հենց իր ծնունդից, որովհետև հնարավոր չէ այլապես Եգիպտոսում այդ կյանքից խուսափել: 91. Ինձ թվում է, թե օգտակար կլինի այս դրվագի վրայից չանցնել հենց այնպես՝ առանց այդ մասին մտածելու: Արդարև, հիշատակված եղելություններին ինչպե՞ս տալ մի մեկնաբանություն, որ արժանի լինի Աստծուն: Մեղավորը եգիպտացին է, իսկ նրա փոխարեն իր նորածին երեխան է պատժվում, նա, ում մատաղ տարիքը թույլ չի տալիս դեռևս զանազանել բարին չարից, և ում կյանքը չի ներկայացնում ոչ մի վատ ցանկություն կամ կիրք: Հիրավի, մանուկը չգիտե, թե ինչ բան է հեշտասիրությունը, չգիտե տարբերել իր աջը ձախից, նա իր աչքերը բարձրացնում է միայն իր ծծմորը, իր ցավի արտահայտության միակ միջոցը իր արցունքներն են, և եթե ձեռք է բերում ինչ-որ բան, որ իր բնությունն էր ցանկանում, նա իր գոհունակությունն ու հաճույքը ցույց է տալիս ժպիտով: Եվ մտածել, որ այդ երեխա՛ն պիտի կրի իր հայրական



հանցանքների պատիժը ... Ո՞ւր է արդարությունը: Ո՞ւր է բարեպաշտությունը: Ո՞ւր է սրբությունը: Ո՞ւր է Եզեկիելի աղաղակը՝ «Մեղավորի հոգին է լինելու մեռնողի հոգին» և՝ «Որդին ոչինչ չի կրելու իր հոր անիրավությունից»: Ուրեմն այդ դեպքում պատմությունը հակառակո՞ւմ է բանականությանը: 92. Ուրեմն իրավացիորեն ենք դառնում դեպի հոգևոր մեկնաբանությունը այն դատողությամբ, որ այդ եղելությունները տեղի են ունեցել խորհրդանշական իմաստով, և որ դրանցով Օրենսդիրն ուզեցել է մեզ առաջարկել մի ուսուցում: Ո՞րն է այստեղ այդ ուսուցումը: Այն, որ ով ձեռնամուխ է լինում առաքինության պայքարին ընդդեմ ինչ-որ վատ հակումի, պետք է խորտակի մարդու հոգում խլրտացող վատ շարժումները իրենց ծննդից իսկ: 93. Արդարև, խորտակելով դրանք հենց սկզբից՝ դու միանգամայն վերացնում ես այն, ինչ կարող էր հաջորդել դրանց, ինչպես որ Տերը դա ուսուցանում է Ավետարանում, երբ հրավիրում է մեզ (չարահամբավ եգիպտացիների առաջնածինների սպանությանը հրավիրող գրեթե նույն խոսքերով)՝ խորտակելու մոլեկան ցանկասիրությունն ու բարկությունը, որպեսզի այլևս բնավ վախ չունենանք ո՛չ շնության պղծությունից և ո՛չ էլ մարդասպանության ոճրից. արդարև, սրանք առաջ չեն գա, եթե բարկությունը չհանգի մարդասպանության և ցանկասիրությունը՝ շնության: 94. Ուրեմն նա, ով երեխաներ է ծնում չարության նպատակով, ծնում է ցանկասիրություն շնությունից առաջ և բարկություն՝ ոճրից առաջ, և նրա համար առաջնածին վերացնելը կլինի միաժամանակ արմատապես վերացնել հաջորդ ծնունդը: Սա նման է օձ սպանելուն. երբ հարվածում ես գլխին, դու միաժամանակ սպանում ես նրա ամբողջ սողացող մարմինը,որ հաջորդում է դրան:

95. Բայց եգիպտացիների անդրանկածինների այդ սպանությունը տեղի ունեցավ միայն նրա համար, որ մեր տների մուտքերին թափվել էր Ոչնչացնողին խոտորեցնող արյունը։ Սակայն եթե ուզում ենք ավելի ճշգրիտ կերպով ըմբռնել տեքստում արտահայտված իմաստը, պատմությունն ինքը դա հասկացնում է մեզ թե՛ անդրանկածինների մահով և թե՛ տների՝ արյամբ կնքված մուտքով. այնտեղ առաջին վատ շարժումն է, որ խորտակվում է, այստեղ մեր մեջ չարի առաջին ներթափանցումն է, որ հեռացվում է ճշմարիտ Գառան միջոցով։ Արդարև, ինչ-որ հնարքով «Սատակիչին» դուրս չես կարող վտարել, երբ նա արդեն քո ներսում է գտնվում, բայց Օրենքը մեզ սովորեցնում է հենց սկզբից նախազգուշություններ ձեռք առնել՝ թույլ չտալու համար, որ նա ներս սողոսկի։ Ահա այս նախազգուշություններն է ներկայացնում դռան «բարավորի և դրանդիների վրա» տարածված Գառան արյունը։

96. Դրանով Սուրբ Գիրքը պատկերավոր ձևով մեզ տալիս է Հոգու բնության վերաբերյալ մի ուսուցում, որ իր հերթին հայտնաբերել է հեթանոսական փիլիսոփայությունը, երբ Հոգին բաժանում է երեք մասի ՝ բանական, ցանկասեր և ցասկոտ. այս վերջին երկու մասերը, ասում է նա, ստորադաս են և հետևաբար յուրաքանչյուր կողմից իրենց վրա են կրում Հոգու բանական մասը. այս մասը իր սանձափոկերով բռնում է նրանց, կառավարում և քշում առաջ. ցասկոտ մասի ախորժակը ոգևորում է նրան և մղում դեպի քաջություն, իսկ ցանկասեր մասի ախորժակը նրան բարձրացնում է վեր՝ դեպի բարու մասնակցություն։ 97. Այնքան ժամանակ, քանի դեռ Հոգին պահում է այս դիրքը՝ իր տեղում ամրորեն հաստատված ներդաշնակ շարժումներով, ինչպես իր երկու կոճերով, ամբողջի մեջ կա համագործակցություն երեք մասերի բարիքի համար՝ բանականությունը ինքնին ապահովելով ստորին երկու մասերի անվտանգությունը և փոխարենը՝ հավասար բարիքներ։ 98. Բայց եթե այս կարգը շրջվում է, և վերևում եղածը անցնում է ներքև, այնպես որ բանականությունը, ընկնելով ցանկասեր և ցասկոտ ախորժակների տակ, ոտնակոխ լինի նրանց կողմից, ապա Սատակիչը թափանցում է ներս, քանի որ արյունն այլևս այնտեղ չէ՝ հակադրվելու համար նրա մուտքին, այսինքն՝ հավատը Քրիստոսի հանդեպ այլևս այնտեղ չէ՝ կռվում պաշտպանելու համար այդ կերպ դիրքավորված հոգիները։ 99. Արդարև, պատվիրված է նախ արյամբ օծել բարավորը, այնուհետև մեկ և մյուս կողմից դրանով ծեփել դրանդիները։ Արդ, ինչպե՞ս նախ օծել վերևում եղածը, եթե նա այլևս իր տեղում չէ։

100. Եթե առաջնածինների մահը և արյան հեղումը՝ երկուսն էլ չեն վերաբերում իսրայելացիներին, ապա մի՛ զարմացիր և դրա համար կասկածի տակ մի՛ դիր մեր տված մեկնաբանությունը՝ դրանք վերագրելով վատ շարժումների վերացմանը, ասես դա ճշմարտությանը հակառակ մի հնարանք լիներ։ Արդարև, իրականում եգիպտացի և իսրայելացի տարբեր անունները մեր կողմից ըմբռնվեցին որպես առաքինության և արատի տարբերություն։ Ուրեմն, եթե մենք սկզբունքով ընդունում ենք, որ իսրայելացին ներկայացնում է առաքինությունը, ապա բնական է, որ նրա զավակների առաջին ծնունդները չէ, որ պիտի աշխատենք վերացնել, այլ՝ նրանց, ում զարգացումը օգտակար է արգելել։ 101. Աստված իրավացիորեն մեզ սովորեցնում է նաև, որ պետք է սպանել եգիպտացիների զավակների առաջնածիններին, որպեսզի չարը անէանա հենց իր ծննդից։ Եվ մեր մեկնաբանությունը բառացիորեն համահունչ է դրան. իսրայելացիների որդիները պահպանվում են արյան հեղումով, որպեսզի բարին իրագործվի կատարելապես, մինչդեռ

Ելքը Եգիպտոսից

այն, որ, չափահաս դառնալով, պիտի կազմեր եգիպտացի ժողովուրդ, վերանում է ՝ նախքան չարը կհասնի իր հասունացմանը:

102. Հաջորդող հատվածը շատ լավ է համապատասխանում Սուրբ Գրքի մեր միստիկական մեկնաբանությանը: Արդարև, Սուրբ Գիրքը պատվիրում է մեզ ուտել այն միսը, որից արյուն դուրս եկավ, և որը երևալով դռների վրա՝ հեռացրեց եգիպտացիների առաջնածիններին Ոչնչացնողին: 103. Այս սնունդը պետք է ընդունենք ժուժկալությամբ և արագ՝ ի տարբերություն այն սննդին, որ տեսնում ենք սեղանի հաճույքներին անձնատուր եղող մարդկանց մոտ. սրանց ձեռքերն ազատ են, հագուստները թափվում են իրենց վրայից, ոտքերն արձակված՝ ամեն տեսակ ոտնամաններից. ընդհակառակը, այստեղ ոտքերը կոշիկների մեջ են, մեջքը սեղմող մի գոտի հավաքում-պահում է պատմուճանի ծալքերը, ձեռքում մի գավազան՝ հեռացնելու համար շներին: 104.Այսպես զգեստավորված՝ նրանք ընդունում են իրենց սնունդը առանց խոհարարական ճոխ հարդարանքների, հանպատրաստից և հապճեպ դրված բախտի պատահական կրակի վրա: Հրավիրվածներն շտապ ճաշակելու են այն, մինչև որ սպառվի կենդանու ամբողջ մարմինը: Ոսկորների վրա չեն թողնելու ոչ մի բան, որ ուտվում է, բայց դրանց ներսում եղածին չեն դիպչելու: Արդարև, արգելվում է փշրել կենդանու ոսկորները, բայց ճաշի մնացորդները պետք է այրվեն կրակով:

105. Այս բոլորը լավագույնս ցույց է տալիս, որ գրվածքի բառացի իմաստը մեզ պետք է առաջնորդի ավելի բարձր մի իմաստի, քանզի Օրենքը չի եղել՝ մեզ սովորեց-



նելու համար ուտելու ձևը (բնությունն այստեղ բավարար առաջնորդ է, որը մեր մեջ դրել է ուտելու ախորժակ), այլ դրանով մեզ հայտնելու ուրիշ բան: Հիրավի, ինչ վերաբերում է առաքինությանը կամ արատին, ի՞նչ նշանակություն ունի, թե մարդ ինչ ձևով է ընդունում իր սնունդը՝ գոտին սեղմվա՞ծ, թե՞ քանդված, ոտքերը մե՞րկ, թե՞ կոշիկները հագած, ձեռքում գավազա՞ն բռնած, թե՞ այն մի կողմ դրած: 106. Ճանապարհորդական այս կեցվածքի հոգևոր իմաստը, ընդհակառակը, շատ թափանցիկ է. այն հստակորեն մեզ հասկացնում է, որ մենք միայն անցնում-գնում ենք այս աշխարհում՝ մեր ներկա կյանքն անցկացնելով այստեղ մեր գոյության ընթացքում. հազիվ ծնված ՝ կյանքի օրենքը մեզ քշում-հրում է դեպի ելքը: Հետևաբար պետք է հանդերձել մեր ձեռքերն ու ոտքերը և տակավին պատրաստել այն ամենը, ինչ անհրաժեշտ է ապահովելու համար մեր ճանապարհորդությունը:

107. Արդարև, որպեսզի մեր մերկ և անպաշտպան ոտքերը չվիրավորվեն այս կյանքի փշերից (փշեր ասելով՝ ես հասկանում եմ մեղքերը[40]), պետք է հագնել բիրտ և դաժան կյանքի խորհրդանիշը հանդիսացող դիմացկուն կոշիկներ, որոնք բթացնում են փշերի խայթոցները և արգելում, որ մեղքը ներս սպրդի անտեսանելի մի փոքր բացվածքից: 108. Ոտքերի շուրջբոլորը փոթ-փոթ լայնացող և մինչև գետին իջնող պատմուճանը համարվում է տանջանք նրա համար, ով շտապում է առաջ ընթանալ սրբության ճանապարհի վրա. համատեքստում այն կարելի է նաև հասկանալ որպես աշխարհային բարիքների վայելքի մեջ մեղկացում, որ ժուժկալությունը, որը պատկերված է ճանապարհորդի գոտիով, սեղմում-ամփոփում է: Որ գոտին ժուժկալության խորհրդանիշ է, ապացուցվում է նրանով, որ այն սեղմված է երիկամների շուրջը: Իսկ գավազանը, ո-

Եգիպտոսի հարստությունները

րը գործածվում է վայրի գազաններին հեռացնելու համար, այն հույսն է, որի վրա հենվում է մեր հոգնած հոգին, և որը ծառայում է մեզ՝ փախուստի մատնելու նրան, ով մեզ հալածում է հաչոցներով[41]:

109. Կրակի վրա հապճեպ պատրաստված կերակուրը այն ջերմ և ուժեղ հավատն է, որով մենք սնվում ենք առանց հապաղելու՝ ուտելով մեզ տրվող ամեն բան, որ պիտանի է ուտելու, և մի կողմ թողնելով այն, որի իմաստը ծածկված է ավելի ծանր և ավելի դժվարին մտքերի տակ՝ առանց ջանք թափելու դրանց վրա, ոչ էլ հետաքրքրություն ցուցաբերելու դրանց նկատմամբ: 110. Լուսաբանելու համար այս պատկերները՝ ասենք, որ աստվածային ուսուցումների մեջ մի քանիսն ունեն ուղիղ իմաստ. պետք չէ դրանք ընդունել ծուլորեն և մեր կամքին հակառակ, այլ պետք է անհագորեն սնվել դրանցով ագահ մարդկանց նման, որոնց անհրաժեշտ է այդ սնունդը առողջ լինելու համար: Մյուս կողմից՝ կան վարդապետություններ, որոնք մթին են, ինչպես, օրինակ, այն հարցը, թե ի՛նչ է Աստծու էությունը, կամ ի՛նչ կար արարչագործությունից առաջ, ի՛նչ կա արտաքին երևույթներից դուրս, ի՛նչ անհրաժեշտություն է տնօրինում եղելությունները և այս կարգի բոլոր բաները, որոնց մեջ աշխատում է թափանցել մարդու հետաքրքրասեր միտքը[42]: Սուրբ Հոգուն թողնենք միայն այս բաների ճանաչումը, նրան, «որ խորաքննում և խուզարկում է Աստծու խորությունները», ինչպես ասում է Պողոս առաքյալը, 111. որովհետև Սուրբ Գրքին մոտիկից ծանոթ եղող մարդկանցից ոչ ոք անտեղյակ չէ, որ այնտեղ կրակը հաճախ ներկայացնում է Սուրբ Հոգին: Նույն գաղափարը մենք գտնում ենք Սողոմոն Իմաստունի կողմից տրված խրատի մեջ. «Մի՛ ջանա հարմարվել այն բանին, որը շատ ուժեղ է քեզ համար», այլ խոսքով՝ մի՛ փշրիր



Սուրբ Գրքի ոսկորները, քանզի «ծածուկ բաները օգուտ չունեն քեզ համար»:

112. Ուրեմն ահա թե ինչպես Մովսեսը Եգիպտոսից դուրս հանեց իր ժողովրդին. տեքստը պարզ կերպով մեզ ցույց է տալիս, թե ամեն մարդ, որ Մովսեսի հետքերով է քայլում, եգիպտացիների գերությունից ինչպես պետք է ազատի բոլոր նրանց, ում առաջնորդում է Բանը: Այսուհանդերձ նշենք, որ նրանք, ովքեր, առաջնորդվելով Նրա կողմից, առաջ են ընթանում առաքինության ճանապարհով, զրկված պետք չէ լինեն Եգիպտոսի հարստություններից և ոչ էլ արհամարհեն օտարների ունեցվածքը, այլ պետք է վերցնեն իրենց թշնամիներին պատկանող ամեն բան և պահեն դրանք որպես փոխառություն: Ահա այս է, որ Մովսեսն իր ժողովրդին պատվիրում է անել: 113. Բնականաբար թող ոչ ոք բառացի իմաստով չվերցնի սա և մեծ օրենսդրին չվերագրի այն դիտավորությունը, թե նա իր ժողովրդին պատվիրել է հարուստներին կողոպտել և նրան մղել անարդարության: Հնարավոր չէ մաքուր խղճով ասել, որ օրենսդիրն այս բանը պատվիրում է նման մի դիտավորությամբ. բավական է միայն մի հայացք գցել այն օրենքների վրա, որոնք հաջորդում են «մի՛ գողացիր» պատվիրանին և որոնք մեկ ծայրից մյուսը պատվիրում են ետ կանգնել մերձավորի նկատմամբ անարդարություն գործելուց: Ասել, թե կարող էր նրան բնական թվալ, որ այդ միջոցով հրեաները եգիպտացիներին հատուցել տված կլինեին իրենց ծանր աշխատանքի վարձը, սա նույնպես չի վերացնի դժվարությունը, 114. այդպես մտածելը երբեք չէր արդարացնի սուտն ու խորամանկությունը մեղադրող նրա պատվիրանը: Ար-

Ամպի սյունը

դարև, ուրիշից փոխ առնել ինչ-որ բան և այն չվերադարձնել նրան, եթե այդ բանը ուրիշին է պատկանում, նշանակում է գողություն անել. եթե այդ բանը քեզ է պատկանում, ապա դա խաբեբայություն կլինի, քանի որ փոխատուին ստել ես՝ հույս տալով նրան, թե այն կվերստանա:

115. Ուրեմն պատշաճ է մի կողմ թողնել հատվածի բառացի իմաստը հօգուտ հոգևոր իմաստի և դրա մեջ տեսնել Սուրբ Գրքի մեկ հրամանն՝ ուղղված այն մարդկանց, որոնք ուզում են ազատության հասնել առաքինության միջոցով, տիրանալ նմանապես մշակույթի հարստություններին, որոնցից օգտվում են հեթանոսները, ինչպես՝ բարոյական փիլիսոփայությունն ու բնափիլիսոփայությունը, երկրաչափությունն ու աստղագիտությունը, դիալեկտիկան և մնացած բոլոր գիտությունները, որոնք մշակվում են հեթանոսների կողմից: Մեր առաջնորդը մեզ պատվիրում է որպես փոխառություն վերցնել այդ հարստությունները եգիպտացիներից, որոնք ունեն դրանք, և պատեհ առիթով օգտագործել այդ հարստությունները որպես օգտակար գիտելիքներ, երբ պետք է լինում Հայտնության աստվածային սրբարանը զարդարել իմացության գանձերով[43]: 116. Արդարև, մենք տեսնում ենք այս «կողոպուտների» վրա իրենց ձեռքը դրած մարդկանց, որոնք դրանք բերում են Մովսեսին, երբ նա աշխատում է Վկայության Խորանի կառուցման վրա՝ այդպիսով յուրաքանչյուրն իր նպաստը բերելով սրբարանի շինության աշխատանքին: Մենք տեսնում ենք, որ այս բանը տեղի է ունենում նաև մեր օրերում. շատերը, որպես ընծա, Աստծու Եկեղեցուն են բերում իրենց աշխարհիկ մշակույթը, ինչպես հռչակավոր Բարսեղը, որն իր երիտասարդության ժամանակ Եգիպտոսում կուտակած իր ամենագեղեցիկ գանձերը նվիրեց Աստծուն, որպեսզի դրանցով զարդարվի այն ճշմարիտ խորանը, որ Եկեղեցին է:



117. Բայց մենք պետք է վերադառնանք այն կետին, ուր գտնվում էինք: Այն հոգիները, որոնք նվիրված են առաքինությանը իրենց ապրելակերպով և հետևում են Օրենսդրին, երբ հեռանում են Եգիպտոսի թագավորության սահմաններից, հետապնդվում և թիրախ են դառնում զանազան փորձությունների, որոնք նեղություններ, վախ և մահացու վտանգներ են պատճառում իրենց: Այս փորձությունները սարսափ են գցում հավատի մեջ դեռ նոր հաստատված մարդկանց հոգում՝ իրենց փնտրած բարիքներին հասնելու ճանապարհին նրանց մատնելով կատարյալ հուսահատության: Բայց երբ Մովսեսը կամ որևէ մեկն այն մարդկանցից, որոնք նրա նման պատրաստ են հանձն առնելու ժողովրդին առաջնորդելու գործը, հանդիպի նրանց, նա իր խորհուրդները կհակադրի նրանց մտահոգություններին և նրանց ընկճված հոգին կզորացնի աստվածային օգնության հույսով: 118. Այս բանը տեղի չէր ունենա, եթե առաջնորդի սիրտը չխոսեր Աստծու հետ: Արդարև, մեծ մասը նրանց, ում տրվել է այդպիսի մի իշխանություն, աշխատում է միայն, որ ապահովի արտաքին հրամանը: Գալով ծածուկ բաներին, որոնք տեսնվում են միայն Աստծու կողմից, նրանք բնավ հաշվի չեն առնում այդ բաները: Այդպիսին չէր սակայն Մովսեսի պարագան. մինչ նա իսրայելացիներին հորդորում էր քաջալերվել, թեև արտաքնապես Աստծուն ոչ մեկ խոսք չէր ուղղել, Աստված ինքը վկայում է մեզ, որ «Նա աղաղակեց իրեն»: Դրանով Սուրբ Գիրքը, կարծում եմ, մեզ սովորեցնում է, որ հնչեղ խոսքը, որը բարձրանում է մինչև Աստծու ականջները, այն աղաղակը չէ, որն արտադրվում է ձայնի առավելագույն ճիգով,

Անցում Կարմիր ծովից

այլ այն աղոթքը, որը բարձրանում է մաքուր սրտից:

119. Նրա համար, ով հասկանում է դա, շատ հստակ է, որ այնուհետև «եղբոր» օգնությունը այնքան էլ օգտակար չի լինի այն պայքարների համար, որոնք սաստկանում են. եղբայր ասելով՝ ես հասկանում եմ նրան, ով Աստծու հրամանով եկել էր Մովսեսին ընդառաջ, երբ նա իջնում էր Եգիպտոս, և որտեղ մենք տեսանք մի հրեշտակի խորհրդանշանը: Բայց ահա գերագույն էակն է, որ հայտնվում է՝ իր հայտնությունը պատշաճեցնելով այն ընդունողի կարողությանը: Ինչ-որ պատմությունից մենք իմանում ենք, թե կատարվել է մի ժամանակ, դրա հոգևոր մեկնաբանությունը մեզ ցույց է տալիս, որ այն մի՛շտ է կատարվում: 120. Արդարև, ամեն անգամ, երբ մեկը փախչում է եգիպտացուց և հասնելով նրա երկրի սահմաններից դուրս՝ սարսափում է վերահաս փորձությունների հարձակումներից, նրա առաջնորդը սովորեցնում է նրան սպասել վերևից գալիք անհուսալի օգնությանը, երբ որ թշնամին, իր բանակով շրջապատելով փախստականին, ստիպում է նրան ճանապարհ բաց անել ծովում: 121. Ծովից անցման ժամանակ նրան առաջնորդում է «ամպը». այս բառը, որը ցույց է տալիս առաջնորդին, մեր նախորդների կողմից իրավամբ մեկնաբանվել է որպես Սուրբ Հոգու շնորհը, որն արդարներին առաջնորդում է դեպի բարին: Ով հետևում է նրան, հաջողում է անցնել ջրից: Նրա առաջնորդը այդ ջրի միջից մի անցուղի է բացում և այդպիսով ապահովում նրա ազատագրումը՝ ծովի միջոցով ոչնչացնելով թշնամուն, որը հետապնդում էր նրան՝ գերեվարելու համար:

Ամեն մարդ, որ հասկանում է այս բանը, բնականաբար հասկանում է, թե ինչ է ջրի այս խորհուրդը, որի մեջ իջնում ես թշնամիների ամբողջ բանակով և որի միջից դուրս ես գալիս մենակ՝ թողնելով թշնամիների բանակը ջրերի մեջ խորասուզված[44]: 122. Արդարև, ո՞վ չի հասկանում, որ եգիպտացիների բանակը (բաղկացած «ձիերից, մարտակառքերից և դրանք ղեկավարող մարդկանցից»՝ նետաձիգներից, պարսավորներից, հեծյալ զորականներից և թշնամու մեծաթիվ բանակի մնացորդներից) հոգու այն բազմատեսակ կրքերն են, որոնց գերի է դարձել մարդը[45]: Հիրավի, ի՞նչ կա ավելի նման այդ բանակին, քան զայրույթի զգացումները կամ հաճույքի, տխրության և ագահության մղումները մարդու հոգու մեջ: Նախատինքն իրոք պարսատիկով արձակված մի քար է, իսկ նիզակի սուր և թրթռուն ծայրը՝ զայրույթի դողէրոցքը: Այս ձիերը, որոնք կատաղի թափով քաշում են մարտակառքերը, հասկանալի է, որ դրանք վայելքի, հեշտասիրության կրքերն են: 123. Գալով մարտակառքերի վրա բարձրացած երեք մարդանց, որոնց քշում-տանում են այդ մարտակառքերը, դու, արդեն ծանոթ լինելով բարավորի և դրանդիների խորհրդանշանին, նրանց մեջ կճանաչես երեք մասերի բաժանված հոգին՝ բանական, ցանկասեր և դյուրաբորբոք հոգին: 124. Ահա այս բաները և սրանց մերձավոր մյուս բոլոր բաները, վատ հարձակումը առաջնորդող ղեկավարի հետ միասին, իսրայելացիների հետևից գահավիժում են ջրի անդունդը: Բայց ջուրը հավատի գավազանի և լուսավոր ամպի առջև, որոնք նախորդում են դրան, դառնում է կենդանարար սկիզբ նրանց համար, ովքեր ապաստան են փնտրում նրա մեջ, նաև մահվան սկիզբ՝ նրանց հետապնդողների համար[46]:

125. Սրանով պատմությունը մեզ ուսուցանում է նաև, որ այն մարդիկ, որոնք կտրում-անցնում են ջուրը, թշնամու բանակից ոչ մի բան չպետք է քարշ տան իրենց հետ

ջրից դուրս գալուց հետո: Արդարև, եթե թշնամին նրանց հետ վերստին բարձրանա ջրից, ապա նրանք կմնան նրա ստրուկները նույնիսկ ջրից դուրս գալուց հետո. չէ՞ որ նրանք բռնակալին ողջ են պահել փոխանակ նրան անդունդը գլորելու: Եթե սրա ծածուկ իմաստը դուրս բերենք, սա նշանակում է, որ բոլոր նրանք, ովքեր անցնում են մկրտության խորհրդանշական ջրից, պետք է ջրի մեջ սպանեն իրենց դեմ պատերազմ մղող արատների ամբողջ բանակը, ինչպես՝ ագահությունը, պիղծ ցանկությունները, ավարառության ոգին, պարծենկոտության և գոռոզության զգացումները, բռնության մղումները, բարկությունը, ոխակալությունը, չարակնությունը, նախանձը և մյուս կրքերը, որոնք, բնականաբար, ինչ-որ ձևով ուղեկցում են մեր բնությանը՝ դրանք լինեն հոգու վատ մղումները կամ դրանց հետևանքը եղող արարքները:126. Այդպես է նաև սուրբ Զատկի խորհուրդը (սա այն զոհի անունն է, որի արյունը մահից զերծ է պահում նրանց, ովքեր գործածում են այն).ուրեմն, ինչպես որ այս խորհրդի մեջ օրենքը պատվիրում է Զատկի հետ ուտել «բաղարջ» հացը (բաղարջը այն հացն է, որը խառնված չէ հին թթխմորին ) և այդպիսով հասկացնել է տալիս մեզ, որ մեղքի ոչ մի մնացորդ չպետք է խառնվի նոր կյանքին[47],այլ այդ կյանքին պետք է տալ սեփական մի սկիզբ՝ խզելով չարի խափանարար գործունեության տևականությունը բարուն դառնալու միջոցով, այնպես էլ այստեղ ամեն եգիպտացու, այսինքն՝ ամեն տեսակի մեղք պետք է ընկղմել փրկության ավազանի, ինչպես մի անդունդի մեջ և այնտեղից նրան դուրս բերել մենակ՝ նրա կյանքում չպահելով օտարոտի ոչ մի բան: Այս է, որ մեզ հասկացնում է պատմությունը՝ ասելով, որ նույն ջրում թշնամին և բարեկամն ունեն տարբեր ճակատագիր. մեկն այնտեղ գտնում է իր մահը, մյուսը՝ իր կյանքը:



127. Ինչպես որ շատերն այն մարդկանցից, որոնք արժանացել են մկրտության խորհրդին, բայց անգիտանալով Օրենքի պատվիրանները՝ մեղքի հին թթխմորը խառնում են իրենց նոր կյանքին, նույնպես այդ մարդիկ, նույնիսկ ծովից անցնելուց հետո, իրենց հետ բերում են կենդանի մնացած եգիպտական բանակը և խառնում իրենց բարքերին:

128. Արդարև, ով մկրտության խորհուրդն ստանալուց առաջ հպարտացել է գողությամբ կամ անարդարությամբ, կամ կեղծ երդումով ձեռք է բերել մի կալվածք, կամ արտամուսնական կենակցությամբ ապրում է մի կնոջ հետ և կամ հիմարությունն է ունեցել ինչ-որ արգելված մի գործ կատարելու, կարծո՞ւմ է արդյոք, որ մկրտված լինելու ուրախության մեջ ապրելով (ուրախություն, որին արժանի չէր բնավ)՝ այլևս ազատված է մեղքի գերությունից: Նա չի՞ անդրադառնում, թե ինքը մշտապես մնում է կռացած իր բռնակալների լծի տակ: 129. Հիրավի, դաժան և ամեհի մի տիրակալ է բղջախոհությունը. Նա գերեվարված մարդկանց հոգիները խթանում է իր պատճառած զգայական հաճույքներով, ինչպես և իր մտրակներով: Նույն կարգի մի ուրիշ բռնակալ է նաև ագահությունը. Նա ոչ մի հանգստություն չի տալիս իր ստրուկին, որն ինչքան էլ աշխատի հնազանդվել իր տիրոջ հրամաններին, միևնույն է, իր ուզածը ձեռք բերելու ցանկությունը նրան միշտ քաշում-տանում է ավելի հեռու: Թվարկել մյուս բոլոր վատ հակումները՝ կնշանակեր թվարկել նույնքան բռնավոր տիրակալների: Եթե հնազանդվես դրանց, նույնիսկ ծովը կտրել-անցնելուց հետո, ապա, ըստ իս, դա կնշանակի, թե տակավին չես մոտեցել մկրտության խորհրդական ջրին, որի արդյունքը չարի բռնակալության խորտակումն է:

Կայանները անապատում

130. Բայց վերադառնանք տեքստի շարունակությանը և առաջ գնանք: Ով որ անցավ ծովի միջից (այն իմաստով, ինչ իմաստ մենք տվեցինք այդ անցումին) և տեսավ, թե ինչպես այնտեղ կորստյան մատնվեց եգիպտացին, նա այլևս չի նայում միայն Մովսեսին, այլ, ինչպես ասում է տեքստը, էապես «վստահում է Աստծուն»՝ հնազանդվելով հանդերձ նաև «Մովսեսին, որպես նրա ծառային»: Մենք տեսնում ենք նույն բանը, որ տեղի է ունենում նաև նրանց համար, որոնք ճշմարտապես անցել են ջրից. նվիրվելով Աստծուն՝ «նրանք խոնարհությամբ հնազանդվում են նաև» նրանց, որոնք քահանայական ուխտով ստացել են աստվածային բաները խնամարկելու պաշտոնն՝ ըստ Առաքյալի խոսքի: 131. Կարմիր ծովի անցումից հետո հաջորդում է «երեք օրվա» մի ճանապարհորդություն, որի ընթացքում եբրայեցիները բանակ են դնում մի տեղում, ուր ջուր են գտնում, բայց այդ ջուրը հնարավոր չի լինում խմել իր դառնության պատճառով: Սակայն Մովսեսն իր գավազանը նետում է դրա մեջ, և ջուրը դառնում է քաղցրահամ, այնպես որ նրանք հագեցնում են իրենց ծարավը: 132. Այս եղելության բառացի իմաստը միանգամայն համապատասխանում է իրականությանը. ով թողել է Եգիպտոսի հաճույքները, որոնց գերին էր Կարմիր ծովն անցնելուց առաջ, նախ ընկնում է ծանր և տհաճ կյանքի մեջ՝ զրկված լինելով նրա ուրախություններից: Բայց եթե փայտը նետվում է ջրի մեջ, այսինքն՝ եթե մարդ հարում է հարության խորհրդին, որն սկզբնավորվեց փայտով (փայտ բառով անշուշտ դու հասկացար խաչափայտը), ապա առաքինի կյանքը դառնում է ավելի քաղցրահամ և ավելի զովացուցիչ, քան այն բոլոր քաղցրությունները, որոնց խա-



բուսիկ հաճույքը շոյում է զգայարանները: Այդ կյանքը մեզ տալիս է ճշմարիտ հաճույքը՝ մեր հոգին պարուրելով ապագա բարիքների հույսով[48]:

133.Ճանապարհորդության հաջորդ կայանը, որը գվարթության մթնոլորտ է ստեղծում իր արմավենիներով և աղբյուրներով, հանգստացնում է հոգնած ճանապարհորդներին:«Աղբյուրները», որոնք ունեն վճիտ և ընտիր ջուր, թվով «տասներկու» հատ են, իսկ արմավենիները՝ յոթանասուն. դրանք մեծ են և ժամանակի ընթացքում բարձրանալով շատ վեր՝ աճեցրել են փարթամ տերևներ: Հետևելով պատմության ընթացքին՝ ի՞նչ ենք բացահայտում այստեղ. այն,որ փայտի խորհուրդը, որը առաքինության միջոցով դառը ջուրը ծարավածների համար դարձնում է քաղցրահամ, մեզ առաջնորդում է դեպի տասներկու աղբյուրները և յոթանասուն արմավենիները, այսինքն՝ դեպի Ավետարանի ուսուցումը: 134. Տասներկու աղբյուրները տասներկու առաքյալներն են, որոնց այդ թվով ընտրել է Տերը հիշյալ առաքելության համար և նրանց միջոցով ժայթքեցրել իր խոսքը: Մարգարեներից մեկը նախապես արդեն հայտնել է, որ առաքյալների միջոցով է ժայթքելու շնորհը՝ ասելով.«Օրհնեցե՛ք Աստծուն ժողովարաններում, օրհնեցե՛ք Տիրոջը, որը ժայթքում է Իսրայելի աղբյուրներից»:Գալով յոթանասուն արմավենիներին՝ դրանք այն առաքյալներն են, որոնք, բացի տասներկու աշակերտներից, նվիրված են ամբողջ երկրի համար, և որոնց թիվը նման է մեր այս պատմության արմավենիների թվին[49]:

135. Բայց կարծում եմ, որ հարմար կլինի շտապ առաջ մղել մեր ուսումնասիրության ընթացքը՝ մեր տված այս մի քանի ցուցումներով հեշտացրած լինելով մյուս հանդրվանների իմացությունը նրանց համար, ովքեր դժվարություն էին կրելու դրանք հասկանալու համար: Այդ հանդր-

Մանանան

վանները ներկայացնում են առաքինությունները, որտեղ ամպի սյունին հետևողը ժամանակավորապես տեղավորվում և հանգստանում է իր ուղևորության ճանապարհին: Միջին հանգրվանների վրայից ցատկելով՝ կնշեմ միայն Ժայռի հրաշքը, ժայռ, որը լինելով ամուր և դիմացկուն՝ փոխվում է խմելու ջրի և տեսնում, որ իր կարծրությունը հալվում ու դառնում է ծորուն ջուր: 136. Այս հատվածը առանց դժվարության ընկալվում է իր հոգևոր իմաստով: Եգիպտացուն ծովի մեջ մեռած թողնելուց, փայտի միջոցով քաղցրահամ դառնալուց, մեծ հաճույքով առաքելական աղբյուրից հոգևոր ջուրն ըմպելուց և արմավենիների ստվերի տակ հանգստանալուց հետո, հոգին այնուհետև դառնում է ընդունակ մերձենալու Աստծուն: Արդարև, «Ժայռը (Պողոս առաքյալն է դա սովորեցնում մեզ) Քրիստոսն է», որը անմատչելի և կարծր է անհավատների համար, բայց բավական է միայն, որ հավատի գավազանը մոտեցվի նրան, նա դառնում է ծարավը հագեցնող քաղցրահամ ջուր, որը տարածվում է այն մարդկանց ներսում, ովքեր բացվում են նրան. «Ես և Հայրը,- ասում է նա,- կգանք և կբնակվենք նրա մեջ»:

137. Բայց ահա մի ուրիշ բան, որի կողքով չպետք է անցնել առանց այդ մասին խորհրդածելու. Կարմիր ծովը կտրել-անցնելուց, որպես առաքինության ուխտավորներ քաղցրահամ ջուրն ըմպելուց, աղբյուրների և արմավենիների մոտ սքանչելի օրեր անցկացնելուց, հոսուն ջրի վերածված Ժայռից իրենց պապակը հագեցնելուց հետո, այն մթերքները, որ նրանք Եգիպտոսից բերել էին իրենց հետ, պակասում են: Եվ այս կացության մեջ, երբ Եգիպտոսից



բերված մթերքներից ոչ մի օտար սնունդ չի մնում իրենց, երկնքից նրանց համար գալիս է մի սնունդ՝ միաժամանակ այլազան և միակերպ: Արդարև, այդ սնունդն իր տեսքով միօրինակ է, բայց նրա հատկությունները բազմազան են և ուղիղ համեմատական յուրաքանչյուր եբրայեցու ցանկության բնույթին:

138. Ի՞նչ ենք սովորում սրանից. այն, թե ինչպե՛ս պետք է մաքրվել եգիպտական և օտար կյանքից, այնպես որ հնարավոր լինի հոգու պարկը դատարկել եգիպտացիների կողմից պատրաստված ամեն տեսակ անմաքուր ուտելիքներից և այդպիսով մաքուր հոգով մեր մեջ ընդունել այն սնունդը, որն իջնում է երկնքից, ոչ թե այն սերմը, որ հերկագործությամբ է առաջ եկել, այլ առանց վարուցանքի և առանց հերկ ու հարկիքի ստացված պատրաստի հացը, որն իջնում է վերևից և գտնվում երկրի վրա: 139. Դու հասկանում ես, թե ո՛րն է ճշմարիտ սնունդը, որի պատկերն է ներկայացնում այդ դրվագը: «Երկնքից իջած այս հացը» ինչ-որ անմարմին բան չէ. արդարև, ինչ որ ամնարմին է, ինչպե՞ս կարող է սնունդ դառնալ մեր մարմնի համար: Արդ, ինչ որ անմարմին չէ, անսխալականորեն մարմին է: Բայց այս հացի մարմինը ո՛չ սերմերն են և ո՛չ էլ դրանք առաջ բերող հերկերը, այլ՝ այն հողը, որն, անփոփոխ մնալով, ծածկվել է այն աստվածային սնունդով, որով հաղորդվում են նրանք, ովքեր քաղցած են: Սա Աստվածամոր խորհուրդն է, որը նախապես մեզ ուսուցանվել է այս հրաշքով: 140. Այս հացը, որ հողի արդյունքը չէ, նաև խոսք է[50]: Այս հացը, ինչպես նշեցինք, իր բազմազան հատկությունների շնորհիվ իր զորությունը պատշաճեցնում է այն մարդկանց տրամադրվածություններին, որոնք ընդունում են այն: Արդարև, նա գիտե ոչ միայն լինել հաց, այլ նաև դառնալ կաթ, միս, բանջարեղեն և ամեն ինչ, որ կարող է լավա-

գույնս հարմարվել և ընտելանալ այն ընդունողների ճաշակին: Այս է, որ մեզ սովորեցնում է աստվածային Պողոս առաքյալը, որը մեզ տրամադրում է մի կերակուր՝ իր խոսքը դարձնելով «միս»՝ կատարյալ և առողջ մարդկանց համար, «բանջարեղեն»՝ տկարների համար և «կաթ»՝ փոքր երեխաների համար:

141. Այն ամենը, ինչ պատմությունը հիշատակում է մեզ այս հրաշալի սննդի մասին, մի ուսուցում է հոգևոր կյանքի վերաբերյալ: Ասվում է, որ անապատում գտնվողներից յուրաքանչյուրը տեսնում էր, որ իրեն ներկայացվում է սննդի հավասար մի բաժին՝ այն հավաքող մարդկանց ուժի տարբերությունը պատճառ չդառնալով, որ մեկն ստանա ծայրահեղորեն շատ, իսկ մյուսը ենթարկվի զրկանքի. յուրաքանչյուրն ստանում էր իր պահանջի համեմատ: Սրանով, ըստ իս, մի խորհուրդ է տրվում ընդհանրապես բոլոր մարդկանց, որոնց ֆիզիկական գոյությունը պայմանավորված է նյութական սնունդով, որ իրենց պահանջների սահմանները չանցնեն, այլ լավ իմանան, որ բոլորի համար սննդի մե՛կ չափ կա միայն՝ ամենօրյա անհրաժեշտ սննդի չափը: 142. Եթե դու ընդունես ավելի շատ բան, քան պահանջում է անհրաժեշտությունը, ապա քո որովայնը ընդունակ չի լինի անցնելու իր սեփական չափը և ընդլայնվելու՝ պատրաստված բոլոր ուտելիքներն ընդունելու անհագուրդ ցանկության համեմատ: Այսպես, ինչպես ասում է այս պատմությունը, ով ավելին ստացավ, շահավոր չեղավ դրա համար, որովհետև չիմացավ ու՛ր դնել ավելորդը. իսկ ով պակաս ստացավ, զրկված չմնաց, որովհետև իր պահանջը բավարարվելով իր գտածով, համապատասխանեց իր ստացածի չափին: 143. Գալով նրանց, որոնք ի պահ էին դնում ավելորդը, տեսնում ենք, որ ագահությամբ իրենց կուտակածը ապականվում և առաջացնում է որդեր:



Սուրբ Գիրքը դրանով մի տեսակ բարձրաղաղակ զգուշացնում է ընչաքաղց մարդկանց, որ այն ամենը, ինչ անցնում է իրենց կարիքների սահմանը, և այն ամենը, ինչ նրանք կուտակում են գանձեր դիզելու մարմաջով, հաջորդ օրը, այսինքն՝ այն կյանքում, որին մենք սպասում ենք հետագայում, կուտակողի համար փոխվելու է որդերի: Ով կարդում է ինձ, դյուրությամբ հասկանում է, որ այդ որդը այն սարսափելի որդն է, որը չի մեռնում մարդու մեջ և որը կոչվում է ընչաքաղցություն:

144. Շաբաթվա միակ օրը, այն օրը, որը դրված էր մի կողմ, մնում էր առանց ապականվելու: Մենք սրա մեջ գտնում ենք այն խորհուրդը, ըստ որի պետք է գործածել այժմ ավելին ձեռք բերելու ազատությունն այն բաներում, որտեղ ձեռք բերվածը ենթակա չէ ապականության: Այս բաներն օգտակար կդառնան մեզ համար, երբ որ նախապատրաստական այս կյանքն ավարտելով՝ մահվանից հետո մենք կլինենք հանգստի մեջ: Արդարև, շաբաթին նախորդող օրը, ինչպես անունն է ցույց տալիս, շաբաթ օրվան նախապատրաստվելու օր է (parascève): Այս նախապատրաստությունը խորհրդանշում է ներկա կյանքը,որի ընթացքում մենք պատրաստում ենք մեզ համար ապագա կյանքի բարիքները, 145. այն կյանքի, որտեղ այժմ մեզ համար հնարավոր եղող գործունեության բնագավառներից ոչ մեկը՝ երկրագործություն, վաճառականություն, ռազմական կյանք, ինչպես նաև նույն կարգի մնացած բոլոր զբաղումներն այլևս չեն գործադրվելու: Այնտեղ մենք ապրելու ենք լիակատար հանգստության մեջ՝ ազատ այս բոլոր զբաղումներից, քաղելով պտուղներն այն սերմերի, որ մենք նետած կլինենք մեր ներկա կյանքի ընթացքում, և որոնք կլինեն անապական, եթե մեր սերմերը եղել են լավ, իսկ՝ կորնչական և ապականացու, եթե այդպիսիք են մեր

Տարածված ձեռքերը

այժմյան կյանքի աշխատանքների պտուղները: «Ով ցանում է Հոգու մեջ, - ասում է Սուրբ Գիրքը, - Հոգուց կքաղի հավիտենական կյանք, իսկ ով ցանում է մարմնի մեջ, մարմնից կքաղի ապականություն»:146. Բայց լավի նախապատրաստությունն է միայն, որ բառիս իսկական իմաստով կոչվում է շաբաթի Նախապատրաստություն՝ Parascève և Օրենքի կողմից պաշտոնապես հաստատվում է որպես այդպիսին, որովհետև նա խնամքով մեկ կողմ է դնում անապական, անեղծանելի բարիքները: Դրա հակառակը Նախապատրաստություն չէ ո՛չ իրապես, ո՛չ էլ անվանապես: Պատմությունը մարդկանց պատվիրում է այն միակ նախապատրաստությունը, որը կայանում է բարի գործերի մեջ՝ իր լռությամբ թույլ տալով նրանց, ովքեր ընդունակ են լսելու այդ լռությունը, որ գոյություն ունի մի ուրիշ նախապատրաստություն:

147. Ինչպես որ զինվորագրության ժամանակ բանակի հրամանատարը նախ զինվորական թոշակ է հատկացնում վարձու զինվորներին և ապա տալիս է պատերազմի ազդանշանը, այնպես էլ առաքինության համար պայքարի դուրս եկած զինվորները նախ ստանում են իրենց խորհրդանշական թոշակը, ապա մտնում պայքարի մեջ օտարների դեմ՝ Մովսեսի հաջորդ Հեսուի առաջնորդությամբ: 148. Ուշադրություն դարձնո՞ւմ եք այս մտքի շարունակությանը: Զարի բռնակալության տակ չարաչար տանջված մարդը քանի դեռ տկար է, նա ինքն իրեն ի վիճակի չէ ետ մղելու հակառակորդին: Արդարև, նա անկարող է լինում: Նրա փոխարեն մեկ ուրիշն է կռվում տկարների համար, նա է խփում թշնամուն իր հաջորդական հարվածներով: Բայց իր



կեղեքիչների գերությունից ազատվելուց հետո, երբ արդեն ճանաչել է գավազանի հրաշագործ քաղցրությունը, երբ իր հոգնած մարմինը հանգստացրել է արմավենիների հանգրվանում, երբ փորձարկել է Ժայռի խորհուրդը և հաղորդվել երկնքից իջած հացին,այն ժամանակ նա այլևս մի օտարի ձեռքով չի վանում թշնամուն, այլ որպես մի մարդ, որ արդեն դուրս է եկել մանկությունից և հասել երիտասարդական ծաղկուն տարիքի, ինքն է մտնում պայքարի մեջ այլևս ոչ թե Մովսեսի հրամաններով, այլ՝ Աստծու, որի սպասավորն է Մովսեսը: Արդարև, Օրենքը, որը տրվել էր հենց սկզբից որպես «գալիք բաների ստվերն ու պատկերը», մաքուր չի մնում ճշմարիտ մարտերի համար: Եվ այժմ բանակի ղեկավարը նա է, ով կատարում է Օրենքը և հաջորդում Մովսեսին, ով նախապես իր համայնքի կողմից ծանուցվել էր իր անունով նրա հետ միասին, ով հրամայում էր այն ժամանակ:

149. Եթե ժողովուրդը նայում է Օրենսդրի ձեռքերին, որոնք վեր են բարձրացել, ապա պատերազմում հաղթում է թշնամուն. եթե տեսնում է, որ նրա ձեռքերը ցած են իջել, ապա տանուլ է տալիս: Մովսեսի ձեռքերի բարձրացումը դեպի երկինք՝ նշանակում է Օրենքի հոգևոր իմացություն. դրանց խոնարհումը դեպի հողը՝ նշանակում է Օրենքի նյութական և բառացի մեկնություն ու դիտարկում: 150. Քահանան վեր է պահում Մովսեսի ծանրացած ձեռքերը իր ընտանիքի անդամներից մեկի օգնությամբ: Սա նույնպես խորթ չէ համատեքստի հոգևոր իմաստին: Արդարև, ճշմարիտ քահանայությունը, շնորհիվ աստվածային Բանի, որը միացած է իրեն, դեպի երկինք է բարձրացնում Օրենքի ազդեցիկ զորությունները, որոնք գետին էին ընկել հուդայական մեկնաբանության ծանրության տակ. նա վեր է պահում Օրենքը, երբ այն տկարանում, կքում է՝ նրան տալով

Աստվածաճանաչման լեռը

*քարը որպես հենարան, այնպես որ, ուղղվելով, նա Մովսեսի տկարացած ձեռքերը պատկերող խորհրդանշանով իր ճշմարիտ առարկան ցույց է տալիս նրանց, ովքեր նայում են իրեն: 151. Հիրավի, ով տեսնել գիտե, նրա համար խաչի խորհուրդը ամենուրեք երևում է Օրենքում: Ահա թե ինչու Ավետարանը մի տեղ ասում է, որ « մի յովտ և մի նշանախեց իսկ չի անցնի Օրենքից»: Դրանով նա ցույց է տալիս ուղղահայաց և կողմնական նշանները, որոնք գծագրում են խաչի պատկերը: Մովսեսի՝ տարածված ձեռքերով խորհրդանշանը, որը պատկերում է Օրենքը, ուղիղ կանգնում է որպես հաղթանշան և հաղթանակ է խոստանում նրանց, ովքեր իրենց հայացքը սևեռում են դրան:*

*152. Բայց ահա վերելքը շարունակելիս տեքստը մեր միտքն առաջնորդում է դեպի առաքինության ամենաբարձր աստիճանները: Նա, ում զորացրեց սնունդը, նա, ով հակառակորդների դեմ իր մղած պայքարում ցույց տվեց իր կորովը, ով հաղթեց իրեն հակադրվողներին, ահա նա հասնում է աստվածաճանաչման անպատմելի բարձունքին: Սրանով տեքստն ավելացնում է, թե ինչպիսի բազմաթիվ գործեր հարկավոր էր կատարել համարձակվելու համար մտքով մոտենալ աստվածաճանաչման լեռան, լսել շեփորների ձայնը, մտնել անթափանց խավարի մեջ, ուր գտնվում է Աստված, քարե տախտակների վրա փորագրել աստվածային տառերը և, եթե դրանք ջարդուփշուր են եղել ինչ-որ սխալի հետևանքով, ապա Աստծուն ներկայացնել հղկված նոր տախտակներ, որպեսզի նա իր հրեղեն մատով դրանց վրա նորից փորագրի առաջինների վրա ջնջված տառերը:*



*153. Բայց, հետևելով պատմության կարգին, ավելի լավ է դրան տալ հոգևոր իմաստ: Ով հետևեց Մովսեսին և ամպին, որոնք՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը, ծառայում են որպես առաջնորդներ այն մարդկանց, ովքեր առաջ են ընթանում առաքինության մեջ (Մովսեսը ներկայացնելով այստեղ Օրենքի պատվիրանները, իսկ ամպը՝ նրա առաջնորդը), նա հոգով մաքրվեց՝ կտրել-անցնելով ծովը: Նա սպանեց և իրենից հեռացրեց օտարոտի ամեն տարր: Նա ճաշակեց Մարայի ջուրը, այսինքն՝ զգայական հաճույքներից անջատված կյանքը, որը ճաշակողներին նախ թվում է դառը և անախորժ, բայց հետո քաղցր մի զորություն է պարգևում նրանց, որոնք ընդունել են խաչափայտի խորհուրդը: Նա անխառն մի հրճվանք ապրեց արմավենիների և ավետարանական աղբյուրների գեղեցկությամբ: Նա զովացավ ժայռի պատկերով մարմնավորված «կենդանի ջրով»: Նա քաջություն ցուցաբերեց օտարականների դիմաց և հաղթեց նրանց շնորհիվ Օրենսդետի տարածված ձեռքերի, որոնք նախանշում են խաչի խորհուրդը: Այն ժամանակ միայն նա հասնում է անդրանցական բնության հայեցողությանը:*

*154. Այն ճանապարհը, որ նրան առաջնորդում է դեպի կրոնական այս բարձրագույն վարդապետությունը* (gnose), *մաքրությունն է, ոչ միայն մարմնի մաքրությունը, որը սրբագործվում է մարմնի շուրջը կատարվող ջրի սրսկումներով, այլև զգեստների մաքրությունը, որոնց վրա եղած բոլոր բծերը պետք է ջնջվեն ջրով: Սա նշանակում է, որ նա, ով պիտի մերձենա տիեզերքի հայեցողությանը*[51], *պետք է ամբողջովին մաքրվի, որպեսզի հոգով և մարմնով լինի մաքուր և անարատ՝ լվացած լինելով հավասարապես թե՛ մեկը և թե՛ մյուսը: Հարկավոր է միաժամանակ, որ մենք մաքուր երևանք նրան, ով տեսնում է ծածուկ բաները, և մեր արտաքինը համապատասխան լինի մեր հոգու*

ներքին վիճակին: 155. Ահա թե ինչու Աստված պատվիրեց լեռ բարձրանալուց առաջ «լվանալ զգեստները», քանի որ զգեստները խորհրդանշում են կյանքի արտաքին բարեվայելչությունը: Արդարև, ոչ ոք չի գտնվի, որ համարձակվի պաշտպանել այն գաղափարը, թե հագուստների վրա երևացող արատը կարող է խոչընդոտ հանդիսանալ բարձրանալու համար առ Աստված: Բայց ես կարծում եմ, որ այստեղ հագուստ անվանումով պետք է հասկանալ կյանքի արտաքին զբաղմունքները:

156. Այս բանն արվելուց և ոչխարների հոտը լեռան մոտից հնարավորին չափ հեռու տարվելուց հետո հոգին սկսում է բարձրանալ դեպի գերագույն հասկացությունների ոլորտը: Լեռ բարձրանալու համար կենդանիներին արված արգելքը, ըստ իս, նշանակում է, որ պետք է վեր բարձրանալ այն ճանաչողությունից, որը առաջ է գալիս հեշտ ընկալվող բաներում մարդու դյուրազգայությունից և որը հատուկ է կենդանիներին: Արդարև, կենդանիների բնությանը հատուկ է առաջնորդվել միայն զգայություններով՝ բացառելով բանականությունը: Նրանք առաջնորդվում են տեսողությամբ, և սովորաբար լսողությունն է, որ շարժման մեջ է դնում նրանց բնազդը դեպի ինչ-որ առարկա: Եվ ընդհանրապես ամեն բան, որ շարժման մեջ է դնում զգայությունը, մեծ տեղ է գրավում նրանց մոտ: 157. Ընդհակառակը, Աստծու հայեցողությանը հնարավոր չէ հասնել ո՛չ տեսողությամբ և ո՛չ էլ լսողությամբ: Այն խուսափում է նույնիսկ մտքի սովորական գործունեությունից: Արդարև, «ո՛չ աչքը տեսավ, ո՛չ ականջը լսեց» (Ա Կորնթ., 2:9), նա մեկն է այն բաներից, որ սովորաբար բարձրանում է «մարդու սիրտը»: Բայց ով ուզում է բարձրանալ վերին բաների ճանաչմանը, ամենից առաջ պետք է մաքրի և փոխի իր ընթացքը զգայական և կենդանական ամեն տեսակ



շարժումից: Նա իր միտքը մարդկային սովորական ըմբռնողությունից ծնունդ առած ամեն տեսակ կարծիքից լվանալուց, իր սեփական կնոջ հետ կենակցությունից, այսինքն՝ զգայականությունից (որը մեր բնության մի տեսակ հարսը կամ կողակիցն է) հեռանալուց և դրանից մաքրվելուց հետո է միայն, որ վերջապես դիմագրավելու է լեռ բարձրանալու դժվարությունը:

158. Հիրավի, սեպացած և իսկապես դժվարամատույց մի լեռ է աստվածաճանաչությունը: Հասարակ ժողովուրդը հազիվ կարող է հասնել դրա ստորոտին: Բայց եթե խոսքը վերաբերում է ինչ-որ Մովսեսի, ապա նա իր վերելքի ճանապարհին կարող է գնալ շատ առաջ և որսալ «շեփորների ձայնը, որը, ինչքան մարդ առաջանում է, դառնում է ավելի ուժեղ», - ասում մեզ տեքստը (Ելից, 19, 19): Ճշմարիտ շեփորը, որ հնչում է մեր ականջին, Աստծու քարոզությունն է, որը, սկզբնապես լինելով զորավոր, վերջին ժամանակներում դառնում է առավել հզոր և ավելի ուժգին է հնչում մարդուս ականջներին: 159. Օրենքը և մարգարեները հայտարարեցին Մարդեղության աստվածային խորհուրդը, բայց այդ առաջին հնչյունները չափազանց թույլ էին հասնելու համար ըմբոստ ականջներին. նաև, քանի որ հրեաների ականջները ծանր էին, նրանք չկարողացան որսալ շեփորի ձայնը: Բայց, ինչպես ասում է տեքստը, շեփորների ձայնը աստիճանաբար դարձավ ավելի ու ավելի ուժեղ: Վերջին հնչյունները, որ ներկայացնում են Ավետարանի քարոզությունը, հնչեցին նրանց ականջներին, քանի որ Սուրբ Հոգին իր գործիքների միջոցով այն ժամանակ ավելի հնչեղ արձագանքեց՝ ավելի հստակ ու որոշակի մի ձայն արձակելով: Գալով գործիքներին, որոնք մարգարեներն էին և առաքյալները, Սուրբ Հոգու ներշնչումով արձագանքում էին պայծառորեն, և որոնց մասին Սաղմո-

Խավարը

սարանում գրված է, թե՝ «Նրանց ձայնը բռնել է ողջ երկինքը, և նրանց խոսքերը հասել են մինչև աշխարհի ծայրը» (Սաղմ. 18, 5):

160. Եթե բոլորը չեն կարող լսել վերևից եկող ձայնը և հանձնարարում են Մովսեսին, որ ինքը ծանոթանա ծածկված խորհուրդներին՝ այնուհետև հաղորդելու համար ժողովրդին այն վարդապետությունները, որ նա ստացած կլինի վերևից եկած ուսուցումից, դա նույնպես գտնվում է Եկեղեցու տնտեսության մեջ: Բոլորը չեն աշխատում թափանցել աստվածային խորհուրդների իմացության մեջ, այլ իրենց միջից ընտրում են մեկին, որն ընդունակ լինի ըմբռնելու աստվածային բաները, և այնուհետև հոժարությամբ ունկնդրում են նրան՝ արժանահավատ համարելով այն ամենը, ինչ լսել են աստվածային գաղտնիքներին ծանոթացած այդ անձից: 161. Արդարև, «բոլորն էլ առաքյալներ չեն, բոլորն էլ մարգարեներ չեն», - ասում է Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 12, 29): Այսօր այս բանն այլևս պահպանված չէ բազմաթիվ եկեղեցիներում: Շատերը, որոնք դեռևս կարիք ունեն իրենք իրենց մաքրելու անցյալի իրենց արարքներից, ոմանք, նույնիսկ դեռ լվացված չլինելով և պահելով իրենց կյանքի կեղտոտ հագուստներն ու առաջ մղելով անասնական զգայականությունը, համարձակվում են մերձենալ այն բարձունքին, որը տանում է դեպի Աստված: Սրանից հետևում է,որ այդ մարդիկ քարկոծվում են իրենց սեփական մտածումներով: Հիրավի, հերետիկոսական կարծիքները բազմատեսակ քարեր են, որոնք սպանում են իրենց հնարողներին[52]:

162. Բայց մյուս կողմից ի՞նչ է նշանակում Մովսեսի



մուտքը խավարի մեջ և այն տեսիլքը, ուր Աստված երևաց նրան մթության մեջ: Պատմության ներկա մասը թվում է, թե ինչ-որ չափով հակասության մեջ է սկզբի մասի աստվածահայտնության տեսիլքի հետ: Այն ժամանակ Աստված նրան երևացել էր լույսի մեջ, հիմա խավարի մեջ է երևում: Սակայն չմտածենք, որ այս բանը անհամաձայն է այն հոգևոր իրականությունների բնական շարունակության հետ, որ մենք քննում ենք: Սրանով տեքստը մեզ սովորեցնում է, որ բարձրագույն կրոնական ճանաչողությունը նախ լույս է նրանց համար, ովքեր այն ստանում են: Արդարև, ինչ որ հակառակ է բարեպաշտությանը, խավար է, իսկ խավարը ցրվում է լույսի վայելքից: Բայց միտքը դեպի առաջ իր ընթացքով, միշտ ավելի մեծ և ավելի կատարյալ մի վարժությամբ, ինչքան ավելի կարողանում է հասկանալ, թե ի՛նչ բան է վերին իրականությունների ճանաչումը, և հետզհետե ավելի մոտենում հոգևոր հայեցողությանը, այնքան ավելի է հասկանում, որ աստվածային բնությունը անտեսանելի է[53]: 163. Թողած լինելով բոլոր արտաքին երևույթները, ոչ միայն այն երևույթները, որ զգայարաններն են ընկալում, այլև նրանք, որ իմացականությունը կարծում է հասկանալ, նա միշտ ավելի է ձգտում դեպի ներսը, ներքին աշխարհը, մինչև որ մտքի ուժեղ լարումով թափանցի մինչև անտեսանելին և անճանաչելին և այնտեղ տեսնի Աստծուն: Արդարև, սրանում է կայանում ճշմարիտ ճամաչումը Նրա, ում նա փնտրում է, սրանում է կայանում Նրա ճշմարիտ տեսիլքը, Նրան չտեսնելու փաստի մեջ, քանզի ում նա փնտրում է, անդրանցնում է ամեն ճանաչում՝ ամեն կողմից անջատված լինելով իր անհասկանալիությամբ, ինչպես մի խավարով: Ահա թե ինչու Հովհան Ոսկեբերանը, որը թափանցել է այդ «լուսավոր խավարի» մեջ, ասում է, որ «ոչ ոք երբեք չի տեսել Աստծուն»՝ իր այս ժխտական ար-

*տաՀայտությամբ Հաստատելով, որ աստվածային էության ճանաչումը անմատչելի է ոչ միայն մարդկանց, այլև իմացական-Հոգևոր ամեն բնության*[54]*: 164. Ուրեմն Մովսեսը, առաջ գնալով աստվածաճանաչության մեջ, Հայտարարում է, որ Աստծուն տեսնում է խավարի մեջ, այսինքն՝ գիտե Հետևաբար, որ աստվածությունը էապես այն է, ինչ անդրանցնում է ամեն կրոնական ճանաչում, ամեն մտաՀայեցություն: «Մովսեսը մտավ խավարի մեջ, որտեղ գտնվում է Աստված», ասում է պատմությունը: Ո՞ր Աստվածը: «Նա, ով խավարը իր բնակարանը դարձրեց», ինչպես ասում է Դավիթը՝ ինքն էլ այդ նույն գաղտնի սրբարանում* (adyton*) *տեղյակ լինելով ծածկված խորՀուրդներին:*

*165. Հասնելով այնտեղ՝ նա (Մովսեսը) ստանում է նույն ուսուցումը, որ նախապես արդեն իրեն տրվել էր խավարով. և դա, կարծում եմ, Նրա Համար, որպեսզի աստվածային խոսքի վկայությամբ ամրացնի մեր Հավատը այդ ուսմունքի մեջ: Արդարև, աստվածային խոսքն ամենից առաջ պատվիրում է, որ մարդիկ Աստծուն չնմանեցնեն իրենց ծանոթ ոչ մի բանի Հետ: Սրանով մենք սովորում ենք, որ իմացությամբ կազմված ամեն մտապատկեր, որով փորձվում է Հասնել աստվածային բնությանն ու շրջափակել այն, Հաջողում է միայն ձևավորել Աստծուն պատկերող մի կուռք և ոչ թե ճանաչել տալ Նրան*[55]*: 166. Բայց կրոնական առաքինությունը բաժանվում է երկու մասի. մեկը վերաբերում է Աստծուն, մյուսը՝ բարոյական ուղղությանը: Արդարև, բարքերի մաքրությունը կրոնի մեկ մասն է կազմում: Արդ, մենք սովորեցինք, թե Աստծու մասին ինչ ճանաչում պետք է ունենալ, ճանաչում, որը, ինչպես տեսանք, կայանում է այն բանի մեջ, որ ոչ մի գաղափար չկազմենք Նրա մասին՝ մեկնակետ ունենալով մարդկային ճանաչողության եղանակը: Այժմ առաքինության մյուս երեսը, որը*



*մեզ ուսուցանվում է այն գործերի շարադրանքի շնորՀիվ, որոնք պետք է կատարի առաքինի կյանքը:*

*167. Եվ աՀա գալիս-Հասնում ենք վկայության խորանին, որը չի կառուցվել մարդու ձեռքով: Ո՞վ կկարողանա Հետևել Մովսեսին, մինչ նա անցնում է նման իրողությունների միջից և իր միտքը բարձրացնում վերին ոլորտները: Իր վերելքի մեջ անցնելով գագաթից գագաթ դեպի վերին սաՀմանները՝ նա բարձրանում է միշտ ինքն իրենից վերև: Նա սկսեց թողնել լեռան ստորոտը, զատվել՝ Հեռանալով բոլոր նրանցից, ովքեր բավարար ուժ չունեին վեր բարձրանալու Համար: ԱյնուՀետև, Հասնելով բարձունքներին, նրա ականջները որսացին շեփորների ձայնը, որից Հետո նա մուտք գործեց աստվածաճանաչության թաքուն և անտեսանելի սրբարանը: Բայց նա չի մնում նույնիսկ այդտեղ, այլ անցնում է դեպի վկայության խորանը, «որը չի կառուցվել մարդու ձեռքով», քանզի իրոք այստեղ է վերջապես սաՀմանակետը, որին Հասնում է նա, ով բարձրացել է այդպիսի դժվարին վերելքներով:*

*168. Այս կապակցությամբ ինձ թվում է, որ երկնային շեփորը կարող է նաև մեկնաբանվել այլ կերպ, քան մեկնաբանեցինք քիչ առաջ որպես մի խորՀրդանշան, որ ունկնդրողին սովորեցնում է ճիշտ ճանապարՀը՝ գնալու Համար այն բանին, «որը չի կառուցվել մարդու ձեռքով»: Դա վերաբերում է երկնքի այն Հիանալի ներդաշնակությանը, որը Հուշակում է տիեզերքում արձագանքող իմաստությունը և պատմում Աստծու փառքի մեծությունը, որը Հայտնվում է տեսանելի բաներում՝ ըստ այն խոսքի, թե՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»*[56]*: Մի՞թե սա զորավոր մի շեփոր չէ, որն ուսուցանում է Հստակ և արձագանքող Հնչյունով: Մարգարեներից մեկն այս մասին ասել է. «Երկինքը շեփոր է Հնչեցնում վերևից»: 169. Նա, ում սրտի ա-*

Երկնային տապանակը

կանչը մաքրված է և զգայուն, որսում է այդ ձայնը (սրանով ես հասկանում եմ տիեզերքի հայեցողությունը, որով ձեռք է բերվում աստվածային զորության ճանաչումը) և դրանով առաջնորդվելով՝ մտքով թափանցում է այնտեղ, ուր գտնվում է Աստված: Այդ տեղը Սուրբ Գրքի կողմից անվանվում է «խավար», որը նշանակում է, ինչպես արդեն ասվեց, անճանաչելիություն և անտեսանելիություն: Այնտեղ մտնելուց հետո նա (Մովսեսը) դիտում է մարդու ձեռքով չկառուցված խորանը, որին արդեն անդրադարձել ենք, և այնուհետև դրա նյութական մեկ ընդօրինակությունը ներկայացնում է նրանց, ովքեր գտնվում են լեռան ստորոտում:

Ի՞նչ է ուրեմն «մարդու ձեռքով չկառուցված այս տապանակը», որը լեռան վրա ներկայացվում է Մովսեսին, և սա էլ հրաման է ստանում ակնկառույց դիտել այն որպես մի նախատիպ, որպեսզի մարդու ձեռքով կառուցված մի գործով տեսանելի դարձնի մարդու ձեռքով չկառուցված այս հրաշալիքը[57]: «Տե՛ս,-ասում է Աստված,-դու ամեն ինչ կանես ըստ այն օրինակի, որը ցույց տրվեց քեզ լեռան վրա»: Արծաթե խարիսխների վրա հանգչող ոսկե սյուներ՝ զարդարված նմանապես արծաթե խոյակներով, դարձյալ սյուներ, որոնց խարիսխներն ու խոյակները այս անգամ անագապղնձից են, իսկ միջին մասը՝ արծաթից: Թե՛ այս և թե՛ մյուս սյուների մարմինները անփուտ փայտից էին, իսկ սյուների մակերեսը, շուրջանակի, ողողված էր այս նյութերի արձակած փայլով: 171. Կար նաև մի կամար՝ նմանապես շողարձակող մաքուր ոսկուց, իսկ կամարի այն մասը, որն իր վրա կրում էր այդ ոսկե հանդերձանքը, նույնպես ան-



փուտ փայտից էր: Բացի դրանից, կար նաև մի աշտանակ, որ ուներ հիմքի վրա նստած մի բան, բայց որի գագաթին բաժանվում էին յոթ ճյուղեր՝ յուրաքանչյուրի վրա մեկական լամպ: Աշտանակը զուտ ոսկուց էր, այն ո՛չ խոռոչ ուներ և ո՛չ էլ դրվագված էր փայտի վրա: Այնուհետև գալիս էին քավության սեղանը, խորանը, փառքի քերովբեները, որոնց թևերը հովանի էին անում կամարի վրա. սրանք բոլորը չէին ներկայացնում միայն ոսկու փայլը մակերեսային մի հանդերձանքով, այլ ամբողջովին կազմված էին զուտ ոսկուց: 172. Սրանց հետ նաև՝ գույնզգույն վիժակներ, որոնց կերպասը՝ հյուսված նուրբ արվեստով, ներկայացնում էր բազմազան գույների հրաշալի մի խառնուրդ: Սրանք վրանը բաժանում էին երկու մասի. մեկը՝ տեսանելի և մատչելի սրբազան պաշտոնյաներից ոմանց, մյուսը՝ արգելված և անմատույց: Առաջինի անունը «Սրբություն» է, իսկ մյուսինը, որ ծածկված է, «Սրբություն սրբոց»: Եվ վերջապես ջրավազաններ, կրակարաններ, վարագույրներ արտաքին շրջապատի համար, մազեղեն օթոցներ, կարմիր գույնով ներկված մորթիներից պատրաստված ծածկոցներ և դեռ այն ամենը, ինչ թվարկված է Սուրբ Գրքում: Ի՞նչ է այս բոլորի ճշգրիտ նշանակությունը:

173. Անտեսանելի ո՞ր իրականությունների ընդօրինակություններն են սրանք: Եվ ի՞նչ օգուտ են բերում նրանց, ովքեր նայում են Մովսեսի կողմից դիտված անտեսանելի իրականությունների այս նյութական վերարտադրությանը: Հարմար եմ գտնում թույլ տալ, որ այս բաների վավերական մեկնաբանությունը տան նրանք, որոնց շնորհ է տրված «Սուրբ Հոգու միջոցով թափանցելու Աստծու խորությունների մեջ», և որոնք կարո՛ղ են, ինչպես Պողոս առաքյալն է ասում, «մտքով արտահայտել խորհուրդներ»: Ինչ վերաբերում է մեզ, այս նյութի շուրջ ինչ որ կասենք,

*սուտ ենթադրություն են ու վարկած, և մենք մեր ընթերցողների դատողությանն ենք թողնում այն մերժել կամ ընդունել՝ ըստ այն բանի, թե քննելուց հետո այն ինչպես կթվա նրանց: 174. Մեկնելով Պողոս առաքյալի մի ցուցումից, որը մասամբ բացահայտել է սրանցում պարունակված խորհուրդը, ասենք ուրեմն, որ Մովսեսը նախօրոք խորհրդանշականորեն ծանոթ է եղել տապանակի Խորհրդին, որը պարունակում է Բովանդակը. դա Քրիստոսն է՝ «Աստծու Զորությունն ու Իմաստությունը», որն իր սեփական բովանդակությամբ չի ստեղծվել մարդու ձեռքով, բայց ստանում է ստեղծական մի գոյություն, երբ տապանակը կառուցված կլինի մեր մեջ: Այսպես, նույն Տապանակը մի տեսակ թե՛ ստեղծված է և թե՛ անստեղծ. անստեղծ է իր նախագոյությամբ, ստեղծված՝ երբ որ ստանում է նյութական գոյություն[58]:*

*175. Այս խոսքերը մթին չեն թվա նրանց, ովքեր վավերական կերպով ստացել են մեր հավատի խորհուրդը: Արդարև, բոլորի մեջ միակն է, որը կար դարերից առաջ և որը եկավ դարերի վերջում: Նա կարիք չուներ ծնվելու ժամանակավոր կերպով. հիրավի, ով նախագո է ժամանակների և դարերի մեջ, ինչպե՞ս կարիք կունենար ժամանակավոր ծննդի: Բայց մեր պատճառով, որ կամքի տկարությունով կորցրել էինք մեր գոյության հարակայությունը, Նա գիջեց ծնվել մեր կյանքի նմանությամբ, որպեսզի մեզ կրկին տանի հարակա գոյության: Նա Միասեռ Աստված է, որն իր մեջ պարունակում է Բովանդակը և որը նաև կառուցվեց մեր մեջ որպես տապանակ[59]: 176. Եթե ես «տապանակ» եմ կոչում այսքան մեծ մի բարիք, ապա ով սիրում է Քրիստոսին, չպետք է գայթակղվի դրանից, ասես այդ բառի իմաստը նսեմացներ աստվածային բնության վեհությունը: Արդարև, ոչ մեկն այն բառերից, որոնք ծառա-*



*յում են բնութագրելու Քրիստոսին, արժանի չեն նրան. բոլորն էլ հավասարապես թերի են և չեն կարող ճշգրտորեն բնութագրել նրան՝ թե՛ այն բառերը, որոնք կարծվում է, թե մեծության գաղափար են արտահայտում, և թե՛ ուրիշ բառեր, որոնք համարվում են նվաստացուցիչ: 177. Ինչպես որ մյուս բոլոր բառերը, որոնք կարող են բարեպաշտորեն գործածվել կրոնական որոշ նշանակությամբ՝ դրանցից յուրաքանչյուրի միջոցով ցույց տալու համար Նրա աստվածային զորությունը (ինչպես՝ բժիշկ, հովիվ, խնամարկու, հովանավոր, հաց, այգի, ճանապարհ, դուռ, բնակարան, ջուր, քար, աղբյուր և մնացած բոլոր բառերը, որոնք ասված են Նրա մասին), այնպես էլ, որոշ իմաստով, որը պատշաճում է Նրա աստվածային բնությանը, Նա կոչվել է տապանակ[60]: Հիրավի, այն զորությունը, որ պարունակում է տիեզերքը և «որի մեջ բնակվում է ամբողջ աստվածությունը»՝ ամբողջի ընդհանուր պատյանը, Նա, որ բովանդակն է պարունակում Իր մեջ, կոչվել է տապանակ:*

*178. Բայց տիեզերքը պետք է համապատասխանի այս անունին, և տեսանելի բաներից յուրաքանչյուրը պետք է առաջնորդի Աստծուն արժանի մի գաղափարի հայեցողության: Ուրեմն, քանի որ մեծ Առաքյալը ասում է, թե «տապանակի խոնարհագույն քողը Քրիստոսի մարմինն է» (կարծում եմ նրա համար, որ այն հյուսված է տարբեր թելերից, որոնք ներկայացնում են չորս տարրերը), անկասկած նա [Մովսեսը] նույնպես ունեցել էր այս տապանակի տեսիլքը, երբ որ մտել էր գերերկնային ծածկված սրբարանները, որտեղ Դրախտի խորհուրդները հայտնվեցին նրան Սուրբ Հոգու միջոցով, ուստի բարեհաջող մի մեթոդ կլինի գուցե մեկնել այս մասնակի մեկնաբանությունից և այն տարածել տապանակի ամբողջության վրա: 179. Այսպիսով, հենց առաքյալի խոսքերից դուրս կբերենք տապա-*

*նակի խորհուրդների բացատրությունը: Արդարև, տապանակի պատկերով խորհրդանշված Միածնի մասին չի՞ ասում միթե, որ «Նրա մեջ են ստեղծվել բոլոր բաները՝ տեսանելիներն ու անտեսանելիները, երկնային Գահերը, Իշխանությունները, Տերությունները, Զորությունները»: Ուրեմն ոսկով և արծաթով փայլատակող սյուները, լծակները, օղակները, քերովբեները, որոնք իրենց թևերով ծածկում են վկայության խորանը, և վերջապես այն բոլոր բաները, որոնք վերաբերում են տապանակի շինության նկարագրությանը, - ահա այս բոլորը, եթե դրանք քննենք՝ մեր հայացքը դարձրած դեպի վերին ոլորտները, այն տիեզերական զորություններն են, որոնք գտնվում են տապանակում և վեր են պահում տիեզերքը՝ ըստ աստվածային կամքի[61]: 180. Դրանք ճշմարիտ լծակներն են, որոնք որպես օգնություն «ուղարկված են այն մարդկանց պատճառով, որոնք պիտի ստանան փրկության ժառանգությունը», լծակներ, որոնք մտել են փրկվածների հոգիների, ինչպես օղակների մեջ՝ առաքինության բարձունքներում վեր պահելով նրանց, որոնք փռվել-թավալվել էին գետնին: Գալով քերովբեներին՝ տեքստը, ցույց տալով մեզ, թե նրանք «իրենց թևերով» ինչպես էին ծածկել ուխտի տապանակում զետեղված խորհրդավոր առարկաները, հաստատում է Վկայության խորանի մասին մեր տված մեկնաբանությունը: Արդարև, մենք գիտենք, որ նրանք այն Զորություններն են, որոնց Եսայի և Եզեկիել մարգարեները տեսել են Աստվածության շուրջը կանգնած վիճակում: Որ ուխտի տապանակը ծածկված է եղել նրանց թևերով, դա չպետք է զարմացնի մեզ: Եսայու մոտ թևերի մասին խորհրդանշականորեն ասված նույն բանն ենք գտնում: Միայն թե այնտեղ թևերով ծածկվածը կոչվում է «դեմք» և ոչ թե «տապանակ». երկու պարագայում էլ բանն է նշվում, այսինքն՝*



*աստվածային գաղտնիքների հայեցողությունն անմատչելի է մարդուս մտքին:*

*181. Այնուհետև երբ խոսվում է լամպերի մասին, որոնք դուրս են գալիս մեկ աշտանակից և բաժանվում բազմաթիվ ճյուղերի՝ առատ լույս սփռելու համար ամեն կողմ, դու չես սխալվի, եթե այս պատկերի մեջ տեսնես Սուրբ Հոգու բազմազան ճառագայթները, որոնք փայլում են տապանակի մեջ: Հենց դա է ասում Եսային, երբ նա յոթ մասի է բաժանում Սուրբ Հոգու ճառագայթները[62]: Ինչ վերաբերում է քավության սեղանին, կարծում եմ, որ դա կարիք չունի բացատրության, քանի որ Պողոս առաքյալն արդեն քողազերծ է արել դրա թաքնված իմաստը՝ խոսելով «Նրա մասին, ում Աստված քավության սեղան դարձրեց մեր հոգիների համար»: «Խորան» և «բուրվառ» բառերով դու հասկացիր երկնային արարածների չընդհատվող պաշտամունքը տապանակում: Արդարև, ոչ միայն նրանց մասին, որ «երկրի վրա են» կամ «երկրի տակ», այլև նրանց մասին, որ «երկնքում են», ասված է, որ նրանց լեզուները պատիվ են մատուցում Նրան, ով բոլոր բաների սկիզբն է. դա է Աստծուն հաճելի պատարագը, «շրթների պտուղը», ինչպես ասում է Պողոս առաքյալը, դա է աղոթքների մաքուր բույրը: 183. Եթե տապանակը լցնող առարկաների մեջ տեսնվում են նաև կարմիր գույնով մորթիներ և մազեղեն ծածկոցներ, ապա դա չի խափանի մեր հայեցողության առաջընթացը: Արդարև, մարգարեական հայացքը, որն օժտված է աստվածային բաները տեսնելու կարողությամբ, դրանց մեջ կտեսնի աստվածային մտածման մեջ նախագո Քրիստոսի փրկագործական չարչարանքները. դա ցույց է տրված այս երկու խորհրդանշաններով, որոնցից առաջինը՝ կարմիր գույնով մորթին, խորհրդանշում է Նրա արյունը, իսկ ծածկոցը՝ Նրա տանջալից մահը: Հիրավի, ծածկոցը,*

Երկրային տապանակը

*զուրկ լինելով զգայությունից, ցոլացնում է մահվան ճշգրիտ պատկերը:*

*184. Այդպիսին են, ուրեմն, այն իրողությունները, որ խորհրդանշանների միջոցով բացահայտում է մարգարեն, երբ դիտում է երկնային տապանակը: Այժմ անցնենք երկրային տապանակի դիտարկմանը: Տրված լինելով, որ Պողոսն իր թղթերի բազմաթիվ տեղերում Եկեղեցին նույնացնում է Քրիստոսի հետ[63], մենք կարող ենք հասկանալ այն, որ աստվածային Խորհրդի սպասավորները, որոնց «Եկեղեցու սյուներ» է անվանում Սուրբ Գիրքը, առաքյալներն են, օրենսդիրներն ու մարգարեները: Արդարև, միայն «Պետրոսը, Հովհաննեսն ու Հակոբոսը» չեն Եկեղեցու «սյուները», իսկ Հովհաննես Մկրտիչն էլ միակը չէ, որ «փայլող լամպ» է կոչվում, այլև բոլոր նրանք, ովքեր պահում ու ամրացնում են Եկեղեցին, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր իրենց աշխատանքով համարվում են նրա «լույսերը», կոչվում են սյուներ և լամպեր: «Դուք եք աշխարհի լույսը», ասում է Տերը առաքյալներին: Իսկ աստվածային Պողոսն, իր խոսքն ուղղելով ուրիշներին, պատվիրում է լինել սյուներ, երբ ասում է նրանց. «Եղե՛ք ամուր և անխախտ»: Եվ իրոք, հանձին Տիմոթեոսի, նա կառուցել է մի գեղեցիկ սյուն՝ նրան դարձնելով, ըստ իր սեփական խոսքերի, «ճշմարտության սյունը և հիմքը»[64]: 185. Այս տապանակում մենք տեսնում ենք նաև «օրհնության պատարագը» և «աղոթքի խունկը», որը մշտապես մատուցվում է ամեն առավոտ և երեկո: Մեծն Դավիթը մեզ տալիս է այս պատկերների իմաստը, երբ նա առ Աստված է առաքում աղոթքի խունկը քաղցրության բույրով և պատարագ է մատուցում՝ կարկառելով*



*իր ձեռքերը: Ջրավազանի պատկերում առանց դժվարության կարելի է ճանաչել նրանց, որոնք մեղքի աղտեղությունները լվանում են խորհրդական ջրով[65]: Հովհաննես Մկրտիչը մի ջրավազան էր, որը Հորդանան գետում մեղավորներին լվանում էր ապաշխարության մկրտությամբ: Պետրոս առաքյալը մի ջրավազան էր, որը ջրի մեջ էր իջեցնում միանգամից երեք հազար մարդու: Փիլիպպոսը Կանդակայի ներքինու ջրավազանն էր: Ջրավազան են նաև բոլոր նրանք, ովքեր Սուրբ Հոգու շնորհն են փոխանցում այն մարդկանց, որոնք իրենց դարձրել են աստվածային Պարգևի մասնակիցները:*

*186. Վիժակներն ու սրահակները, որոնք, իրար միացած, բոլորում են տապանակը, կարող են իրավամբ մեկնաբանվել որպես հավատացյալների հոգևոր միությունը եղբայրասիրության և խաղաղության մեջ: Սա Դավթի մեկնաբանությունն է, որն ասում է. «Նա քո սահմանները հաստատեց խաղաղության մեջ» (Սաղմ. 147, 3): 187. Կարմիր ներկված մորթին և մազեղեն ծածկոցները, որոնք նպաստում են տապանակի զարդարանքին, համապատասխանաբար նշանակում են մեղավոր մարմնի մահացում և ճգնավորական կյանքում խստամբերություն, որոնք Եկեղեցու տապանակի գեղեցկագույն զարդն են կազմում: Արդարև, մորթիները, որոնք ըստ ինքյան չունեն այն կենսական աճը, որ բնությունն է տալիս, բայց որոնք իրենց կարմիր գույնով փոխ են առնում նրա փայլն ու պայծառությունը, սովորեցնում են մեզ, որ Սուրբ Հոգու շնորհը փայլում է միայն նրանց մեջ, ովքեր իրենք իրենց մահացրել են մեղքի համար: Տեքստը կարմիր գույնով կարող է ցույց տալ նաև համեստությունն ու ամոթխածությունը. այս մասին ես թողնում եմ, որ ընթերցողն ինքը դատի: Գալով մազեղեն ծածկոցներին, որոնք ներկայացնում են կոպիտ և շոշափե-*

Քահանայական հանդերձանք

*լու համար տհաճ գործվածքներ, թելադրում են խստակրոն ճգնակեցությունը, որը թուլացնում է կրքերը, որոնց դեմ մենք պայքարում ենք. սրանք են ահա կուսական կյանքի բոլոր գծերը, այն կյանքի, որը «հնազանդեցնում-նվաճում է» մարմինն այն մարդկանց, որոնք այդ կյանքով են ապրում: 188. Վերջապես եթե տապանակի ներքնամասի մուտքը, որը կոչվում է Սրբություն Սրբոց, արգելված է բազմությունններին, ապա դա լրիվ համաձայն է մեր գաղափարների շարունակությանը, քանզի ինկապես սուրբ և սրբությունների մեջ սուրբ մի բան է ճշմարտությունը, որը բնակվում է աստվածային Խորհրդի տապանակի գաղտնի և արգելված ոլորտում: Մարդկային մտքի ճիգերը ինչպե՜ս անկարող չլինեին մերձենալու դրան, քանի որ այն իրականությունը, որին վերաբերում է մեր խոսքը, հասու չէ մարդուս մտքին: Ուրեմն հարկավոր է հավատալ այն բանի գոյությանը, որ մենք փնտրում ենք, առանց սակայն կարծելու, որ այն դրված է բոլորի աչքերի առաջ, այլ գիտենալով, որ այն մնում է արգելված մտքի թաքուն շրջաններում:*

*189. Տապանակի տեսիլքում վարժված լինելով տեսնել այս և նույն կարգի ուրիշ բաներ՝ Մովսեսի հոգու աչքը, մաքրված և վերացած համանման զննություններով, բարձրանում է դեպի հոգևոր նոր կատարներ: Նա ծանոթանում է քահանայական հանդերձանքին, որը բաղկացած է պատմուճանից, վակասից, զանազան ակնաքարերի շլացուցիչ փայլով պսպղացող լանջանոցից, գլուխը շրջափակող խույրից, անդրավարտիքից, նռնաձև զարդերից ու բոժոժիկներից և ապա, այս բոլորի վրա, «պատգամից», «դատաստանից» և «ճշմարտությունից»: Եվ վերջապես ուսանոցները, որոնք պահում են այս վերջինները մեկ և մյուս կողմից, և որոնց վրա արձանագրված են նահապետների ցեղանունները: 190. Այս վերջին հագուստների անուններն իսկ անօգուտ են դարձնում դրանց մանրամասն կարգը նշելու անհրաժեշտությունը: Արդարև, մարմնական հագուստների համար բնորոշ եղող ի՞նչ անուն տալ «դատաստան», «պատգամ» և «ճշմարտություն» անուններին: Սա հստակ կերպով մեզ ցույց է տալիս, որ տեսիլքում խոսքը չի վերաբերում նյութական հագուստներին, այլ՝ առաքինության գործերով ինչ-որ հոգևոր զարդարանքի:*

*191. Պատմուճանը ներկված է ծովային ծիրանիով: Ոմանք նրանցից, որոնք մեզնից առաջ այլաբանորեն մեկնաբանել են այս հատվածը, ասում են, որ այս գույնը ցույց է տալիս օդը: Թե ի՞նչ չափով այս գույնի նրբերանգը մոտենում է օդի գույնին, այդ մասին ինձ չի վերաբերում վճռական խոսք ասել: Այնուհանդերձ չեմ մերժում գաղափարը: Արդարև, իմաստը համապատասխանում է առաքինության գաղափարի գործադրմանը: Սրանով ցույց է տրվում, որ նա, ով ուզում է նվիրվել Աստծու ծառայության գործին, «մատուցել իր մարմինը» որպես պատարագ և դառնալ «կենդանի պատարագի» և «հոգևոր պաշտամունքի» կենդանի մի զոհ, պետք չէ ճնշի իր հոգին կոպիտ և մարմնավոր մեր կյանքի հագուստի ծանրության տակ, այլ իր կյանքի մաքրությամբ իր բոլոր գործերը դարձնի սարդոստայնի նման թեթև և, ի նորո հյուսելով իր մարմնավոր բնությունը, մոտենա այն բանին, որը չունի ծանրություն, որը թեթև է ու օդային, այնպես որ այն օրը, երբ հնչի մարդուս վերջնական ճակատագրին վերաբերող «շեփորը», չունենալով մեզ ծանրացնող և դանդաղեցնող ոչ մի բան պատասխանելու համար մեզ կանչողի ձայնին, «Տիրոջ հետ*

տարվենք վերև, օդային տարածություններ մեջ»՝ բռնված չլինելով երկրի վրա մեզ ներքև պահող ոչ մի ծանրությունից: Ուրեմն ով, ըստ Սաղմոսերգուի խոսքի, «չորացրել է իր հոգին սարդի նման», նա հագել է այս օդային պատմուճանը[66], որն իջնում է գլխից մինչև ոտքերի ծայրը, ինչ որ նշանակում է, թե Օրենքը չի ընդունում խեղված կամ կտրատված առաքինություն[67]:

192. Ոսկյա բոժոժիկներն ու նռնաձև զարդերը, որոնք հաջորդում են իրար, ներկայացնում են գեղեցիկ գործերի ճառագայթումը: Արդարև, կատարելությունը կազմվում է երկու բաների միավորումով՝ հավատ առ Աստված և կյանք՝ ըստ մարդու խղճմտանքի: Ահա այս նռնաձև զարդերն ու բոժոժիկներն են, որ մեծանձն Պողոս առաքյալը կապում է Տիմոթեոսի հագուստին, երբ ասում է նրան, որ պետք է ունենա «հավատ և արդար խղճմտանք»: Ուրեմն հավատը թող թնդացնի մաքուր և հզոր հնչյունը Սուրբ Երրորդության քարոզում: Թող կյանքն իր հերթին ընդօրինակի նռան պատկերը, 193. որի արտաքինը ծածկված է կարծր, անհարթ և ուտելու համար ոչ պիտանի կեղևով, բայց որի ներքինը հաճելի է աչքերին իր այլազանությամբ ու կանոնավորությամբ, և որի պտուղն էլ ավելի հաճելի և բարեհարմար է մարդուս ճաշակին իր քաղցր համով: Այսպես, խստակրոն և փիլիսոփայական կյանքը ո՛չ թովչություն ունի և ո՛չ հրապուրանք զգայարանների համար, բայց բովանդակելով երջանիկ հույսեր՝ ժամանակի ընթացքում հասունանում է և քաղցրանում: Արդարև, երբ մեր հոգիների այգեպանը իր ժամանակին բաց անի մեր կյանքի նուռը և լույս աշխարհ բերի գեղեցկությունն այն բաների, որ թաքնված են նրա մեջ, այն ժամանակ նրա հատիկների վայելքը կդառնա գերագույն երջանկությունն այն մարդկանց, որոնք մասնակից կլինեն դրան: Աստվածային Առաքյալն այս մասին ասել է մի տեղ. «Ամեն խրատ տվյալ պահին թվում է, թե ուրախություն չի բերում, այլ՝ տխրություն, բայց հետո արդարության խաղաղարար պտուղն է հատուցում նրանով դաստիարակվածներին» (Եբր. 12, 11): Եվ ճիշտ այս տպավորությունն է տալիս մեր ունեցած առաջին շփումը նռան հետ. բայց հետագայում նա բերում է «խաղաղության պտուղ», որը ներքին սնունդների քաղցրությունն է:



194. Տեքստը պատվիրում է նաև, որ պատմուճանը եզրապատված լինի «ծոպերով»: Ծոպ են կոչվում գնդաձև մետաքսյա կախովի փնջիկները, որոնք պարզ զարդարանք են: Դրանով մենք սովորում ենք, որ առաքինության չափը միակ պատվիրանը չէ, այլ մեր նախաձեռնությանն է թողնված գտնել այն, ինչ կկարողանանք հնարել որպես հավելյալ գեղեցկություն: Դրանով մենք հագուստի գեղեցկության վրա ավելացնում ենք ինչ-որ բան, ինչպես անում էր Պողոս առաքյալը՝ պատվիրաններին միացնելով իր կողմից ավելացված գեղեցիկ «ծոպերը»: Այսպես, Օրենքը պատվիրելով, որ «տաճարում ծառայողները տաճարից էլ սնվեն» և թույլ տալով, որ «Ավետարանը քարոզողները դրանով էլ ապրեն», Պողոս առաքյալն ինքը ուզում է, որ «Ավետարանը ձրի տրվի», և այդ իսկ պատճառով նախընտրում է ենթարկվել «քաղցի, ծարավի և հոգնության»: Սրանք այն գեղեցիկ ծոպերն են, որոնք հավելյալ գեղեցկությամբ զարդարում են պատվիրանների պատմուճանը:

195. Պատմուճանի վրայից կերպասի երկու կտորներ, ուսերից իջնելով ցած, ծածկում են կուրծքը և մեջքի վերևի մասը: Դրանք միասին կապված են յուրաքանչյուր ուսին երկու ճարմանդներով: Այս ճարմանդները ակնաքարեր են, որոնցից յուրաքանչյուրն իր վրա կրում է վեց նահապետների փորագրված անունները: Կտորների հյուսքը բազկա-

ցած է բազմաթիվ գույներից. ծովագույն ծիրանին այնտեղ զուգակցված է բոսորագույնի, իսկ շիկակարմիրը՝ սպիտակավուն կտավատի հետ: Բոլորն էլ ընդխառնված են ոսկե թելերով: Այս գույների խառնուրդը կազմում է շլացուցիչ գեղեցկությամբ մի բանվածք: 196. Սրանից մենք սովորում ենք, որ մարդու ներքին գեղեցկությունը, որն իրավամբ պատկերված է հագուստի վերնամասով, կազմված է բազմաթիվ և բազմազան առաքինությունների խառնուրդով. կապույտն այնտեղ խառնվում է ծիրանիին, այսինքն՝ արքայական արժանապատվությունը միանում է բարքերի մաքրությանը, սպիտակավուն կտավատը միանում է շիկակարմրին, այսինքն՝ անարատ կյանքի սպիտակությունը բնական կերպով խառնվում է համեստության շառագույնին: Ոսկեգույնը, որը փայլում է այս բոլոր գույների մեջ, ցույց է տալիս այդպիսի մի կյանքում ծածկված գանձը: Գալով նահապետներին, որոնց անունները փորագրված են ճարմանդների վրա, այն զարդարանքը, որ նրանք բերում են մեզ, զանցառելի չէ: Անցյալում նրանց կողմից ցույց տրված առաքինության օրինակները հարստացրել են մարդկությանը[68]:

197. Կերպասի երկու կտորներից բաղկացած այս հանդերձանքի վրա իջնում է մի ուրիշ զարդարանք ևս. դրանք յուրաքանչյուր ուսանոցի վրա ամրացված ոսկյա փոքրիկ վահանիկներ են, որոնք իրենց վրա պահում են քառանկյուն ոսկյա մի առարկա՝ դրվագված տասներկու ակնաքարերով և դասավորված առանձին շարքերով, ընդամենը չորս շարք, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է երեք ակնաքար: Սրանց մեջ կարելի չէր գտնել երկու ակնաքար, որոնք նման լինեին իրար, այլ յուրաքանչյուրը փայլում էր առանձնահատուկ փայլով: Այսպիսին էր այս զարդարանքի հարդարումը: 198. Այժմ տեսնենք սրա նշանա-



կությունը: Երկու ուսերից կախված վահանիկները նշանակում են հակառակորդի դեմ գործածվող զենքի երկու երեսները: Արդարև, առաքինությունը, ինչպես ասվեց վերևում, երբ կիրառվում է երկու ձևով՝ հավատով և խղճմտանքով առաջնորդվող կյանքով, մենք ապահովության մեջ ենք լինում մեկ և մյուս կողմից շնորհիվ այս վահանիկների և արդարության զենքով անխոցելի ենք մնում աջից ու ձախից եկող նետերից: 199. Գալով վահանիկների յուրաքանչյուր կողմից կախված քառանկյուն զարդարանքին, որտեղ Իսրայելի ցեղերի նահապետների անուններն են փորագրված ակնաքարերի վրա, դա այն քողն է, որը պաշտպանում է ներքին մարդուն: Դրանով տեքստը սովորեցնում է, որ նա, ով երկու վահանիկներով ետ է մղել Չարի նետերը, կզարդարի իր սեփական հոգին նահապետների բոլոր առաքինություններով, առաքինություններ, որոնցից յուրաքանչյուրն առանձնահատուկ պայծառությամբ փայլում է անթերի կյանքի հյուսվածքի վրա: Քառանկյուն ձևը նշանակում է կայունություն և հարատևություն բարու մեջ: Արդարև, այս ձևի առարկաները դժվար է տեղափոխել, որովհետև դրանք հենվում են անկյունների վրա կողմերի ուղղագիծ ձևի պատճառով:

200. Այն շղթայիկները, որոնցով այս զարդերը կապված են հագուստի թևքերին, ինձ թվում է, թե սովորեցնում են, որ կատարյալ կյանքը պահանջում է, որ իրար միացած լինեն գործնական փիլիսոփայությունն ու հայեցողության վարժությունը՝ սիրտը լինելով հայեցողություն, իսկ թևերը՝ գործերի խորհրդանշանները: 201. Գլուխը զարդարող խույրը ցույց է տալիս այն պսակը, որը վերապահված է նրանց, ովքեր լավ կյանքով են ապրել: Այն զարդարված է «ոսկյա թիթեղի» վրա խորհրդավոր տառերով փորագրված «Սրբություն Տեառն» անունով: Ինչ վերաբերում է կոշիկ-

Խորտակված և վերաշինված
քարե տախտակները

ներին, ապա նա, ով իր վրա է կրում այսքան շատ զարդարանքներ, կոշիկներ չի հագնում, որպեսզի իր ընթացքի մեջ չդանդաղի և շարժվելու նեղություն չկրի անկենդան մորթիներով զգեստավորված լինելու պատճառով՝ ըստ այն մեկնաբանության, որ մենք արդեն տվել ենք լեռան տեսարանի կապակցությամբ: Հիրավի, ինչպե՞ս իր ոտքերը պիտի զարդարեր կոշիկներով, երբ խորհրդազգացության սկզբին նա դեն էր գցել դրանք որպես իր վերելքին արգելք եղող առարկաներ:

202. Նա, ով անցավ այն բոլոր վերելքներով, որոնց մենք հետևեցինք մտահայեցությամբ, իր ձեռքերի մեջ կրում է Աստծու կողմից փորագրված տախտակները, որոնք պարունակում են աստվածային Օրենքը: Բայց այս տախտակները խորտակվում են՝ բախվելով մեղավոր մարդկանց խստագույն դիմադրությանը: Որպես մեղք խոսքը վերաբերում էր մի կուռքի պատրաստությանը. ձուլած լինելով հորթի կերպարանքով մի արձան՝ նրանք պաշտամունք էին մատուցում դրան: Բայց Մովսեսն, այն փոշիացնելով, լուծեց ջրի մեջ և խմեցրեց նրանց, ովքեր մեղանչել էին: Եվ այսպիսով, ամբողջապես ոչնչացրեց այն նյութը, որը ծառայել էր մարդկանց ամբարշտությանը: 203. Այս պատմությունը մանավանդ մի մարգարեություն է այն իրադարձությունների մասին, որոնց կատարումը մենք տեսանք մեր ժամանակում[69]: Արդարև, կռապաշտության սխալն ամբողջովին անհետացավ՝ կլանվելով այն բարեպաշտ մարդկանց բերաններով, որոնք ճշմարտության դավանությամբ ջնջեցին իրենց մեջ ամբարշտության գոյացությունը: Եվ կռապաշտների խորհուրդները, որոնք մի ժամանակ ամրորեն հաստատված էին մարդկանց հոգիներում, դարձան հեղուկ և անկայուն ջուր, այնպիսի մի ջուր, որ խմվեց հենց այդ մարդկանց բերանով, որոնք դրանց ջերմեռանդ կողմնակիցներն ու հետևորդներն էին: Նաև, երբ տեսնում ես այն մարդկանց, որոնք նախապես խոնարհվելով երկուտակ էին լինում այս ցնորական պատրանքի առջև և որոնք այժմ տապալում-խորտակում են այն նույն բաները, որ երեկ նրանց վստահությունն էին վայելում, քեզ չի՞ թվում, թե լսում ես պատմության ձայնը, որ հստակորեն հայտնում էր, որ ամեն կուռք մի օր կուլ է տրվելու այն մարդկանց բերանով, ովքեր իրենց մոլորությունից դառնալու են ճշմարիտ կրոնին:

204. Դրանից հետո մենք տեսնում ենք Մովսեսին, որը ղևտացիներին զինում է իր ազգակիցների դեմ: Սրանք, բանակատեղիի մեկ ծայրից մյուսն անցուդարձ անելով, խառնիխուռն կոտորում են բոլոր նրանց, ում հանդիպում են՝ թույլ տալով, որ սրի ծայրը վճռի, թե ովքեր են սպանվելու: Նրանք սպանում էին ամեն մարդու, ով պատահում էր՝ առանց խտրություն դնելու բարեկամի և թշնամու, ծնողի և օտարականի, ծանոթի և անծանոթի միջև. միակ որոշողը իրենց ձեռքի շարժումն էր, որը նույն ձևով և հավասարապես գործադրվում էր ամեն մարդու վրա, ում վրա որ ընկնում էին: 205. Այս հատվածի օգտակար դասը, ինձ թվում է, կայանում է այն բանի մեջ, որ բոլորը հավաքաբար մեղսակից լինելով կատարված մեղքին և ողջ բանակատեղը արատավորության տեսակետից կազմելով մեկ միություն՝ պատիժը կիրառվում էր անխտիր բոլորի դեմ: Արդարև, ինչպես որ նա, ով, հարվածելով հանցանքի մեջ բռնված մարդուն, մտրակահարության միջոցով պատռում է նրա մարմնի պատահած մասը՝ իմանալով, որ այդ մասի զգացած ցավը տարածվում է ամբողջ մարմնի վրա, այն-

պես էլ այստեղ ամբողջ մարմինը, միացած լինելով մեղքի մեջ, պետք է հավասարապես պատժվի, և մեկ մասի վրա կիրառված պատիժը պետք է ուղղի ամբողջը: 206. Այսպես, հավաքական մի հանցանքի կապակցությամբ, երբ տեսնում ենք, թե Աստծու բարկությունը չի գործադրվում բոլորի դեմ, այլ մի քանիսի դեմ միայն, մենք դա պետք է ընդունենք որպես ապացույց այն ողորմածության, որ Աստված ցույց է տալիս կատարված հանցանքներն ուղղելու առնչությամբ: Արդարև, բոլորը չեն հարվածվում, և սակայն բոլորը հեռանում են չարի ճանապարհից մի քանիսի ստացած հարվածների պատճառով:

207. Բայց այս խորհրդածությունը դեռ կապվում է տեքստի բառացի իմաստին: Հոգևոր իմաստը կկարողանա մեզ բերել որևէ օգտակարություն: Օրենսդիրը բոլորին ուղղված հրապարակային մի հայտարարությամբ ասում է. «Եթե մեկը Աստծու կողմն է, ապա թող գա դեպի ինձ»: Հենց այս է, որ Օրենքի ձայնը պահանջում է բոլորից. «Եթե մեկն ուզում է լինել Աստծու բարեկամ, ապա թող լինի իմ՝ Օրենքի բարեկամը»: Արդարև, ով բարեկամ է Օրենքին, դրանով իսկ նա բարեկամ է նաև Աստծուն: Այնուհետև նրանց, ովքեր հավաքված են իր շուրջը իր հայտարարության կապակցությամբ, պատվիրում է սուր վերցնել եղբոր, բարեկամի և մերձավորի դեմ: 208. Դառնալով դեպի Հոգևոր համատեքստը՝ սրանով մենք հասկանում ենք, որ ամեն մարդ, ով դառնում է դեպի Աստված և դեպի Օրենքը, մաքրվում է՝ խորտակելով իր մեջ գտնվող բոլոր վատ սովորությունները: Հիրավի, եղբայր, բարեկամ, մերձավոր բառերը միշտ չէ, որ լավ կողմից են վերցվում Սուրբ Գրքում. կան եղբայրներ, որոնք օտարական են, բարեկամներ, որոնք թշնամի են, և մերձավորներ, որոնք սրանց հակառակն են: Սրանով մենք հասկանում ենք այն ներքին



խլրտումները, որոնք արմատավորված են մեր հոգում, և սրանց կյանքը մեր մահն է, իսկ նրանց մահը՝ մեր կյանքը:

209. Այս մեկնաբանությունը ներդաշնակվում է այն բանի հետ, ինչ մենք արդեն բացատրեցինք Ահարոնի կապակցությամբ, երբ նա ընդառաջ եկավ Մովսեսին, և երբ մենք հասկացանք հրեշտակի օգնությունը, որը զարմանահրաշ գործեր էր անում եգիպտացիների դեմ: Կարելի է իրավամբ վերջինիս համարել տարիքով ավելի մեծ, քանի որ անմարմին և հրեշտակային բնության ստեղծումն ավելի շուտ է տեղի ունեցել, քան մեր ստեղծումը, իսկ մյուս կողմից կարելի է նրան համարել նաև եղբայր այն մերձավորության պատճառով, որ գոյություն ունի իր իմացական բնության և մեր իմացական բնության միջև: 210. Արդ, հասկանալի չէ, թե ինչպես կարելի է լավ կողմից դիտել Ահարոնի ցուցաբերած օգնությունը հրեաների հանդեպ, երբ նա կռապաշտության գործիք է դառնում նրանց: Բայց Սուրբ Գիրքը այդ նույն տեղում հասկացնում էր մեզ, որ այս եղբայր անունը երկդիմի է. նույն բառը կարող է միշտ նույն նշանակությունը չունենալ, երբ այն գործածվում է՝ ցույց տալու համար իրար հակադիր բաներ: Ուրիշ է այն եղբայրը, որ տապալում է եգիպտացի բռնակալին, և ուրիշ՝ այն եղբայրը, որը կուռք է պատրաստում իսրայելացիների համար, եթե նույնիսկ այդ անունը ընդհանուր է թե՛ մեկին և թե՛ մյուսին: 211. Այս վերջինի նման եղբայրների դեմ Մովսեսը մերկացնում է իր սուրը: Արդարև, ինչ որ նա պատվիրում է ուրիշներին, նույն բանը պատվիրում է նաև ինքն իրեն: Այդպիսի եղբայրների խորտակումը մեղքի ոչնչացումն է: Հիրավի, ամեն մարդ, որ անհետացնում է Հակառակորդի ծրագրով իր մեջ տեղավորված ինչ-որ չար բան, նա իր մեջ սպանում է նրան, ով այնտեղ ապրում էր մեղանչելով:

212. Մեր այս վարդապետությունն ավելի զորեղ և հաստատուն կլինի, եթե այս պատմությունից քաղված ուրիշ տարրեր համեմատության մեջ դնենք մեր հոգևոր մեկնաբանության հետ: Արդարև, ասվեց, որ Ահարոնի հրամանով է, որ խսրայելացիները զրկվեցին իրենց «ականջօղերից»: Այս ականջօղերը, վերցվելով նրանցից, դարձան նյութ կուռքի պատրաստության համար: Ի՞նչ ասենք սրա վերաբերյալ. այն, որ Մովսեսը զարդարեց խսրայելացիների լսողությունը այդ ականջօղերի զարդարանքով, որը ներկայացնում է Օրենքը, և որ կեղծ եղբայրը, նրանց մղելով դեպի անհնազանդություն, վերցրեց լսողությանը տրված այդ զարդարանքը և այն դարձրեց կուռք: 213. Հենց սա էր տեղի ունեցել առաջին մեղքի հայտնության ժամանակ: Ականջօղերի վերցնելը եղավ պատվիրանին չհնազանդվելու այն խորհուրդը, երբ օձը, Նախաստեղծների մոտ ներկայանալով իբրև բարեկամ և մերձավոր, խորհուրդ տվեց նրանց, որպես օգտակար և լավ բան, մերժել աստվածային պատվերը, ինչ որ հավասար է պատվիրանի ականջօղից լսողությունը զրկելուն: Ով սպանում է այդպիսի եղբայրներին, բարեկամներին, մերձավորներին, կլսի Օրենքի այս խոսքը, որ, ըստ պատմության հիշատակության, ասվել է Մովսեսի կողմից այն մարդկանց, որոնք այդպիսի սպանություններ են կատարում. «Այսօր դուք լեցուն ձեռքերով եկել եք դեպի Տերը՝ յուրաքանչյուրդ ձեր սեփական որդիներով ու եղբայրներով. այսօր դուք օրհնություն կստանաք»:

214. Թվում է, թե պատահական չէ, որ մեղքի սկզբնավորողներին վերաբերող այս ակնարկությունը տեղ գտավ մեր սույն ուսումնասիրության մեջ: Արդարև, այսպիսով մենք սովորում ենք, թե ինչպես Աստծու կողմից փորագրված տախտակները, որոնց վրա արձանագրված էր Օրենքը, Մովսեսի ձեռքերից գետին ընկնելով ու փշրվելով, վերականգնվեցին Մովսեսի կողմից թեև ոչ ամբողջովին նույնությամբ, բայց կրելով նույն արձանագրությունը: Վերցնելով այս աշխարհի նյութով պատրաստված տախտակները՝ նա դրանք ներկայացրեց Աստծուն, որպեսզի Տերը իր զորությամբ դրանց վրա փորագրի Օրենքը: Եվ այսպես քարե տախտակների վրա փորագրված Օրենքի միջոցով նա վերստին բերում է շնորհը՝ Աստված ինքն արձանագրած լինելով քարի վրա այդ Օրենքի խոսքերը: 215. Այս դրվագի ոգով առաջնորդված՝ գուցե հնարավոր է աղոտ կերպով ինչ-որ բան իմանալ աստվածային նախախնամության մեր նկատմամբ ունեցած վարմունքից: Արդարև, եթե աստվածային առաքյալը ճիշտ է ասել՝ «տախտակներ» կոչելով մեր սրտերը[70], այսինքն՝ հոգին ղեկավարող մասը (և ինչպե՞ս կարող էր ճշմարտացի չլինել նա, «ով իր մտքով խորաքննում է Աստծու խորությունները»), ապա, հետևության կարգով, կարելի է եզրակացնել, որ մարդուս սկզբնական բնությունը եղել է ոչ դյուրաբեկ, եղել է անմահ՝ ձևավորված լինելով Աստծու ձեռքերով և դրոշմված Օրենքում չգրված հատկությունների գեղեցկությամբ, քանի որ Օրենքի կամքը մեր բնության մեջ արձանագրած է եղել հեռացումը չարից և հարգանքը աստվածային բաների հանդեպ: 216. Բայց երբ մեղքի առաջին հնչյունը (որ Սուրբ Գիրքը իր սկզբի մասում կոչում է «օձի ձայն», իսկ «տախտակների» պատմությունը՝ «հարբեցողության մեջ ընդարմացած մարդկանց ձայն»), հասավ մեր ականջներին, այն ժամանակ այդ բնությունը, գետին ընկնելով, փշրվեց: Բայց ճշմարիտ Օրենսդիրը, որի նախատիպն է Մովսեսը, իր համար նորից հղկեց մեր բնության տախտակները՝ դրանց նյութը վերցնելով երկրից: Արդարև, նրա մարմինը, որը պարունակում է Աստծուն, չի առաջացել ամուսնությունից, այլ հենց ինքն է եղել Աստծու մատով փորագրված իր սե-

փական մարմնի գործավորը. «Սուրբ Հոգին է, որ եկավ կույս Մարիամի վրա, և Ամենաբարձրյալի զորությունն է, որ հովանի եղավ Նրան»[71] (Ղուկ. 1, 35): Այս եղելությունից հետո բնությունը վերագտավ իր անբեկանելիությունը՝ «Մատի» դրոշմով դառնալով անմահ: «Մատը» այն անունն է, որ Աստվածաշունչը շատ տեղերում տալիս է Սուրբ Հոգուն (Ղուկ., 11:20):

217. Դրանով Մովսեսն այն աստիճան կերպարանափոխվում է, որ Նրա փառքի հայտնությունն անցնում է մարմնավոր աչքի կարողության սահմանը: Ով ծանոթացել է մեր հավատի աստվածային խորհրդին, նա չի անգիտանա այս պատմական դրվագի հոգևոր իմաստը: Նա, ով վերանորոգեց մեր կործանված բնությունը (դու հասկանում ես անշուշտ, որ այս խոսքը վերաբերում է Նրան, ով բուժեց մեր վերքերը), իր նախնական գեղեցկությանը վերադարձնելով մեր բնության փշրված տախտակը և այն կերպարանափոխելով իր աստվածային Մատով, այսուհետև այլևս հասու չէ միայն անարժաններին, այլ անմատչելի է նաև իրեն ուղղված հայացքներին իր փառքի անսահմանության պատճառով: 218. Արդարև, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, երբ Նա գա «իր փառքով և բոլոր հրեշտակներն էլ իր հետ միասին», հազիվ արդարները միայն կկարողանան ընդունել Նրան և տեսնել: Ինչ վերաբերում է ամբարշտին, որը պատկանում է հրեական աղանդին, ինչպես Եսայի մարգարեն է ասում, նա անկարող է տեսնել Նրան. «Թող անհետացնեն ամբարշտին, որպեսզի չտեսնի Աստծու փառքը»[72]:

219. Բայց մենք, հետևելով մեր բացատրությունների շղթային, տարվեցինք այս հատվածի հոգևոր նշանակության հետազոտությամբ: Արդ, վերադառնանք մեր բուն նյութին: Ինչպե՞ս այն մարդը, ում հստակորեն տեսանելի է դարձել Աստված բազմաթիվ աստվածահայտնությունների միջոցով (այդ մասին է վկայում Սուրբ Գիրքը, երբ խոսում է «դեմ հանդիման, ինչպես բարեկամը բարեկամի հետ»), հասած լինելով այդտեղ՝ ասես դեռևս ձեռք բերած չլիներ այն, ինչ մենք, հավատալով Սուրբ Գրքին, կարծում էինք, թե գտել է արդեն, ինչպե՞ս ուրեմն այդ մարդը խնդրում է Աստծուն, որ հայտնվի իրեն, իբրև թե Նա, որ բնավ չի դադարում երևալուց, տակավին հայտնված չլիներ իրեն: 220. Եվ վերևից եկող ձայնը հավանություն է տալիս խնդրանքով արտահայտված իր ցանկությանը և չի մերժում իրեն պարգևել այդ շնորհը ևս: Բայց այդ ձայնը Նրան նորից է մատնում հուսահատության, երբ բացատրում է, թե այն, ինչ նա փնտրում է, անցնում է մարդկային կարողության սահմանը: Եվ սակայն Աստված ասում է, որ կա «իր մոտ մի տեղ», և այդ տեղում՝ «մի ժայռ», և այդ ժայռում՝ մի «ծերպ», որի մեջ պատվիրում է Մովսեսին մնալ: Նա իր ձեռքով կծածկի այդ ծերպի մուտքը և անցնելիս կկանչի Նրան: Այդ կանչի վրա Մովսեսը դուրս կգա ծերպից, կտեսնի իրեն կանչողի թիկունքը և կկարծի տեսնել այն, ինչ փնտրում է, այնպես որ աստվածային ձայնի կողմից արված խոստումը սուտ չի լինի:

221. Եթե մեկը տառացիորեն նկատի առնի այս բաները, ապա սրանց իմաստը ոչ միայն մութ կլինի քննության համար, այլև սրանք նույնիսկ զերծ չեն լինի Աստծուն հակառակ մի նշանակությունից: Արդարև, առջևի և թիկունքի մասին կարելի է խոսել միայն այն բաների վերաբերյալ, որոնք դեմք ունեն: Արդ, ամեն դեմք մի մարմնի սահմանագծումն է: Այսպես, ով Աստծուն վերագրում է մի դեմք, չի կարող այլևս Նրան զերծ համարել մարմնական բնությունից: Ամեն մարմին բաղակցություն է: Բայց բաղակցությունը կազմված է լինում այլածին, այլատեսակ տարրերի գումարումից: Այսպես, ուրեմն, ինչ որ բաղակցված է, ոչ

ոք չի ժխտի, թե չի կարող նաև տարանջատվել: Սակայն ինչ որ բաղակցված է, չի կարող լինել անապական: Հիրավի, ապականությունը բաղակցության տարանջատումն է: 222. Ուրեմն, եթե մեկը Աստծուն վերագրում է բառացի իմաստով մի թիկունք, ապա նա անպայման կհանգի անհեթեթ մի հետևության: Արդարև, առջևը և թիկունքը մտնում են դեմք հասկացության մեջ. դեմքը գտնվում է մարմնի մեջ. այս վերջինը ի բնե եղծանելի է: Ամեն բաղկացություն եղծանելի է: Բայց ինչ որ եղծվում-քայքայվում է, չի կարող անապական լինել: Հետևաբար նա, ով տառի ստրուկն է, անհրաժեշտ մի հետևությամբ պետք է մտածի, թե Աստծու մեջ կա ապականություն: Արդ, իրականում Աստված անապական է և անմարմին[73]:

223. Բայց այդ դեպքում ի՞նչ մեկնաբանություն պետք է տալ տեքստին իր բառացի իմաստից դուրս: Արդ, եթե այս հատվածը, որը տեքստի հյուսվածքի մեկ մասն է կազմում, մեզ ստիպում է փնտրել մի ուրիշ իմաստ, ապա հարմար է, որ նույն ձևով շարժվենք նաև ամբողջ տեքստի վերաբերյալ: Արդարև, ինչ որ ճիշտ համարեցինք տեքստի մեկ մասի վերաբերյալ, անհրաժեշտ է, որ նույն դատողությունն ունենանք նաև ամբողջի վերաբերյալ: Չի կարող լինել մի ամբողջություն, որ բաղկացած չլինի մասերից: Ուրեմն այն տեղը, որ Աստծու մոտ է, այն ժայռը, որ այդ տեղում է, այն տարածությունը, որ այդ ժայռի մեջ է և կոչվում է «ծերպ», Մովսեսի մուտքը այդ ծերպի մեջ, աստվածային ձեռքի տարածումը այդ մուտքի վրա, նրա անցումը, կանչը և ապա թիկունքի տեսնվելը, - այս բոլորը ավելի հաջող կերպով կմեկնաբանվի հոգևոր իմաստով:

224. Ո՞րն է ուրեմն այս բոլորի նշանակությունը: Ինչպես որ կշռական մարմինները, թափ առնելով ինչ-որ բարձր մի գագաթից (եթե նույնիսկ առաջին մղումն ստա-



նալուց հետո ոչ ոք չգտնվի դրանք հրելու համար), իրենք իրենց գլորվում են զառիթափի վրա արագ մի շարժումով այնքան ժամանակ, որ այն մակերեսը, որի վրա դրանք շարժվում են, մնա թեք և շարունակի իջնել, եթե միայն ոչինչ չգտնվի կտրելու դրանց թափը որևէ արգելքով, այնպես էլ, հակադարձաբար, իր երկրային կապերից ազատագրված հոգին, թեթև և արագ, սլանում է վեր՝ ստորին բաներից թռչելով դեպի երկինք[74]: 225. Տրված լինելով, որ վերևից ոչինչ չի գալիս խափանելու նրա թռիչքը (որովհետև Բարու բնությունը առանձնահատկություն ունի իրեն քաշելու այն մարդկանց, որոնք իրենց աչքերը բարձրացնում են դեպի Բարին), հոգին բարձրանում է միշտ ավելի վեր ինքն իրենից՝ երկնային բաների ցանկությամբ «ձգված» լինելով «դեպի այն, ինչ առջևում է», ինչպես ասում է առաքյալը, և նրա թռիչքը նրան կտանի միշտ ավելի վեր: 226. Արդարև, չհրաժարվելու ցանկությունն այն բանից, ինչ արդեն նա ձեռք է բերել, այն գագաթներից, որոնք գտնվում են իր վերևում, նրան հաղորդում է դադար չունեցող վերելական մի շարժում, որտեղ նա իր ձեռքբերածով ստանում է մի նոր թափ՝ թռչելու համար ավելի բարձր: Միայն հոգևոր գործունեությունն ունի նրա ուժը սնելու այդ հատկությունը այն սպառելով հանդերձ, միայն հոգևոր գործունեությունն է, որ ոչ միայն չի կորցնի, այլև կավելացնի նրա զորությունը վարժության միջոցով:

227. Ահա թե ինչու մեծն Մովսեսի մասին ասում ենք, որ, դառնալով միշտ ավելի մեծ, նա ոչ մի տեղ չի կասեցնում իր վերելքը և ոչ էլ սահման է դնում իր շարժմանը դեպի բարձունքները, այլ ոտքը մի անգամ դրած լինելով այն սանդուղքի վրա, «որի վրա կանգնում էր Աստված», ինչպես ասում է Հակոբոս առաքյալը, նա չի դադարում ելնել վերևի աստիճանին՝ շարունակելով միշտ բարձրանալ, ո-

*րովհետև ամեն աստիճան, որ նա գրավում է բարձունքում, սկիզբ է դնում միշտ ավելի բարձր մի աստիճանի: 228. Նա չի ուզում լինել Եգիպտոսի Թագուհու կեղծ որդին: Նա երբայեցի իր ազգակցի կրած նախատինքի վրեժն է լուծում: Տեղափոխվում է ամայի մի վայր, որտեղ մարդկանց աղմուկը չի անհանգստացնում իրեն: Նա իր հոգում արածեցնում է խաղաղ կենդանիների հոտը: Տեսնում է լույսի ճառագայթումը: Թեթևացնում է իր վերելքը դեպի բոցը՝ հանելով իր կոշիկները: Ազատություն է պահանջում իր ընտանիքի անդամների և իր ցեղակիցների համար: Տեսնում է, որ իր թշնամիները խեղդամահ են լինում՝ խորասուզվելով ալիքների մեջ: 229. Մնում է ամպի տակ: Հագեցնում է ծարավը ժայռից: Քաղում է երկնքից իջած հացը: Տարածելով իր ձեռքերը՝ պարտության է մատնում օտարականին: Լսում է շեփորի ձայնը: Մտնում է խավարի մեջ: Թափանցում է մարդու ձեռքով չկառուցված տապանակի ծածուկ բնակությունից ներս: Սովորում է աստվածային քահանայության գաղտնիքները: Անհետացնում է կուռքը: Խաղաղեցնում Աստծու զայրույթը: Վերահաստատում հրեաների չարագործության պատճառով խորտակված Օրենքը: 230. Նա ճառագայթում է փառքով և, բարձրացած լինելով այդպիսի բարձունքներով, դեռ վառվում է ցանկությամբ և ուզում ավելին ունենալ. Նա դեռ ծարավ է այն բանով, որով հագեցել էր ծայր աստիճան, և կարծես դեռևս հագեցած չլիներ, ուզում է ձեռք բերել այն՝ աղաչելով Աստծուն, որ հայտնվի իրեն:*

*231. Ինձ թվում է, որ այս բանն զգալ կարող է միայն նա, ով օժտված է էական Գեղեցկության նկատմամբ իր ունեցած սիրո տրամադրվածությամբ, և ում հույսը անընդհատ նրան «ձգում է» իր տեսած գեղեցկությունից դեպի այն Գեղեցկությունը, որն իր տեսածից այն կողմ է գտնվում և*



*որը մշտապես բոցավառում է իր ցանկությունն այն բանով, որ տակավին ծածկված է մնում իրեն: Սրանից հետևում է, որ Գեղեցկության ջերմեռանդ սիրահարը, ընդունելով այն, ինչ նրա աչքին շարունակաբար երևում է որպես իր տեսածի մեկ պատկերը, տենչում է հագենալ հենց Սկզբնատիպի դեմքով: 232. Եվ նրա համարձակ պահանջը, որն անցնում է ցանկության սահմանները, այն է, որ նա ուզում է այդ Գեղեցկությունը վայելել ոչ թե հայելիների և արտացոլանքների միջով, այլ՝ դեմ առ դեմ: Աստվածային ձայնը խնդրվածը տալիս է հենց նրանով, որ այն մերժում է՝ քիչ բառերով տալով մտածումի անսահման մի անդունդ: Արդարև, Աստծու առատաձեռնությունը Մովսեսին տալիս է նրա ցանկության կատարումը, բայց միևնույն ժամանակ չի խոստանում նրա ցանկությանը տալ հանգիստ կամ հագեցում: 233. Եվ հիրավի, նա իրեն ցույց չէր տա իր սպասավորին, եթե իր տեսքը լիներ այնպիսին, որ դադարեցներ այլևս նրա տեսնելու ցանկությունը. քանզի հենց սրա մեջ է կայանում Աստծու ճշմարիտ տեսիլքը, այն բանի մեջ, որ նա, ով իր աչքերը բարձրացնում է դեպի Աստված, երբեք չի դադարի նրան ցանկանալուց: Ահա թե ինչու Նա ասում է. «Դու չես կարողանա տեսնել իմ դեմքը: Արդարև, ոչ ոք չի տեսնի իմ դեմքը առանց մեռնելու»: 234. Սուրբ Գիրքն այս բանը մեզ ասում է ոչ այն իմաստով, որ այդ տեսքը կարող է պատճառ դառնալ մահվան այն վայելողների համար: Արդարև, կյանքի դեմքը ինչպե՞ս կարող է երբևէ պատճառ լինել այն մարդկանց մահվան, ովքեր մոտենում են այդ դեմքին: Բայց աստվածային էակն իր էությամբ լինելով կենդանարար, իսկ մյուս կողմից աստվածային բնության բնորոշ հատկությունը լինելով ամեն սահմանումից վեր՝ նա, ով կարծում է, թե Աստված ինչ-որ որոշակի, սահմանելի մի բան է, անցնում է նրա կողքով, ով իր իսկությամբ*

գերագույն Էակն է և ըմբռնում է միայն այն, ինչ նրա մտքի ենթակայական գործունեությունը պարզ Էակի տեղ է դնում, որն ունի այն, ինչ Կյանքն է, 235. որովհետև ճշմարիտ Կյանքը այն է, որ կա իր Էությամբ: Արդ, այս Էակը անմատչելի է ճանաչողությանը: Ուրեմն, եթե կենդանարար Բնությունն անդրանցնում է ճանաչողությունը, ապա ինչ որ ըմբռնվում է մտքով, ամենևին Կյանքը չէ: Իսկ ինչ որ Կյանքը չէ, ընդունակ չէ կյանք հաղորդելու: Ուրեմն ինչ որ Մովսեսը ցանկանում է, կատարվում է հենց նրանով, որ նրա ցանկությունը մնում է անհագուրդ[75]:

236. Նա իրեն ուղղված խոսքերից սովորում է, որ աստվածայինը, իր սեփական բնությամբ, անսահման է՝ պարփակված չլինելով ոչ մի բանով: Արդարև, եթե նրան վերագրվեր որևէ սահման, այդ սահմանով անհրաժեշտաբար նկատի կառնվեր նաև այն, ինչ գտնվում է այդ սահմանից այն կողմ. որովհետև ինչ որ սահմանավոր է, բնականաբար հանգում է որևէ բանի: Այսպես՝ օդը թռչունների սահմանն է, ջուրը՝ ձկների. և ուրեմն ձուկը ամեն կողմից շրջապատված է ջրով, թռչունը՝ օդով. ձկան համար ջրի սահմանը կամ թռչնի համար օդի սահմանը ծայրագույն սահմանն է այն մակերեսի, որը պարունակում է մեկը և մյուսը, և որին հաջորդում է մյուս տարրը: Այսպես, եթե աստվածայինն ըմբռնվի որպես սահմանավոր բան, անհրաժեշտ է, որ այն շրջապատված լինի այլաբնույթ մի իրականությամբ: Տրամաբանությունը վկայում է, որ պարունակողն ավելի մեծ է լինում, քան պարունակյալը: 237. Բայց ամեն ոք համաձայն կլինի ասելու համար, որ աստվածությունը էակա՛ն Գեղեցկություն է: Արդ, ինչ որ գեղեցիկից տարբեր բնույթ ունի, բնականաբար դա գեղեցիկից տարբերվող մի բան է: Ինչ որ գեղեցիկից դուրս է, ըմբռնվում է որպես չարի կարգի մեջ մտնող մի բան: Բայց մենք հաստատեցինք, որ պարունակողն ավելի մեծ է, քան պարունակյալը: Ուրեմն նրանք, ովքեր կարծում են, թե գեղեցիկը սահմանավոր է, պետք է ընդունեն նաև, որ այն շրջապատված է չարով: 238. Բայց պարունակյալը լինելով ավելի փոքր, քան պարունակողը, պետք է եզրակացնել, որ այն, ինչ ավելի ընդարձակ է, ունի գեղեցկություն: Ուրեմն ով աստվածայինը փակում է ինչ-որ սահմանի մեջ, գեղեցիկը ենթարկում է իր հակառակի գերիշխանությանը: Բայց սա անհեթեթ բան է: Ընդունենք ուրեմն, որ ոչինչ չի շրջապատում անսահմանափակ բնությունը: Արդ, ինչ որ սահմանափակ չէ, ի բնե խուսափում է մտքի ըմբռնումից: Նաև Գեղեցիկի նկատմամբ մեր ամբողջ ցանկությունը, որը մեզ մղում է այդ վերելքին, երբեք չի դադարում տարածվելուց, ինչքան որ մեր ընթացքի մեջ առաջ ենք գնում դեպի Գեղեցիկը: 239. Եվ իրականում հենց սա է նշանակում տեսնել Աստծուն, այսինքն՝ երբեք չկարողանալ հագեցնել այդ ցանկությունը: Բայց միշտ նայելով այն բանի միջով, որով հնարավոր է տեսնել նրան, պետք է բոցավառված լինել արդեն հնարավոր չափով տեսնվածից ավելին տեսնելու ցանկությամբ: Եվ այսպես ոչ մի սահման չի կարող ընդհատել մեր վերելքի առաջընթացն առ Աստված, քանի որ մի կողմից Գեղեցիկը չունի սահման, իսկ մյուս կողմից դեպի Աստված «ձգված» ցանկության առաջընթացը չի կարող կասեցվել ոչ մի հագեցումով[76]:

240. Բայց ո՞րն է այն տեղը, որի մասին ասվում է՝ «Աստծու մոտ»: Ո՞րն է այդ Ժայռը: Եվ ո՞րն է տակավին Ժայռի մեջ գտնվող տարածությունը: Ի՞նչ է Աստծու ձեռքը, որը ծածկում է Ժայռի ծերպի բերանը: Ի՞նչ է Աստծու անցումը: Ի՞նչ է այն թիկունքը, որ Աստված խոստացել էր ցույց տալ Մովսեսին, երբ վերջինս խնդրում էր նրան, որ տեսնի իր դեմքը: 241. Այս իրողություններից յուրաքանչ-

յուրը պետք է շատ մեծ բան եղած լիներ (և արժանի Պարգևատուի առատաձեռնությանը), որպեսզի աստվածային այնքան հայտնություններից հետո, որոնք արդեն պարգևված էին մեծ սպասավորին, դրանց խոստումը թվար էլ ավելի մեծ և ավելի վսեմ: Ուրեմն ինչպե՞ս կարողանանք հասկանալ, թե ո՛րն է այն գագաթը, որի մասին խոսում է տեքստը, այն գագաթը, ուր Մովսեսը ցանկանում է բարձրանալ այնքան վերելքներից հետո, և ուր բարձրանալը հեշտացնում է նա, ով ինքն իրեն առաջնորդ է դարձնում և ապահովում ամեն բանի գործակցությունն այն մարդու բարիքի համար, ով սիրում է Աստծուն: «Ահա, - ասում է նա, - մի տեղ ինձ համար»:

242. Մտածումը դյուրությամբ ներդաշնակվում է այն բանի հոգևոր իմաստի հետ, որը նախորդում է: Արդարև, խոսելով տեղի մասին՝ նա ցույց է տալիս քանակական ոլորտի մի տարածություն, որովհետև կարելի չէ չափել մի բան, որ չի մտնում քանակական կարգի մեջ, այլ չափելի մի մակերեսի նմանությամբ նա ընթերցողին թելադրում է անհուն և անսահմանափակ մի իրականություն: Եվ ահա մոտավորապես, թե ինչ է ուզում հասկացնել մեզ. «Քանի որ դու չափազանց մեծ ցանկությամբ ձգտում ես մի բանի, որ առջևում է գտնվում (տե՛ս Փիլիպ. 3, 13), և քո ընթացքը չի ճանաչում հոգնություն, քանի որ, մյուս կողմից, դու գիտես, որ բարին չունի սահման, բայց ցանկությունը միշտ դառնում է դեպի այն կողմը, ուր ավելի մի բան կա, իմացի՛ր, որ ինձ մոտ կա մի տեղ այնքան մեծ, որ այն կտրել անցնելով՝ երբեք չես կարողանա քո ընթացքի վախճանը գտնել»: 243. Բայց այս ընթացքը մի ուրիշ տեսակետից կայունություն է: Արդարև, «Ես քեզ կհաստատեմ ժայռի վրա»: Հենց սա է բոլոր բաներից ամենաարտասովորը, անհավատալին. որ կայունություն և շարժունություն նույն



բանը լինեն. որովհետև, սովորաբար, ով առաջանում է, նա կանգնած չէ, և ով կանգնած է, նա չի առաջանում: Այստեղ նա առաջանում է հենց նրանով, որ կանգնած է: Ի՞նչ է նշանակում սա: Սա նշանակում է, որ ինչքան մեկը մնում է հաստատուն և անխախտ բարու մեջ, այնքան նա առաջանում է առաքինության ճանապարհի վրա: Արդարև, ով երերուն է և անհաստատ իր համոզմունքների հիմքի վրա (որովհետև նա հաստատ նստվածք, կայունություն չունի բարու մեջ), ով «ալեծածան է և տարուբերվող», ինչպես ասում է Պողոս առաքյալը, ով հեղհեղուկ է և երկմիտ իրերի բնության մասին իր ըմբռնումների մեջ, ինչպե՞ս կարող է առաջանալ դեպի առաքինության կատարը: 244. Ովքեր փորձում են բարձրանալ ավազաբլրի վրա, իզուր են մեծ քայլեր կատարում, իզուր են չարչարվում, որովհետև ավազը փլուզվելով միշտ նրանց իջեցնում է ներքև. կա վատնված շարժում, սակայն ոչ մեկ առաջընթաց հօգուտ այդ շարժման: Ընդհակառակը, եթե մեկը, ըստ Սաղմոսերգուի խոսքի, ետ է քաշել իր ոտքերը փոսում եղած տիղմից և դրանք հաստատել ժայռի վրա (այստեղ «Ժայռը» Քրիստոսն է՝ առաքինության լրումը), ապա նրա ընթացքն այնքան ավելի արագ է, որքան նա, ըստ Պողոս առաքյալի խորհրդի, մնում է «հաստատուն և անհողդողդ» բարու մեջ: Նրա կայունությունը թռչնի թևի նման է իր համար, և դեպի բարձունքները իր ճանապարհորդության ընթացքում նրա սիրտը կարծես թևավոր լինի բարու մեջ իր ունեցած կայունությամբ: Այսպես, Մովսեսին ցույց տալով այդ տեղը, Աստված նրան քաջալերում է, որ վազի. և խոստանալով, որ նրան կհաստատի ժայռի վրա, ցույց է տալիս, թե ինչպես պետք է կատարել աստվածային այդ վազքը[77]:

245. Գալով այն տարածությանը, որը գտնվում է ժայռի մեջ և որը Սուրբ Գրքի կողմից կոչվում է «ծերպ», աստ-

Հետևել Աստծուն

վածային Պողոս առաքյալն այն մեկնաբանում է իր գրվածքների մեջ՝ ասելով, որ «մարդու ձեռքով չկառուցված մի բնակարան» է պատրաստվել երկնքում այն օրվա համար, երբ ավերված կլինի մեր երկրային վրանը: 246. Արդարև, «ով ավարտել է իր ընթացքը», ինչպես ասում է առաքյալը, այս ընդարձակ և լայնատարած մրցասպարեզում, որ աստվածային Խոսքն անվանում է «տեղ», ով իրապես պահել է հավատը, ինչպես ասում է հավատո հանգանակը, «հաստատած լինելով իր ոտքերը ժայռի վրա», նա մրցամարտերի Նախագահի ձեռքով կպսակվի արդարության դափնեպսակով: Այս վարձատրությունը Աստվածաշնչում նշված է տարբեր անուններով: 247. Արդարև, նույն իրականությունն է, որ այստեղ նշված է «ժայռի ծերպ» անունով, իսկ Սուրբ Գրքի այլ հատվածներում՝ «դրախտի երջանկություն», «հավերժական տապանակ», «օթևան Հոր մոտ», «Աբրահամի գոգ», «երանության պսակ», «գեղեցկության պսակ», «հզոր աշտարակ», «ողջերի երկիր», «հանգստյան ջուր», «վերին Երուսաղեմ», «երկնքի արքայություն», «ընտրյալների վարձ», «փառքի պսակ», «տոնական խնջույք», «արդարության աթոռ», «անվանի վայր», «տապանակի գաղտնիք» և այլ անուններով[78]: 248. Կասենք ուրեմն, որ Մովսեսի մուտքը Ժայռի մեջ նույն բանն է նշանակում, ինչ որ այս բոլոր արտահայտությունները: Արդարև, քանի որ Պողոս առաքյալի կողմից Քրիստոսը կոչվել է «Ժայռ», քանի որ մենք հասկանում ենք, թե Քրիստոսի մեջ են պարունակվում հուսացյալ բոլոր բարիքները, և գիտենք նաև, թե նրա մեջ են գտնվում բարիքների «բոլոր գանձերը», ուստի ով իր մեջ ունի ինչ-որ բարի բան, նա անպայման Քրիստոսի մեջ է, որը բովանդակում է ամեն բարի բան:



249. Ով առաջացել է մինչև այդտեղ և ծածկվել Աստծու ձեռքով, ըստ Մովսեսին ուղղված խոսքի (Աստծու ձեռքը, անկասկած, բոլոր էակներին ծնունդ տվող «ստեղծագործ զորությունն է՝ Եզակի Աստվածը, որի միջոցով է եղել ամեն բան» և որը միաժամանակ «տեղ» է վազողների համար. Նա, ըստ իր սեփական խոսքերի, «վազքուղի» է, Ժայռ՝ ամրացածների համար, Բնակարան՝ հանգստացողների համար), կլսի Աստծուն, որը կանչում է իրեն, և կմնա Աստծու հետևում, այսինքն՝ «կքայլի Տեր Աստծու հետևից»՝ ըստ Օրենքի պատվերի: 250. Դա այն կանչն է, որ Դավիթը շատ լավ հասկացավ, երբ Ամենաբարձրյալի հովանու տակ պատսպարվողին ասաց. «Նա քեզ կծածկի իր թևերով» (սա նույն բանն է, ինչ որ Աստծու հետևում լինելը. արդարև, թևերը լինում են հետևում) և երբ աղաղակեց Աստծուն՝ ասելով. «Իմ հոգին քեզ է կապված, քո աջը պահպանում է ինձ»: Դու տեսնում ես, թե ինչպես սաղմոսը ներդաշնակվում է պատմությանը: Հիրավի, ինչպես որ Դավիթն ասում է, թե Աստված իր աջով կպահպանի նրան, ով կապվում է իրեն, այնպես էլ այստեղ ձեռքը դիպչում է նրան, ով Ժայռի մեջ սպասում է աստվածային կանչին և պահանջում, որ հետևեն իրեն: 251. Տերն ինքը, որ այն ժամանակ այս պատգամը տվել էր Մովսեսին, երբ գալիս է ի կատար ածելու իր սեփական օրենքը, նույն ձևով արտահայտվում է իր աշակերտներին՝ բացահայտելով իմաստն այն բանի, ինչ ասվել էր փոխաբերաբար: Նա ասում է. «Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ» և ոչ թե՝ «Եթե մեկն ուզում է իմ առջևից գնալ»: Իսկ նրան, ով մի խնդրանք է ուղղում իրեն հավիտենական կյանքի մասին, նույն բանն

Կրքերից այն կողմ

է առաջարկում. «Արի՛ իմ հետևից»: Արդ, ով մեկի հետևից է գնում, դառնում է դեպի նրա թիկունքը:

252. Ուրեմն Աստծուն տեսնելու իր ցանկության մեջ այն ուսուցումը, որ Մովսեսն ստանում է Նրան տեսնելու հնարավոր միակ ձևի մասին, հետևյալն է. հետևել Աստծուն՝ ուրտեղ էլ նա առաջնորդի. հենց սա է Աստծուն տեսնելը[79]: Արդարև, նրա «անցումը» նշանակում է, որ նա առաջնորդում է նրան, ով հետևում է իրեն: Հիրավի, ով ճանապարհը չգիտե, չի կարող ապահով ճանապարհորդել, եթե չհետևի առաջնորդողին: Առաջնորդը, նրա առջևից գնալով, ցույց է տալիս ճանապարհը: Ուրեմն ով որ հետևում է նրան, չի շեղվի ուղիղ ճանապարհից, եթե դեմքով միշտ դարձած է մնում իրեն առաջնորդողի թիկունքին:

253. Արդարև, եթե նա իր շարժման մեջ մի պահ տարվի գնա այս կամ այն կողմ, կամ եթե անցնի իր առաջնորդի դիմացը, ապա կբռնի իր առաջնորդի ցույց տված ճանապարհից մի այլ ճանապարհ: Նաև ասված է առաջնորդողին, թե՝ «Դու չես տեսնի Նրա դեմքը», այսինքն՝ «Մի՛ անցիր քո առաջնորդի դիմացը». որովհետև այդ պարագայում դու կվազես նրան հակառակ ուղղությամբ: Բարի մի բան չի հակադրվում մի ուրիշ բարի բանի, այլ հետևում է դրան: 254. Ինչ որ հակառակ է բարուն, այն է դիմակայում նրան: Արդարև, արատը գտնվում է առաքինության հակառակ ուղղության վրա: Բայց առաքինությունը չի կարող դիմակայել առաքինությանը: Ուրեմն Մովսեսը կանգնած չէ բնավ Աստծու դիմաց, այլ նրան նայում է թիկունքից: Հիրավի, ով նրան նայում է դիմացից, չի կարող ապրել, ինչպես վկայում է Աստծու հետևյալ խոսքը. «Ոչ ոք չի ապրի, եթե տեսնի Տիրոջ դեմքը»: 255. Տեսնում ես, թե ինչքան կարևոր է Աստծուն հետևել սովորելը, քանի որ այս վեհաքանչ բարձրացումից և սարսափով ու փառքով լի այս



աստվածահայտնություններից հետո, գրեթե իր կյանքի վախճանին, հազիվ այդ շնորհին արժանացավ նա, ով սովորեց քայլել նրա հետևից: Բայց նրա համար, ով այսպես հետևում է Աստծուն, չարի հարուցած հակառակություններից ոչ մեկն այլևս չի հակադրվում իր ընթացքին:

256. Դրանից հետո նրա եղբայրների նախանձն է, որ բարձրանում է նրա դեմ: Նախանձը՝ այն կիրքը, որ չարի առաջին պատճառն է, մահվան սկիզբը, մեղքի առաջին մուտքը մարդու հոգում, արատի արմատը, տխրության աղբյուրը, դժբախտությունների մայրը, անհնազանդության պատճառը, ամոթի սկիզբը: Նախանձն է, որ մեզ վտարեց Դրախտից՝ դառնալով օձ՝ Եվային հրապուրելու համար. նախանձն է, որ մեզ հեռացրեց կենաց ծառից և, մերկացնելով մեզ սրբազան զգեստներից, մեզ ծածկեց թզենու ծիծաղելի տերևներով[80]. 257. Նախանձն է, որ Կայենին գրգռեց իր եղբոր դեմ և սկիզբ դրեց մահվան, որը պատժվեց յոթն անգամ. Նախանձն է, որ գերի դարձրեց Հովսեփին. Նախանձը մահացու խայթոցն է, թաքնված սուրը, մեր բնության հիվանդությունը, թունավոր մաղձը, ընդաբույս փտությունը, դրուժան նետը, հոգու բևեռը, ներքին հուրը, աղիները հրկիզող բոցը: 258. Նախանձը դժբախտություն է համարում ոչ թե իր առաջ բերած չարիքը, այլ՝ ուրիշի բարիքը և, ընդհակառակը, հաջողություն է տեսնում ոչ թե իր սեփական բարիքի մեջ, այլ՝ ուրիշի դժբախտության մեջ: Նախանձը տխրում է ի տես մարդկանց երջանկության և արհամարհում նրանց դժբախտությունները[81]: Ասում են, որ անգղերը, որոնք դիակներ են հոշոտում, ոչնչանում են անուշահոտություններից: Արդարև, նրանց բնությունը

նմանություն ունի այն բանի հետ, ինչը նեխված է, ժանտահոտ և ապականված: Այսպես, ուրեմն, ով այս հիվանդության զոհն է, տխրում է իր մերձավորի բարեկեցությունից, ինչպես անուշահոտության առկայությունից, բայց եթե տեսնում է, որ ինչ-որ ձախորդություն կամ ծանր դեպք է պատահում մեկ ուրիշին, ապա խոյանում է նրա վրա, իր կեռ կտուցը խրում մարմնի մեջ՝ փորելով այն մինչև նրա սրտի խորքը:

259. Նախանձը Մովսեսի առաջ պարտության էր մատնել շատ մարդկանց: Հարձակվելով այս մեծ մարդու վրա՝ նա փշրվեց նրա դեմ, ինչպես փշրվում է թրծված կավե անոթը՝ բախվելով մի ապառաժի: Սրանում էր մանավանդ ի հայտ եկել Աստծու հետ քայլելու առավելությունը, ինչպես այդ անում էր Մովսեսը՝ շարունակելով իր ընթացքը աստվածային այդ վայրում, ամուր կանգնելով Ժայռի վրա, շրջապատված նրա գրաված տարածությամբ, ծածկված Աստծու ձեռքով և հետևելով իր առաջնորդին առանց անցնելու նրա դիմացը, այլ թիկունքից նայելով նրան: 260. Այն հանգամանքը, որ նա բարձրացել-կանգնել էր աղեղի հասողությունից վերև[82], ապացուցում է, որ Աստծուն հետևած լինելու պատճառով նա գերերջանիկ վիճակում էր: Արդարև, նախանձը նրա դեմ ևս փորձեց արձակել իր նետը: Սակայն նետի սլացքը չհասավ այն բարձրությանը, որտեղ գտնվում էր Մովսեսը: Չարության լարը անկարող եղավ բավականաչափ հեռու արձակելու իր կիրքը՝ գնալ խոցելու համար Մովսեսին, որն անչափ հեռու էր գտնվում այն մարդկանցից, որոնց նախապես հասել էր այն: Ահարոնը և Մարիամը, սակայն, վիրավորվեցին մախանքի կրքից և, դառնալով նախանձի աղեղ, նետերի նման խոցող խոսքեր արձակեցին նրա դեմ:

261. Բայց նա այնքան հեռու էր նրանց չարությունը



բաժանելուց, որ մինչև անգամ խնամում էր այն մարդկանց, ովքեր խոցված էին դրանից. ոչ միայն վրեժխնդրության չէր դիմում նրանց դեմ, որոնք վնասել էին իրեն, այլ նաև միջնորդում էր նրանց համար Աստծու մոտ՝ իր կատարած գործերով ցույց տալով, որ նա, ով լավ է պաշտպանված առաքինության վահանով, երբեք չի վիրավորվի սրածայր նետերից: 262. Այդ վահանը բթացնում է դրանց սուր ծայրերը, և զրահի ամրությունը ետ է արձակում սլացող նետերը: Զրահը, որը պաշտպանություն է այդպիսի նետերի դեմ, հենց ինքը Աստված է, որը զինավառում է առաքինության մարտիկին: Արդարև, ասված է. «Զգեստավորվեցե՛ք Հիսուս Քրիստոսով» (Հռոմ., 13:14): Հենց նա է ամրակայուն, բայց ոչ ծանր զրահը, որի ուժեղ պաշտպանությունը թույլատրեց Մովսեսին, որ անզոր դարձնի չար Աղեղնավորին: 263. Հիրավի, նա չբռնվեց վրեժխնդրության զգացումով այն մարդկանց դեմ, ովքեր անիրավ էին գտնվել իր նկատմամբ. և այն ժամանակ, երբ նրանք դատապարտվել էին արդար մի դատաստանով, նա, չկամենալով հաշտվել այն բանի հետ, ինչն իրավամբ արդարություն էր միայն, աղաչանքով դիմեց Աստծուն, որ ների իր եղբայրներին, մի բան, որ նա չէր անի, եթե հետևած չլիներ Աստծուն, որը նրան ցույց էր տվել իր հետքերը որպես ապահով ճանապարհ՝ գնալու դեպի առաքինություն:

264. Բայց շարունակենք: Երբ մարդկանց բնական թշնամին այլևս տեղ չգտավ նրա մեջ, որտեղից կարողանար խոցել նրան, նա իր պատերազմը շուռ տվեց դեպի ամենաթույլերը և, որկրամոլությունը որպես նետ արձակելով ժողովրդի վրա, եգիպտական ճաշակով վարակեց նրանց՝ երկնային սննդից նախընտրել տալով եգիպտական շվայտ խրախճանքները: 265. Մովսեսը, սակայն, իր հոգին բարձր պահելով և այդպիսի մի կրքից վեր բարձրանալով՝ ամբող-

Պղնձե օձը

ջովին հանձնվել էր գալիք ժառանգությանը, որն Աստծու կողմից խոստացվել էր նրանց, որոնք հոգեպես դուրս էին գալու Եգիպտոսից և ճանապարհվելու էին դեպի այն երկիրը, ուր հոսում է մեղր ու կաթ: Ահա թե ինչու նա հետախույզներ նշանակեց, որպեսզի տեղեկություններ բերեն իրեն այնտեղի գեղեցկությունների մասին: Նրանք, ովքեր բերեցին բարի հույսեր, դրանք, ըստ իս, հավատից ծնված այն տրամադրություններն են, որոնք ամուր են պահում հույսը նախապատրաստված բարիքների նկատմամբ: Իսկ, ընդհակառակը, նրանք, ովքեր կասկածանքով են մոտենում բարի հույսերին, դրանք հակառակորդից եկող այն մտածումներն են, որոնք բթացնում են հավատը խոստացված բարիքների նկատմամբ: Բայց Մովսեսը, հաշվի չառնելով բնավ իրար հակասող խոսքերը, հավատ է ընծայում նրան, ով լավ տեղեկություններ է բերում այդ երկրի մասին: 267. Արդ, Հեսուն ղեկավարն էր նրանց, ովքեր նպաստավոր լուրեր էին բերում. նա իր հեղինակությամբ ամրացնում էր հավատը խոստացված բաների հանդեպ: Հակված լինելով նրա կողմը՝ Մովսեսը հաստատ հույս ուներ գալիք բարիքների նկատմամբ՝ այդ երկրում եղած հաճույքները գուշակել տվող մի նշան տեսնելով այն «ողկույզի» մեջ, որ Հեսուն բերել էր իր հետ՝ մի ձողից կախած: Լսելով Հեսուին վերաբերող այս խոսքը, որը մեզ տեղեկություն է տալիս փայտից կախված ողկույզի մասին, դու գուշակում ես անշուշտ այն երկիրը, որի տեսքը Մովսեսին հաստատ է պահում իր բարի հույսերի մեջ: 268. Արդարև, փայտից կախված ողկույզը ի՞նչ կարող է լինել, եթե ոչ իր վերջին օրերին խաչափայտից կախված մեր Տերը, որի արյունը փրկության խմիչք է դառնում նրանց համար, որոնք հավատում են: Դրանով Մովսեսը նախապես, որպես առեղծված, հայտնում էր մեզ, որ «նրանք խմում էին գինին՝ ողկույզի արյունը», որը խորհրդանշում է Քրիստոսի փրկարար չարչարանքները:

269. Այնուհետև ճանապարհը նորից կտրում-անցնում է անապատը, և ժողովուրդը, հուսահատված խոստացված բարիքներից, ուժասպառ է լինում ծարավից: Բայց Մովսեսն անապատում ժայռից դարձյալ ժայթքեցնում է ջուրը նրանց համար: Այս խոսքը հոգևոր իմաստով մեզ սովորեցնում է, թե ինչ բան է ապաշխարության խորհուրդը: Արդարև, ովքեր ժայռից բխող ջուրը մի անգամ ըմբոշխնելուց հետո շեղվում են դեպի որովայնը, այսինքն՝ դեպի մարմինն ու եգիպտացիների հաճույքները, դատապարտվում են զրկվելու այն բարիքներից, որ նրանք վայելում էին[83]: 270. Բայց նրանք կարողանում են նորից գտնել ժայռը, որ լքել էին, նորից բաց անել ջրի երակը և նորից հագեցնել իրենց ծարավը աղբյուրից: Ժայռը պարգևում է այդ ջուրը նրան, ով առավել վստահում է Հեսուին, քան նրա հակառակորդների բերած տեղեկությանը և իր աչքերը բարձրացնում դեպի կախված և մեզ համար արյունաթաթախ դարձած «ողկույզը». նա է իր փայտով նորից բխեցնում ժայռի աղբյուրը նրանց համար[84]:

271. Բայց ժողովուրդը դեռ չի սովորել հետևել Մովսեսի մեծության հետքերին: Նա դեռևս հրապուրված է ստրկական ցանկություններով և հակված է եգիպտական հեշտակեցությանը: Դրանով պատմությունը ցույց է տալիս, որ մարդկային բնությունը ամենից ավելի տարվում է այս կրքով, որը հազար կողմով ենթակա է վերածվելու հիվանդության: 272. Ահա թե ինչու բժշկի նման, որն արգելում է, որ հիվանդությունը հաղթանակի, Մովսեսը չի թողնում,

Մեծամտությունը

որ չարը մինչև մահ գերիշխի մարդկանց վրա: Քանի որ նրանց անկարգ ցանկությունները առաջ էին բերում թունավոր օձեր, որոնց խայթվածքը մահացու թույն էր ներարկում նրանց մեջ, ովքեր դառնում էին դրա զոհերը, մեծ Օրենսդիրը իրական օձերի զորությունը վնասազերծեց օձի պատկերով[85]:

273. Բայց ժամանակն է լուսաբանելու այս առեղծվածը: Գոյություն ունի միայն մեկ դեղթափ այս վատ ախտերի դեմ. դա մեր հոգիների մաքրագործումն է կրոնի խորհրդի ներգործությամբ: Արդ, այս խորհրդի մեջ գլխավորն այն է, որ մեր հոգու հայացքն ուղղենք մեր Տիրոջ չարչարանքներին, Նրան, ով մեզ համար հանձն առավ տառապել: Չարչարանքը դա խաչն է: Նաև «ով որ նայում է» դեպի խաչը, ինչպես ցույց է տալիս Սուրբ Գիրքը, նա չի վնասվում ցանկության թույնից: 274. Արդ, դառնալ դեպի խաչը՝ նշանակում է իր ողջ կյանքը մահացնել աշխարհի համար, նշանակում է լինել «խաչված», այնպես որ այդ կյանքը չկարողանա տարվել որևէ մեղքով, ինչ որ, իսկապես, նշանակում է, ինչպես ասում է մարգարեն՝ «մեխել իր սեփական մարմինը Աստծու երկյուղով»: Արդ, մարմինը պահող մեխը մեր ժուժկալությունն է մարմնական ցանկությունների մեջ: 275. Ուրեմն, քանի որ անկարգ ցանկությունները գետնից դուրս են հանում մահաբեր օձերը (որովհետև հեշտասիրության ամեն ծնունդ մի օձ է), այդ պատճառով Օրենքը մեզ ցույց է տալիս Նրան, ով երևում է խաչափայտի վրա: Դա օձի պատկերն է և ոչ թե օձը՝ ըստ Պողոս առաքյալի խոսքի, որ ասում է. «Մեղավոր մարմնի նմանությամբ»: Իսկական օձը մեղքն է: Եվ նա, ով գնում է դեպի մեղքը, օձի բնություն է ստանում: 276. Բայց մարդն ազատվեց մեղքից նրա՛ շնորհիվ, ով մեղքի կերպարանք ստացավ, ով մե՛զ նմանվեց, մեզ, որ դարձել էինք դեպի օձը և նրա կերպարանքն ստացել: Նրա միջոցով արգելվեց մահը, որ օձի խայթվածքներից է գալիս, բայց սողուններն իրենք չոչնչացան: Սողուններ ասելով ես հասկանում եմ ցանկությունները: Արդարև, ովքեր իրենց հայացքն ուղղում են Խաչին, ենթակա չեն այլևս մեղքերի խայթվածքներից առաջ եկող տխրագին մահվան, բայց ցանկությունը, որ գործում է նրանց մարմնի մեջ Սուրբ Հոգու դեմ, ամբողջովին չի ոչնչանում: 277. Իրականում ցանկության խայթվածքները հաճախ իրենց զգացնում են նույնիսկ հավատացյալների մոտ[86], բայց այն մարդը, որ իր հայացքն ուղղում է Տիրոջը, որը բարձրացվեց խաչափայտի վրա, վանում է կիրքը՝ լուծելով Նրա թույնը պատվիրանի, ինչպես մի դեղանյութի միջոցով: Որ անապատում բարձրացած օձը խաչի խորհուրդի մի խորհրդանշան է, դա մեզ հստակորեն սովորեցնում է Տիրոջ ձայնը, որ ասում է. «Ինչպես որ Մովսեսն անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ պետք է բարձրանա մարդու Որդին»:



278. Բայց մեղքը շարունակում է իր սովորական ընթացքը՝ կանոնավոր կերպով առաջ գնալով ըստ խեղաթյուրված օրենքի: Եվ Օրենսդիրը, որպես լավ բժիշկ, շարունակում է խնամք ցուցաբերել այնքան ժամանակ, քանի դեռ չարը, զարգանալով, աստիճանաբար փոփոխվում է: Արդարև, հենց որ օձերի խայթվածքը անզոր է դառնում նրանց համար, ովքեր դառնալով նմանվում են օձին (ասվածից կարծում եմ դու կատարելապես հասկանում ես այս խորհրդանշանի իմաստը), նա, ով նյութում է մեր դեմ զանազան խորամանկություններ, հնարում է մեղքի մի ուրիշ եղանակ: 279. Դեռ այսօր էլ կարելի է տեսնել, որ դա տե-

Ճշմարիտ քահանայությունը

ղի է ունենում շատերի մոտ: Արդարև, առավել խստակրոն մի կյանքից հետո հենց որ նրանց հաջողվում է հանդարտեցնել հեշտասիրության կիրքը, նրանք իրենց մղում են դեպի քահանայություն՝ անսանձ մի փառասիրությամբ ջանալով ձեռք անցկացնել սրբազան բարձր պաշտոններ թաքուն մեքենայությունների միջոցով: Սա է, որ պատմությունը դատապարտում է որպես պատճառ մարդկային դժբախտությունների, սա է, որ մարդկանց քաշում-գցում է մեղքերի ճակատագրական խառնակ շրջապտույտի մեջ: 280. Երբ հեշտասիրության ստրուկներ դարձած այդ մարդկանց հոգիներում երկիրն այլևս դադարում է օձեր արտադրելուց խաչափայտի վրա բարձրացված մեր Տիրոջ հանդեպ իրենց ունեցած հավատի պատճառով, և երբ նրանք համոզվում են, որ այլևս չեն ենթարկվի օձերի թունավոր խայթվածքներին, այն ժամանակ հեշտասիրության կիրքը հանգած լինելով նրանց մեջ՝ իր հերթին գլուխ է բարձրացնում մեծամտության հիվանդությունը[87]: Մտածելով, որ անարգ բան է գամված մնալ նշանակված նույն տեղի վրա, նրանք իրենց մղում են դեպի քահանայական բարձրագույն աստիճանը՝ խարդավանքով ջանալով հեռացնել նրանց, ովքեր Աստծուց են ստացել այդ սրբազան պաշտոնը[88]: Այդպիսիներն են, որ սուզվելով խորխորատի մեջ՝ կորստյան մատնվեցին, և ինչ որ մնում էր իրենց կուսակցությունից, այրվեց ու ոչնչացավ կայծակի հարվածից: Այս պատմությամբ Սուրբ Գիրքը, կարծում եմ, մեզ սովորեցնում է, որ մեծամտության վերելքն ունի մի սահման. դա վայրէջքն է երկրի տակ: Եվ գուցե, մեկնելով այս կետից, իրավացիորեն մեծամտությունը պետք է սահմանել որպես մի վերելք դեպի ցած[89]: 281. Եթե մարդկանց մեծ մասը սրա հակառակն է մտածում, ապա չպետք է զարմանալ. արդարև, մարդկանց մեծամասնությունը մտածում է,



որ մեծամտություն բառը նշանակում է ուրիշներից բարձր դիրքի վրա լինել: Բայց հիշատակված դեպքերի իրականությունը հաստատում է մեր սահմանումը: Հիրավի, եթե նրանք, ովքեր, իրենք իրենց բարձրացնելով ուրիշներից վեր, սուզվել են ցած հենց այն պատճառով, որ երկիրը նրանց համար մի խորխորատ է բաց արել, ապա չի կարելի մերժել այն սահմանումը, որը մեծամտությունը համարում է որպես խորագույն անկում: 282. Այս բաների դիտարկումով Մովսեսը մեզ սովորեցնում է լինել համեստ և երբեք չհպարտանալ մեր բարի գործերով, այլ ներկան ապրել միշտ բարի տրամադրություններով. քանզի ցանկասիրության կրքերը հաղթահարած լինելու համար չէ, որ մենք զերծ կլինենք այլևս ուրիշ ձևի կրքերից բռնվելու վտանգից: Արդարև, ամեն կիրք անկում է որպես կիրք, և կրքերի տարբերությունը առաջ չի բերում անկման տարբերություն: Ով սայթաքում է զգայական հաճույքների հարթ մակերեսի վրա, ընկնում է. և նա, ում սայթաքեցնում է մեծամտությունը, տապալվում է: Ուրեմն անկման ոչ մի ձև ցանկալի չէ նրա համար, ով ճիշտ է տեսնում: Բայց ամեն անկումից պետք է խուսափել հավասարապես որպես անկում: 283. Ուրեմն, եթե դու տեսնում ես դեռ այսօր մեկին, որը մաքրվել է իր զգայական հաճույքներին վերաբերող թուլությունից, բայց որը իրեն բարձր կարծելով ուրիշներից՝ խարդավանքի միջոցով մղվում է դեպի քահանայություն, ապա համարի՛ր, որ դու տեսնում ես մի մարդու, որն իր հպարտության բարձունքից ընկնում է երկրից էլ ցած:

284. Արդարև, Օրենքը մեզ ուսուցանում է, որ քահանայությունը սուրբ և մարդկայինից վեր մի բան է: Օրենքն

Արքայական ճանապարհը

*այդպես է ուսուցանում մեզ։ Մովսեսը, իսրայելական յուրաքանչյուր ցեղից բերված ճյուղերի վրա նշելով նվիրատուների անունները, դրանք զետեղում է խորանի վրա, որպեսզի այն ճյուղը, որն ընտրվի մյուս բոլոր ճյուղերի մեջ, լինի վերևից կատարված ընտրության վկայությունը։ Այս բանն արվելուց հետո մյուս ցեղերի ճյուղերը մնացին այնպես, ինչպես որ կային։ Բայց քահանայի ճյուղը առանց ցողի և առանց արտաքին որևէ միջամտության, այլ սոսկ իր մեջ գործող աստվածային զորությամբ ինքն իրեն արմատակալվելով՝ տվեց տերևներ և մի պտուղ։ Եվ այդ պտուղը հասունացավ։ Դա մի նուշ էր։ 285. Այս եղելությունը ժողովրդի բոլոր անդամներին սովորեցրեց մնալ իրենց տեղում։ Գալով մրգին, որն աճեց Ահարոնի գավազանի վրա, դրանում պետք է տեսնել այն իրողությունը, թե ինչպիսին պիտի լինի քահանայի կյանքը. արտաքուստ կարծր, դաժան և դժվարին, իսկ ներքուստ իր մեջ գաղտուկ պարփակելով այն, ինչ կարելի է ուտել։ Դա ի հայտ է գալիս, երբ, ժամանակի ընթացքում, միրգը հասունանում է, կեղևակալվում և փայտացած պատյանը, որն իր մեջ ամփոփում է պտուղը, կոտրվում։ 286. Բայց երբ դու տեսնում ես մի քահանա, որի կյանքը նման է բուրումնավետ կարմրավուն մրգի, ինչպես դա վերաբերում է շատերին, որոնք վուշից պատրաստած ծիրանագույն զգեստներ են հագնում, որոնք ճարպակալվում են՝ խրախճանքների մեջ հղփանալով և խմելով զտված ընտիր գինի, որոնք օծվում են լավագույն անուշահոտություններով, մի խոսքով՝ օգտվում կյանքի բոլոր վայելքներից, ահա այսպիսիների մասին ամենայն իրավամբ դու կարող ես ասել Ավետարանի այն խոսքը, թե՝ տեսնելով «պտուղը»՝ ես այդ պտղից չեմ ճանաչում քահանայական «ծառը»։ Ուրիշ է քահանայության պտուղը և ուրիշ՝ այս մեկը. այն մեկը ինքնազոհություն է ու զրկանք,*



*այս մեկը՝ վայելք. այն մեկը չէր սնվել երկրային ցողով, այս մեկը ոռոգված է այս աշխարհի հաճույքներով, ինչպես ջրի բազմաթիվ երակներով, որոնք իր ապրած կյանքին տալիս են շողշողուն փայլ։*

*287. Երբ ժողովուրդը ձերբազատվում է այս կրքից, այն ժամանակ նա մտնում է անծանոթ կյանքից ներս արքայական ճանապարհով[90], ուր Օրենքն առաջնորդում է նրան առանց թույլ տալու, որ նա շեղվի այս կամ այն կողմ։ Արդարև, ճանապարհորդի համար վտանգավոր է խոտորվել դեպի եզերքները։ Երբ երկու խոր անդունդներ իրենց միջև սեղմում են անհարթ մակերեսի վրա գտնվող մի արահետ, այդտեղով անցնողի համար միշտ վտանգ կա, այս կամ այն կողմ թեքվելով, հեռանալու մեջտեղից։ Զառիթափի երկու կողմերից հավասարապես վիհը պատրաստ է կուլ տալու նրան, ով շեղվում է և գնում դեպի եզերքը։ Այդպես էլ Օրենքն ուզում է, որ իր հետքերին հետևողը «ո՛չ աջ և ո՛չ ձախ կողմից» չլքի ճանապարհը, որը, ինչպես ասում է Տերը, «անձուկ է և նեղ»։ 288. Այս խոսքը, որը սահմանում է, թե առաքինությունները գտնվում են մեջտեղում, պարունակում է մի ուսուցում։ Արդարև, ամեն չար բան առաքինության համեմատությամբ առաջ է գալիս մի պակասից կամ մի ծայրահեղությունից։ Այսպես, ինչ վերաբերում է քաջությանը, երկչոտությունը առաքինության պակաս է, իսկ հանձնապաստանությունը կամ ժպրհությունը՝ առաքինության ծայրահեղություն[91]։*

*289. Այսպես է նաև մնացած բոլոր բաների համար, որոնք արվում են բարի նպատակով։ Դրանք գտնվում են մեջտեղում, վտանգավոր հարևանությունների միջև։ Ի-*

Կրքերի կախարդանքը

մաստությունը գտնվում է՝ ճարպկության և միամտության միջև. ո՛չ «օձի խորամանկությունն» է գովելի և ո՛չ էլ «աղավնու միամտությունը», եթե երբևէ դու այս երկուսից մեկը և մյուսը վերցնում ես առանձին և ինքն իր մեջ: Բայց միջին դիրքավորումը, որը միացնում է այս երկուսը, առաքինություն է: Ով որ չունի ժուժկալություն, անառակ է, իսկ ով ծայրահեղորեն է կիրառում դա, «մտքով հիվանդ» է, ինչպես ասում է Պողոս առաքյալը: Հիրավի, մեկը անզուսպ կերպով անձնատուր է լինում հաճույքների, մյուսն արհամարհում է ամուսնությունը, ասես դա չնություն եղած լիներ: Ոսկեղեն միջինը ժուժկալությունն է: 290. Քանի որ Տիրոջ խոսքով այս աշխարհը «հաստատված է չարի մեջ», և այն ամենը, ինչ հակադրվում է առաքինությանը (որ ինքը չարն է), օտար է օրենքի հետևորդներին, նա, ով իր ողջ կյանքում ուղևորվում է այս չար աշխարհի միջով, ինքնավստահ և ապահով կկատարի առաքինության համար անհրաժեշտ այդ ճանապարհորդությունը, եթե իրապես պահպանի ուղիղ և մեծ ճանապարհը, այն ճանապարհը, որը կոխոտված և մաքրված է առաքինությամբ՝ չշեղվելով բնավ դեպի չկոխոտված, արատավոր ճանապարհները, որոնք պարզվում են այս ու այն կողմից:

291. Քանի որ, ինչպես ասվեց, հակառակորդի հարձակումն սկսում է բարձրանալ առաքինության բարձրացման հետ միաժամանակ, և նա առիթներ է փնտրում մարդկանց շեղելու դեպի չարը, հենց այն ժամանակ, երբ ժողովուրդը, կյանքում հասունանալով, սկսում է ապրել Աստծուն հաճելի կյանքով, հակառակորդը փորձում է կատարել մի ուրիշ նոր հարձակում վարժ ռազմագետների ձևով: Սրանք,



երբ գտնվում են մի բանակի ներկայությամբ, որին կանոնավոր մարտում դժվար է պարտության մատնել նրա գերազանց զորության պատճառով, թշնամու դեմ պատերազմ են մղում՝ դարանակալությամբ կամ ծուղակ լարելով: Այդպես էլ Չարի իշխանը ճակատային մարտով իր ուժերը չի հակադրում նրանց դեմ, ովքեր զորացել են հավատով և առաքինությամբ, այլ իր հարձակումը կազմակերպում է թաքուն, դարան դնելու միջոցով: 292. Դրա համար նա կոչ է անում կախարդության զինակցությանը նրանց դեմ, ում վրա է ուզում հարձակվել: Սույն պատմությունը մեզ ներկայացնում է այդ զինակցին հանձին մի գուշակի կամ մի կախարդի, որն ուներ դիվական ինչ-որ գործողությամբ իր հակառակորդներին վնասելու զորություն և որը, մադիանացիների բռնակալի կողմից վարձված լինելով իր նզովքներով վնասելու համար նրանց, ովքեր ապրում էին հանուն Աստծու, այդ նզովքը վերածեց օրհնության: Գալով այն բանին, որը հոգևոր իմաստով նշանակում է, թե կախարդությունն իսկ անզոր է նրանց դեմ, ովքեր ապրում են ըստ առաքինության, և թե աստվածային օգնությամբ պաշտպանված մարդիկ վեր են ամեն հարձակումից, դա մեզ հասկանալի կդարձնի մեր նախկին խորհրդածությունների շարունակությունը: 293. Որ մեր նշած անձնավորությունը բախտագուշակություններով էր զբաղվում, դա հաստատում է սույն պատմությունը՝ ասելով, որ նա մարդկանց ճակատագրերը գուշակել տվող վիճակներ ուներ իր ձեռքում, հետևություններ էր անում կանխանշաններից և, ամենից առաջ, իր էշի զռոցով տեղյակ էր դառնում այն բաներին, որ ուզում էր իմանալ: Էշի ձայնը (արդարև, նա սովորություն ուներ դիմելու կենդանիների ձայնին հանուն դիվական մի արվեստի) մեզ ներկայացվում է Սուրբ Գրքից որպես հոդաբաշխված ձայն. սա ցույց է տա-

Մովաբացիների դուստրերը

*լիս մեզ, որ նրանք, ովքեր նախազգուշացվում են դևերի մոլորությունից, մինչև իսկ որպես ազդարարող խոսք են ընդունում այն ուսուցումը, որ իրենց գալիս է կենդանիների ձայնի միջոցով: Հնազանդվելով այդ ձայնին՝ նա իր մոլորություններին գործիք դարձած հենց այդ կենդանու միջոցով տեղյակ է լինում անպարտելիությանն այն զորության, որի դեմ էին վարձել իրեն:*

*294. Ավետարանական պատմության մեջ ևս մենք տեսնում ենք դևերի հրոսակը՝ «լեգեոնը», որը պատրաստվում է հակադրվել Տիրոջ զորությանը. բայց երբ մոտենում է նա, ով նախագահում է գոյություն ունեցող բոլոր բաների վրա, այդ լեգեոնը բարձրաղաղակ հռչակում է նրա գերբնական զորությունը և չի թաքցնում ճշմարտությունը՝ հայտարարելով, որ դա է աստվածային բնությունը, որն ապագայում չարերին սահմանելու է իրենց արդար պատիժը: Արդարև, դևերի ձայնն ասում է. «Մենք գիտենք՝ ով ես դու՝ Աստծու Սուրբը». և՝ «Դու եկել ես ժամանակից առաջ վնասելու մեզ»: Արդ, այս բանը պատահեց նաև այն ժամանակ. դիվական զորությունը, որն ուղեկցում էր գուշակին, սովորեցրեց Բաղաամին ժողովրդի անպարտելիությունն ու անխոցելիությունը:*

*295. Այս պատմությունը հարմարեցնելով մեր նախորդ բացատրություններին՝ կասենք, ուրեմն, որ նա, ով ուզում է անիծել առաքինության մեջ ապրողներին, վիրավորական կամ անճիշտ ոչ մի խոսք չի կարող արտաբերել, այլ իր նզովքը փոխում է օրհնության, ինչ որ նշանակում է, թե քննադատության կշտամբանքը կռվան չի գտնում նրանց մոտ, ովքեր ապրում են առաքինի կյանքով: 296. Արդարև, նա, ով ոչինչ չունի, ինչպե՞ս կարող է մեղադրվել արծաթասիրության մեջ: Ինչպե՞ս կարող է գեխության մեջ կասկածվել մեկը, որն ապրում է մենակ, անապատական կյանքով. կամ բարկության մեջ՝ մեկը, որն ունի մեղմ բնավորություն. կամ գոռոզության մեջ՝ մեկը, որը խոնարհ է. կամ պարսավանքի արժանի ուրիշ որևէ բանի մեջ՝ մեկը, որը ճանաչված է դրա ճիշտ հակառակով. կամ այն մարդիկ, որոնց նպատակն է ցույց տալ այնպիսի օրինակելի կյանք, որի վրա պարսավանքը կռվան չունի, որպեսզի, ինչպես ասում է Պողոս առաքյալը, «մեր հակառակորդները ամոթով մնան և մեր դեմ ասելու որևէ բան չունենան»: Ահա թե ինչու այն մարդու ձայնը, ում բերել էին անիծելու համար, ասում է. «Ինչպե՞ս կարող եմ անիծել նրան, ում չի անիծում Տերը», այսինքն՝ ինչպե՞ս կարող եմ մեղադրել մեկին, որը առիթ չի տալիս մեղադրանքի, և որի կյանքը, դարձած լինելով Աստծուն, անխոցելի է մեղքի համար:*



*297. Սակայն մեղքի հնարիչն այս բանում ձախողվելու պատճառով չէ, որ դադարեցրեց իր մեքենայությունը նրանց դեմ, ովքեր իր լարած թակարդներին առարկա էին դարձել, այլ նրա համար, որ նա այս անգամ իր հնարքները դարձնում է դեպի իր նախասիրած կռիվը և փորձում մարդկային բնությանը քաշել դեպի չարը՝ իբրև խայծ օգտագործելով հեշտասիրությունը: Արդարև, հեշտասիրությունն իսկապես մի տեսակ խայծ է ամեն արատի համար, խայծ, որ զգայասեր հոգիներին դյուրությամբ քաշում է դեպի մահվան ծուղակը: Պիղծ հաճույքներով է մանավանդ, որ մարդկային բնությունն առանց զգուշանալու քշվումտարվում է դեպի չարը: 298. Հենց այս բանն էլ պատահեց այն ժամանակ: Նրանք, ովքեր հաղթանակ էին տարել նրանց զենքերի դեմ, ովքեր ցույց էին տվել, որ երկաթյա ամեն հարձակում չափազանց թույլ է իրենց սեփական ու-*

*ժի առջև և իրենց արիությամբ փախուստի էին մատնել հակառակորդների փաղանգները, վիրավորվեցին և ընկան կանանց կողմից արձակված հեշտասիրության նետերից: Լինելով տղամարդկանցից ավելի ուժեղ՝ պարտվեցին կանանցից: Արդարև, հենց որ կանայք երևացին նրանց՝ զենքի փոխարեն մատուցելով իրենց կանացի ձևերը, իսկույն նրանք մոռացան իրենց անդրդվելի քաջությունը և թույլ տվեցին, որ հաճույքը կործանի իրենց ուժն ու եռանդը: 299. Ուրեմն նրանք այնպիսի վիճակում էին, ինչպիսի վիճակում բնականաբար լինում են մարդիկ, երբ ուժգնորեն նետվում են կանանց վրա՝ ապօրինի միավորմամբ կենակցելու համար նրանց հետ: Բայց միավորվել չարի հետ՝ նշանակում էր զրկվել բարու հենարանից: Եվ, հիրավի, Աստծու բարկությունն իսկույն բարձրացավ նրանց դեմ: Բայց նախանձահույզ Փենեեսը չսպասեց, որ աստվածային մի վճռով որոշվի մեղքի մաքրագործումը. հենց ինքը դարձավ դատավոր և դահիճ: 300. Արդարև, զայրույթով լցված նրանց դեմ, ովքեր անձնատուր էին լինում կրքին, նա կատարեց քահանայական գործողությունը՝ հանցանքը մաքրելով արյամբ, ոչ թե անմեղ կենդանու արյամբ, որը մասնակից չէր եղել պղծության կեղտին, այլ այն մարդկանց արյամբ, ովքեր մեղքի մեջ միախառնված էին իրար: Նրա նիզակը, միաժամանակ խոցելով զուգավորված երկուսի մարմինները, հանդարտեցրեց աստվածային արդարության հուզումը՝ մահը խառնելով մեղավորների վայելքին[92]:*

*301. Ինձ թվում է, որ այս պատմությամբ մարդկանց առաջարկվում է օգտակար մի օրինակ. այս պատմությունը մեզ սովորեցնում է, որ այն բազմաթիվ կրքերից, որոնք պաշարում են մարդկային սիրտը, չկա մեկը, որ մարդկանց դեմ ունենա այնպիսի մի ուժ, որը կարելի լինի համեմատել հեշտանքի մոլեգնության ուժի հետ: Արդարև, այն իրողությունը, որ իսրայելացիների այս բազմությունն իր ուժով եգիպտական հեծելազորին գերազանցելուց, ամաղեկացիներին պարտության մատնելուց, հարևան ժողովրդին սարսափ ազդելուց և մադիանացիների փաղանգների դեմ հաղթանակ տանելուց հետո ընկնում է կրքի գերիշխանության տակ, հենց որ տեսնում է կանանց, ցույց է տալիս, որ, ինչպես նշեցի, հեշտասիրությունը մեզ համար այնպիսի մի թշնամի է, որի դեմ դժվար է մարտնչել և նրան ետ մղել: 302. Իր երևան գալուց անմիջապես հետո հաղթելով այն մարդկանց, ում պարտության չէին մատնել զենքերը, այդ թշնամին նրանց դեմ բարձրացրեց անառակության հաղթանշանը՝ բացահայտ կերպով հրապարակելով նրանց անվանարկությունը: Հիրավի, նա ցույց տվեց, որ իր միջոցով մարդիկ դառնում էին անասուններ, որ պղծության անասնական և անբանական բնազդը մոռացության տվեց մարդկային բնությունն այն աստիճան, որ նրանք ոչ միայն չէին ծածկում իրենց անբանացումը, այլ նաև փառավորվում էին կրքի խայտառակությամբ և զարդարվում իրենց պղծության անպատվությամբ՝ միմյանց հայացքի տակ խոզերի նման բացեիբաց թավալվելով հայրատության տղմուտի մեջ:*

*303. Ի՞նչ ենք սովորում այս պատմությամբ. այն, որ իմանալով, թե ինչպիսի զորություն ունի մեզ դեպի չարը քաշող հեշտասիրության կիրքը, մեր կյանքը պետք է հնարավորին չափ հեռու պահենք նման մերձավորությունից, այնպես որ այս չարիքը չկարողանա մուտք գործել մեր մեջ, ինչպես մի կրակ, որ մոտենալով ժայթքեցնում է իր ավերող բոցը: Արդարև, Սողոմոն իմաստունն իր Առակաց գրքում մեզ սովորեցնում է, որ մերկ ոտքով չդիպչենք «կրակին» և «կրակը չպահենք մեր գոգի մեջ», քանզի մենք կարո՛ղ ենք ազատ լինել ցանկության կրքից այն չափով, ինչ չափով որ*

Կատարելությունը առաջընթացի մեջ է

հեռու ենք մնում Նրանից, ով կրակ է տալիս. եթե, հակառակ դեպքում, դիպչենք այդ կիզիչ ջերմությանը, ապա ցանկասիրության կրակը կմտնի մեր գոգը, և այն ժամանակ թե՛ մեր ոտքերը կայրվեն և թե՛ մեր «գոգը» կսկսի աստիճանաբար հյուծվել և սպառվել: 304. Ավետարանում Տերը մեզ հեռու պահելու համար այդպիսի մի չարիքից, իր սեփական խոսքով պոկեց հայրատ հայացքը որպես ցանկության արմատ՝ սովորեցնելով մեզ, որ, ով իր աչքով ցանկանում է մի կնոջ, հիվանդության տանող ճանապարհ է բացում իր դեմ: Արդարև, հոռի հիվանդությունները մի անգամ որ տիրում են մարդու կեսական բջիջներին, վերջանում են մահվամբ:

305. Բայց ես կարծում եմ, որ պետք չէ երկարել այս ճառը՝ Մովսեսի ամբողջ կյանքը ներկայացնելով ընթերցողին որպես առաքինության օրինակ: Արդարև, ով ջանք է գործադրել ապրելու համար բարձրագույն մի կյանքով, ինչ որ ասվեց, դա նրա համար դույզն չափի մի օգնություն չի լինի, որպեսզի առաջ գնա դեպի ճշմարիտ իմաստությունը: Իսկ ով թուլակամ է առաքինության գործերի մեջ, եթե նույնիսկ ես գրեի շատ ավելին, քան արել եմ, իմ ավելացնելիքը ոչ մի օգտակարություն չէր ունենա նրա համար: 306. Սակայն, որպեսզի չմոռացվի այն, ինչ ասացինք սկզբում, երբ ճշտեցինք, թե կատարյալ կյանքը այն կյանքն է, որի առաջընթացը կատարելության մեջ չի սահմանափակվի ոչ մի սահմանով, և թե կյանքի շարունակական աճը դեպի լավագույնը հոգու համար միակ ճանապարհն է դեպի կատարելություն, հարմար կլինի (քանի որ մեր ուսումնասիրությունը հիմա արդեն հասցրել ենք մինչև Մովսեսի կյանքի վախճանը) հաստատել կատարելության մասին մեր տված սահմանումը: 307. Արդարև, ով իր ողջ կյանքի ընթացքում բարձրացել է բազում վերելքներով, նա միշտ ձգտել է դառնալ ինքն իրենից ավելի բարձր, այնպես որ, կարծում եմ, ամեն ինչում նրա կյանքը, արծվի նման, երևում է ամպերից վերև, եթերային՝ խորանալով երկնքում հոգևոր սավառնումով:



308. Նա [Մովսեսը] ծնվեց այն ժամանակ, երբ եբրայեցի արու մի երեխայի ծնունդը ծանր հանցանք էր համարվում եգիպտացիների կողմից: Բռնակալի օրենքով՝ ծնվող երեխան ենթակա լինելով պատժվելու՝ նրա ծնունդը հաղթահարեց մանկասպանության այդ օրենքը, և նա բաժանվեց նախ իր ծնողների, ապա նաև հենց այդ օրենքի հեղինակների մոտից: Եվ նրանք, ովքեր օրենքով հետամուտ էին եղել նրա մահվան, հետագայում հենց նույն մարդիկ ապահովեցին ոչ միայն նրա կյանքը, այլև հոգ տարան նրա կրթությանն ու դաստիարակությանը՝ աշխատելով, որ երեխան արագ կերպով ծանոթանա այդ ժամանակի ամբողջ գիտությանը: 309. Դրանից հետո նա բարձրանում է մարդկային բոլոր պատիվներից և արքունական մեծարանքներից վեր՝ նախամեծար համարելով ոչխարների պահպանությունը, քան արքայական շքեղությունը և ցանկանալով մանավանդ լինել առաքինության պահապան և զարդարվել նրա գեղեցկությամբ: 310. Այնուհետև նա փրկում է իր հայրենակցին և մահացու հարված հասցնում եգիպտացուն. մեր հոգևոր մեկնաբանությամբ սրա մեջ պետք է տեսնել հոգու թշնամուն և նրա բարեկամին: Ապա, հանգստանալով, նա վարպետանում է երկնային բաների գիտության մեջ և լուսավորում իր միտքը այն լույսով, որը ճառագում է անկեզ մորենու միջից: Հետո շտապում է իր եղբայրներին հաղորդակից դարձնել այն բարիքներին, որ վե-

րևից էին եկել իրեն։ 311. Այս առիթով նա իր զորության մասին կրկնակի մի ապացույց տվեց նրանց. մեկը՝ ետ մղելով իր թշնամիներին իրարահաջորդ բազում հարվածներով, մյուսը՝ օգնելով իր եղբայրներին։ Նա իր ժողովրդին կարողանում է հետիոտն անցկացնել ծովից առանց որևէ նավատորմիղի օգնության՝ անցման համար իբրև նավ ամրացնելով միայն նրանց հավատը։ Նա ծովի անդունդը հաստատուն հող է դարձնում իր եղբայրների համար, իսկ հաստատուն հողը՝ ծով եգիպտացիների համար։ 312. Նա երգում է հաղթանակի երգը, առաջնորդվում ամպի սյունով, լուսավորվում երկնային կրակով, սեղան է պատրաստում վերևից եկած սննդով, հագենում ժայռից բխած ջրով, բարձրացնում է ձեռքերը ամաղեկացիներին հաղթելու համար, մոտենում լեռանը, մտնում խավարի մեջ, լսում շեփորների ձայնը, մոտենում աստվածությանը, շրջապատվում է երկնային տապանակով, զարդարում քահանայությունը, կառուցում երկրային տապանակը, կարգավորում կյանքը օրենքներով, հաղթում իր վերջին թշնամիներին այն ձևով, ինչպես ասվեց, 113. և, վերջ դնելու համար իր սխրանքներին, պատժել է տալիս պղծությունը քահանայության միջոցով. այդ էր պատկերում արդարև Փենեեսի զայրույթը տափական ցանկության դեմ։ Այս բոլորից հետո մոտենում է հանգստյան լեռանը, ոտք չի դնում ներքևում գտնվող հողի վրա, դեպի ուր ժողովուրդն ուղղում է իր հայացքը՝ հիշելով խոստումը։ Նա այլևս չի սնվում երկրային սնունդներով (նա, որ վարժվել էր ապրել վերևից իջնող սնունդներով), այլ, բարձրանալով մինչև լեռան գագաթը, վարպետ մի անդրիագործի նման, որը մեծ խնամքով ավարտել է իր սեփական կյանքի արձանը, նա ոչ թե վերջ է դնում իր գործին, այլ պսակազարդում այն։

314. Ինչ է ասում այդ մասին պատմությունը։ Այն, որ



«Մովսեսը՝ Աստծու ծառան, վախճանվեց Աստծու հրամանի համաձայն», որ «ոչ ոք չիմացավ, թե որտեղ է նրա գերեզմանը», որ «նրա տեսողությունը չվատացավ», և նրա դեմքը «չխորշոմեց»։ Սրանից մենք սովորում ենք, որ նա, անցնելով բազում աշխատանքների միջով, արժանի համարվեց կոչվելու «Աստծու ծառա» վսեմ անունով, ինչ որ նշանակում է, թե նա եղել է ամեն ինչից բարձր։ Արդարև, ոչ ոք չի կարող ծառայել Աստծուն առանց բարձրանալու աշխարհային ամեն բանից վերև։ Նրա համար սա նաև վախճանն է առաքինազարդ մի կյանքի, վախճան, որ կատարվեց ըստ Աստծու հրամանի, և որ պատմությունը կոչում է մահ, կենդանի՛ մահ, որին չի հաջորդում թաղումը, որի վրա չի բարձրանում շիրմաքարը, որը առաջ չի բերում ո՛չ աչքերի կուրություն և ո՛չ էլ դեմքի ապականություն։

315. Ի՞նչ ենք սովորում սրանից. ունենալ միայն մեկ նպատակ այս կյանքում, կոչվել «Աստծու ծառաներ» մեր առաքինի գործերի պատճառով։ Արդարև, երբ դու հաղթես բոլոր թշնամիներին՝ եգիպտացուն, ամաղեկացուն, իդումեացուն, մադիանացուն, երբ կտրես-անցնես ծովը, լուսավորվես ամպի սյունով, մեղմանաս գավազանով, խմես ժայռի ջրից, ճաշակես երկնքից իջած սնունդը, երբ հոգու մաքրությամբ և պարկեշտությամբ քեզ համար ճանապարհ բաց անես դեպի լեռը, երբ, հասնելով այնտեղ, ծանոթանաս աստվածային խորհրդին՝ լսելով շեփորների ձայնը, երբ անթափանց խավարի մեջ մտնելով՝ մոտենաս Աստծուն հավատով և այնտեղ սովորես տապանակի խորհուրդներն ու քահանայության բարձր կոչումը, 316. երբ հղկես քո սեփական սիրտը և հենց Աստծու ձեռքով փորագրել տաս այնտեղ աստվածային պատգամները, երբ խորտակես ոսկու կուռքը[93], այսինքն՝ քո կյանքից ջնջես հարստանալու տենչը, երբ այնքան վեր բարձրանաս, որ անմատչելի և ան-

պարտելի դառնաս Բաղաամի կախարդության համար (կախարդություն բառով հասկացիր այս կյանքի հարափոփոխ պատրանքը, որով մարդիկ ասես կախարդական ըմպելիք խմած լինեն կիրկեական* ինչ-որ բաժակից՝ կորցնելով իրենց սեփական բնությունը և կերպարանափոխվելով անասունների), երբ դու անցնես այս բոլորի միջով, և քեզ համար ծաղկի քահանայության այն ճյուղը, որը երկրային ոչ մի ցող ծծելու կարիք չունի ծաղկելու համար, այլ իր սեփական խորքից է ստանում պտղաբերելու իր ուժը, և նրա պտուղը այն նույնն է, որը դրսից երևում է անհարթ և կարծր, բայց որի միջուկը քաղցր է և ուտելի, երբ դու ոչնչացնես, ինչ որ ծառանում է քո արժանապատվության դեմ՝ Դաթանի** նման այն ընկլուզելով երկրի խորքը կամ Կորեի** նման այն այրելով կրակով, այն ժամանակ միայն դու կմոտենաս ավարտին:

317. Ավարտ ասելով՝ ես հասկանում եմ այն նպատակը, որին հասնելու համար արվում է ամեն ինչ: Այսպես, հողի մշակության ավարտը նրա բերքը ճաշակելն է. մի տան շինության ավարտը այնտեղ բնակվելն է. վաճառականության ավարտը հարստանալն է. մրցասպարեզում հոգնությունների ավարտը դափնեպսակ ստանալն է: Նույնպես հոգևոր կյանքի ավարտը Աստծու ծառա կոչվելն է, որին ավելանում է գերեզմանում չթաղվելը, այսինքն՝ անպաճույճ և ամեն տեսակ ծանր բեռներից զերծ մի կյանք ունենալը:

318. Սուրբ Գիրքը ուրիշ կերպ է բնորոշում այս ծառայությունը՝ ասելով, որ «ո՛չ նրա տեսողությունը ծանրացավ», «ո՛չ նրա դեմքը ապականվեց»: Արդարև, ամբողջովին լույսով ողողված նրա աչքն ինչպե՞ս կարող է քողարկված լինել մթությամբ, որին նա օտար է: Եվ նա, ով իր ամբողջ կյանքում իր անձն անմնացորդ կերպով նվիրել է անապականության գործերի, ինչպե՞ս կարող է իր մեջ ընդունած



լինել որևէ ապականություն: Հիրավի, ով իրապես դարձել է Աստծու պատկերը և ոչնչով չի հեռացել դրանից, նա իր մեջ վերարտադրում է աստվածային գծերը[94] և ամեն ինչում ներկայացնում կատարյալ մի նմանություն իր Սկզբնատիպի հետ՝ ունենալով անապականությամբ, անայլայլելիությամբ և ամեն չարի դիմադրելու իր ունակությամբ գեղեցկացած մի հոգի:

Եզրակացություն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*319. Ահա, ուրեմն, ո՛վ Կեսեր[95], ո՛վ Աստծու մարդ, այն կարճառոտ աշխատասիրությունը, որ ներկայացնում եմ քեզ առաքինի մի կյանքի կատարելության մասին, ուսումնասիրություն, որտեղ նկարագրել եմ մեծն Մովսեսի կյանքը՝ որպես գեղեցկության խոսուն օրինակ, որպեսզի մեզնից յուրաքանչյուրը, նրա կատարած գործերի նմանողությամբ, ընդօրինակի իր մեջ պատկերն այն գեղեցկության, որն առաջարկվել է մեզ: Որ Մովսեսն իրոք հաջողել է իրականացնել հնարավոր կատարելությունը, այդ մասին ավելի արժանահավատ ի՞նչ վկայություն կարող ենք գտնել, քան աստվածային այն ձայնը, որ ասում է նրան. «Ես քեզ ճանաչեցի բոլորից առաջ», նաև այն փաստը, որ նա հենց Աստծու կողմից կոչվեց «Աստծու բարեկամ», և վերջապես այն փաստը, որ նախընտրելով ավելի շուտ կորստյան մատնվել բոլորի հետ (եթե Աստված չխղճահարվեր հենց այն բաների համար, որոնցով դառնացրել էին իրեն)՝ նա այդպիսով մեղմացրեց Աստծու բարկությունը իսրայելացիների դեմ, և Աստված ինքը փոխեց դատապարտության իր վճիռը, որպեսզի վիշտ չպատճառի իր բարեկամին[96]: Այս բոլորը ակնհայտ մի վկայություն է և մի ապացույց այն մասին, որ Մովսեսի կյանքը բարձրացել էր մինչև կատարելության ծայրագույն սահմանը:*



[1] Նույն համեմատությանը հանդիպում ենք Գրիգոր Նազիանզացու մոտ: Տե՛ս «Ներբողյան առ Բարսեղ»:

[2] Սա ցույց է տալիս, որ հասցեատերը մի վանական է:

[3] Սպիտակ մազերին վերաբերող այս ակնարկությունը հաստատում է, որ «Մովսեսի կյանքը» Նյուսացու ծերության շրջանի գործերից է:

[4] Փիլիպեցիներին ուղղված թղթի այս հատվածը (Փիլ. 3, 13) Նյուսացու ամբողջ ուսումնասիրության հիմնական միտքն է կազմում և արտահայտում այն էական դրույթը, որ կատարելությունը շարունակական առաջընթաց է: Տե՛ս Ժ. Դանիելու, «Պլատոնականություն և միստիկական աստվածաբանություն» (ֆրանս.), Փարիզ, 1993, էջ 311:

[5] Հավերժական առաջընթացի դրական հիմքը աստվածային անսահմանությունն է: Հմմտ. «Սերը սահման չունի, քանի որ սիրված էակն ինքը անսահման է»:

[6] Նյուսացու ինքնուրույն դրույթն այն է, որ մարդ արարածի կատարելությունը հենց նրա առաջընթացն է՝ ի տարբերություն հունական այն ըմբռնման, ըստ որի՝ ամեն շարժում ենթադրում է անկատարություն:

[7] «Առաքինության նավահանգիստ» արտահայտությունը Փիլոն Ալեքսանդրացուց է:

[8] Այն մասին, թե ինչ տեղ է գրավում Աբրահամի կերպարը որպես առաքինության օրինակ Եկեղեցու հին հայրերի մոտ, տե՛ս Ժ. Դանիելու, «Աբրահամը քրիստոնեական ավանդության մեջ» (ֆրանս.), Փարիզ, 1951, էջ 160-179:

[9] Նյուսացու գրքի հիմնական գաղափարներից մեկն է դուրս բերել աստվածաշնչական տեքստի ժամանակակից ընթերցումը՝ տեքստն առանձնացնելով իր պատմական պայմաններից:

[10] Այս հիշատակությունը չկա Ելից գրքում, բայց դա հուդայա-հելլենիստական մի ավանդություն է, որը նշված է Գործք առաքելոցում (Գործք 7, 22): Փիլոն Ալեքսանդրացին այն զարգացնում է երկարո-

րեն: Այս ավանդությանը հանդիպում ենք նաև Կղեմես Ալեքսանդրացու մոտ, որն այն վերցրել է Փիլոնից:

11 Մադիամի երկրում Մովսեսի կեցության «փիլիսոփայական» մեկնությունը գալիս է Փիլոն Ալեքսանդրացուց:

12 Այս և նման «նրբաբանություններ» սիրելի էին սոփեստներին:

13 Ուշադրության է արժանի Նյուսացու ճաշակը պարադոքսային արտահայտությունների նկատմամբ:

14 Հետաքրքրական է Նյուսացու այս տեսությունը ամպերի կազմության վերաբերյալ:

15 Պետք է նշել, որ Նյուսացու մտահոգությունն է եղել ընդգծել երևույթի հրաշածին բնույթը, ինչպես վերևում դա նկատվում է գորտերի առաջացման պարագայում: Հրաշքի այս շեշտադրումը հատուկ է հագգադային:

16 Արմավենիների մասին այս մանրամասնություններն ավելացված են Նյուսացու կողմից:

17 Սինայի լեռան հայտնությունն այստեղ ներկայացված է որպես մի «խորհուրդ», որին Մովսեսը հաղորդակից է դարձնում իր ժողովրդին: Մովսեսին իբրև այս սրբազան խորհրդի քահանա ըմբռնելը գալիս է ալեքսանդրյան հուդայականությունից և հատկապես Փիլոն Ալեքսանդրացուց:

18 Հունարեն καταπληζις (կատապլիքսիս), (=սարսափ, վախ, երկյուղ) բառի կրկնությունը նպատակ ունի սրբազան երկյուղի զգացում առաջացնել ընթերցողի մեջ: Վերանցականության այս հստակ դրսևորումը հաճախ է հանդիպում Նյուսացու մոտ:

19 Մովսեսը լեռան վրա դիտում է երկնային տապանակը, որ նախատիպն էր երկրային տապանակի: Այս պատկերացումը նույնպես գալիս է Փիլոն Ալեքսանդրացուց՝ մի քիչ զարգացած ձևով:

20 Բնություն բառն այստեղ ցույց է տալիս մարդու երկրային վիճակը: Նյուսացու մոտ բառն իր այս իմաստով ավելի քիչ է գործածվում, քան այն մյուս իմաստով, որով մարդը ցույց է տրվում իր իդեալական վիճակի մեջ՝ պայծառակերպված Աստծու շնորհով:

21 Դևերին կախարդություն վերագրելու մասին հիշատակություն չկա Ելից գրքում, բայց դա ընդհանրացած մի դրույթ էր վաղ քրիստոնեության շրջանում:

22 Դիտարկման արժանի է այն, որ Նյուսացու ուսմունքի մեկնակետը



ծնված էակի մեջ փոփոխման անխուսափելիությունն է:

23 Ազատության սկզբնական դերը Նյուսացու ոգեկանության հատկանշական գծերից մեկն է:

24 Այս ակնարկությունը վերաբերում է Բարսեղ Կեսարացուն, որն Աթենքում իր անցկացրած տարիներից հետո ապրեց առանձնացած:

25 Անկեզ մորենին Բանի (Լոգոսի) աստվածահայտնությունն է Փիլոն Ալեքսանդրացու համար, իսկ նրանից առաջ՝ նաև ողբասաց Եզեկիել մարգարեի համար:

26 Թվում է, թե Նյուսացին առաջին հեղինակն է, որ անկեզ մորենու պատկերով մեզ ներկայացրել է Աստվածամոր կերպարը իր կուսական մաքրության մեջ: Այս նույն խորհուրդը հետագայում պիտի դրսևորվի մանանայի պատկերով: Սա հայտնում է Մարդեղության աստվածաբանության զարգացումը 390-ական թվականների շուրջ:

27 Կրքերի բռնակալությունն այստեղ կապակցված է փարավոնի կերպարի մեջ մարմնավորված դևի բռնակալության աստվածաշնչական թեմայի հետ:

28 Սա Մարդեղության խորհրդի մի նոր պատկերում է: Տերտուղիանոսը ձեռքի փոփոխության մեջ տեսնում էր Հարության խորհուրդը:

29 Գավազանի փոխակերպումը օձի Մարդեղության խորհրդի մեկ պատկերումն է:

30 Հրեա նահապետների ամուսնությունը օտար կանանց հետ այլաբանական թեմաներից մեկն է. Հագարը՝ Աբրահամի հարճը, խորհրդանշում է հեթանոսական մշակույթը, ինչպես այստեղ Մովսեսի կինը՝ օտարուհի Սեփորան:

31 Հունական փիլիսոփայության այս պաշտպանության մեջ զգացվում է Որոգինեսի ավանդության ջատագովությունը Նյուսացու կողմից:

32 Հոգեփոխության մասին պլատոնական տեսության քննադատությունը Նյուսացու կողմից:

33 Աստծու մասին ստոիկյան ըմբռնման քննադատությունը:

34 Նյութի հավիտենության մասին պլատոնական ուսմունքի քննադատությունը:

35 Ստոիկյան վարդապետության քննադատությունը:

36 «Երկու ոգիների» կամ «երկու հրեշտակների» այս ըմբռնումը սկիզբ է առնում հեսյաններից:*

****Հեսյաններ*** *- Այս անունով էին կոչվում այն հրեա աղանդավորները, որոնք ապրում էին միաբանությամբ, հրաժարվում էին ամուսնությունից և խմում էին միայն ջուր (Ծնթ.՝ թարգմ.):*

37 Այս պարբերական շարժումը բնութագրում է մարդու կենսաբանական կողմը: Հետագայում մենք հանդիպելու ենք այս երևույթին, որը ներկայացված է ավազաբլրի խորհրդանշական պատկերով. ինչքան վեր ենք բարձրանում այդ բլրից, այնքան նա փլուզվում է:

38 Նույն մարդու մեջ բանիմաց հոգու և անասնական կրքերի միավորումը Նյուսացու կողմից արտահայտված է մի այլ տեղ առասպելական հրեշների (կես-մարդ, կես-անասուն, ցլագլուխ, հուշկապարիկ և այլն) և երկդիմի Յանոսի արձանների խորհրդանշանով:

39 Սա մեկն է այն հատվածներից, որտեղ Նյուսացին ուսուցանում է apocatastasis-ը, այսինքն՝ տիեզերական փրկությունը: Ոմանք այս հատվածը համարում են հավելագրություն՝ կատարված մի անհայտ գրչի ձեռքով:

40 Ըստ Ծննդոց գրքի (Ծնն. 3, 18)՝ փշերը խորհրդանշում են մեղքը: Դրանք ծանր հանցանքներն են, փորձությունները, դևերը և մեղավոր մարդկությունը, որը պատկերված է Քրիստոսի փշե պսակով:

41 Այս մեկնությունը թվում է, թե վերաբերում է Պետրոս առաքյալի ընդհանրական առաջին թղթի 1:13 համարին:

42 Նյուսացու մոտ հաճախ է նկատվում ծածկված բաների նկատմամբ խուզարկու հետաքրքրասիրություն:

43 Ակնարկություն քրիստոնյաների կողմից հելլենիստական մշակույթն օգտագործելու մասին: «Եգիպտացիներին կողոպտելու» այս մեկնաբանությունը գալիս է Որոգինեսից:

44 Կարմիր ծովից անցումը, Պողոս առաքյալի մեկնաբանությունից սկսած (տե՛ս Ա Կորնթ. 10, 2), մկրտության հոյակապ մի պատկեր է:

45 Եգիպտացիների բանակը քրիստոնեական սիմվոլիկայի մեջ ներկայացնում է կրքերը և դևերը:

46 Սա մկրտության ամբողջական սահմանումն է, որի սկիզբներն են ջուրը, փայտը (հավատը) և ամպը (Սուրբ Հոգին), և որը միաժամանակ մահ է և հարություն:

47 Բաղարջի այս խորհրդանշանը գալիս է Պողոս առաքյալից (տե՛ս Ա Կորնթ. 5, 7-8):

48 Առաքինության փայտի խորհրդանշանը, որը քաղցրացնում է ջրի



դառնությունը, անմահության հույսն է:

49 Տասներկու առաքյալների և յոթանասուն արմավենիների այս խորհրդանշանը մտնում է քրիստոնեական հավատի ուսուցման ծիրի մեջ: Ղուկաս ավետարանչի նշած յոթանասուն աշակերտները (Ղուկ. 10, 1) գուցե նաև ակնարկություն են յոթանասուն ժողովուրդներին: Նյուսացու կողմից «տասներկուսը» կոչվում են աշակերտներ, իսկ «յոթանասունը»՝ առաքյալներ:

50 Ինչպես Որոգինեսը, նույնպես Նյուսացին մանանան մեկնաբանում է որպես Աստծու խոսքը՝ դրա մեջ տեսնելով մարմնացած Բանի պատկերը, մեկնաբանություն, որ առնչվում է տվյալ ժամանակաշրջանի աստվածաբանական մտահոգություններին:

51 Տիեզերքի հայեցողություն արտահայտությունը Նյուսացու մոտ սովորաբար ցույց է տալիս արարչագործության հայեցողությունը, որը մի հանգրվան է դեպի աստվածաճանաչում:

52 Նյուսացին ակնարկում է այն հոգևորականներին, որոնք, չորրորդ դարի վերջում փառասիրական մղումներով տարված, ձգտում էին եկեղեցական բարձր պաշտոնների տիրանալ և առանց վարդապետական պատրաստության եպիսկոպոս ընտրվել՝ ենթակա լինելով ընկնելու հերետիկոսության մեջ:

53 Սա Նյուսացու սույն աշխատության հիմնական և էական թեման է:

54 Աստված անտեսանելի է նույնիսկ հրեշտակներին:

*Adyton – Գաղտնի սենյակ տաճարում, որտեղ միայն քահանաներն էին մտնում, և որտեղից հաճախ պատգամներ էին տրվում *(Ծնթ.՝ թարգմ.):*

55 Օրենքի առաջին պատվիրանը, որն արգելում է կուռքեր պատրաստել, մեկնաբանվում է նրանով, որ Աստծու մասին մտքում ոչ մի պատկերացում չպետք է կազմել, ինչը կլիներ մտապատկերի կռապաշտություն:

56 Եթե Աստծու էությունն անմատչելի է, ապա նրա գոյությունն աշխարհում հայտնվում է նրա գործով: Սա առաջին հանգրվանն է առ Աստված վերելքի ճանապարհին: Սա նաև Աբրահամի հանգրվանն էր, երբ նա դեռևս գտնվում էր Քաղդեաստանում:

57 Տապանակի խորհրդանշական մեկնությունը կարևոր տեղ է գրավում Նյուսացու մոտ:

58 Երկնային տապանակի գաղափարը, որը ներկայացնում է նախագո Բանը, ինչպես նաև երկրային տապանակի գաղափարը

որպես մարգարեություն մարմնացած Բանի վերաբերյալ, Նյուսացու անձնական մեկնաբանությունն է, ինչպես այդ մասին արտահայտվում է հենց ինքը:

59 Մարդեղության թեման, որպես Բանի բնակատեղի մարմնի տապանակի մեջ, սկիզբ է առնում Հովհաննեսի ավետարանից (տե՛ս Հովհ. 1, 14):

60 Քրիստոսի անուններին վերաբերող այս հատվածը հնագույն վարդապետական մի թեմա է: Նյուսացին այս թեմային նվիրել է ամբողջ մի աշխատություն «Ճառ յաղագս կատարելութեան» վերնագրով:

61 Պետք է նշել, որ Նյուսացու համար երկնային տապանակը պարունակում է ամբողջ հոգևոր ստեղծագործությունը:

62 Աշտանակի յոթ լամպերի խորհրդանշանը գալիս է Հայտնության գրքից (տե՛ս Հայտ. 4, 5):

63 Երկրային տապանակը խորհրդանշում է Եկեղեցին: Նկատառման արժանի է այն պարագան, որ Նյուսացին, որը վերևում երկրային տապանակը մեկնաբանում էր որպես Մարդեղության մարգարեություն, այստեղ, հետևելով Պողոս առաքյալին, մեկնաբանում է որպես Եկեղեցի:

64 Խորհրդանշական այս ամբողջ մեկնությունը փոխ է առնված Նոր Կտակարանից:

65 Տապանակի առարկաներն այստեղ ցույց են տալիս Եկեղեցու տարբեր աստիճանները: Մի ուրիշ տեղ Նյուսացին նույն իրականությունն արտահայտում է մարմնի մասերի պատկերով:

66 Մորթուց պատմուճաններին, այսինքն՝ մարմնավոր հագուստին, որը խորհրդանշում է մարմնավոր կյանքը, Նյուսացին հակադրում է օդային պատմուճանը, այն է՝ առաքինի կյանքը:

67 Բոլոր առաքինություններով օժտված լինելու անհրաժեշտությունը Նյուսացու կարևոր դրույթներից մեկն է:

68 Տապանակում հոգևոր տաճարի պատկերը ցույց տալուց հետո Նյուսացին զգեստների միջոցով ցույց է տալիս հոգևոր մարդու՝ այդ տաճարի քահանայի պատկերը: Այստեղ նրա մեկնաբանությունը խիստ ինքնատիպ է և տարբերվում է Փիլոն Ալեքսանդրացու տված մեկնաբանությունից, որն ավելի տիեզերագիտական բնույթ ունի:

69 Ակնարկություն այն խոսակցություններին, որոնք տեղի էին ունենում 4-րդ դարում:



70 Նկատելի է, որ Նյուսացին իր մեկնաբանության մեջ այստեղ դարձյալ մեկնակետ է ունեցել Պողոս առաքյալին:

71 Աստծու Մատով փորագրված Օրենքի տախտակները ցույց էին տալիս կուսական մայրությունը, որի երրորդ խորհրդանշանն ունենք այստեղ Անկեզ մորենու և Մանանայի խորհրդանշաններից հետո: Աստվածաբանական այս մեկնությունը հատուկ է Նյուսացուն:

72 Մովսեսի դեմքի փառքի և Քրիստոսի փառքի միջև կատարված զուգահեռը գալիս է Պողոս առաքյալից (տե՛ս Բ Կորնթ. 3, 12. 4, 6):

73 Զուտ դիալեկտիկական մի հատված: Նկատելի է, թե ինչպես Նյուսացին իր գրվածքի մեջ ներառում է և՛ նկարագրություններ, և՛ թվարկումներ, և՛ ապացուցումներ, որոնք հատուկ են եղել հին հռետորներին:

74 Հոգու թռիչքի թեման, զուգակցված «թևերի» թեմայի հետ, գալիս է Պլատոնից: Նյուսացին հաճախ է օգտագործում դա: Բայց նրա «թևերը», ի տարբերություն պլատոնական թեմայի, աղավնու թևեր են:

75 Աստված լինելով անսահման, իսկ մարդկային ամեն ճանաչողություն՝ սահմանավոր, ուստի Աստծուն բնավ չպետք է նույնացնել այն բանի հետ, ինչ ըմբռնելի է. նա միշտ գտնվում է մեր իմացության սահմանից դուրս: Ուրեմն ճանաչել Աստծուն՝ նշանակում է անդադար առաջ գնալ նրա ճանաչման մեջ: Սա Նյուսացու հիմնական դրույթն է:

76 Այսպես է ավարտվել այս գրքի Ներածության մեջ առաջադրված դրույթի ապացուցումը, այսինքն՝ կատարելությունը առաջընթացի մեջ է:

77 Այս ուշագրավ հատվածում Նյուսացին միմյանց հակադրում է կենսաբանական շարժումը, որը պարբերական երևույթ է ու անշարժություն, և հոգևոր շարժումը, որն առաջընթաց է և կայունություն: Կայունությունը մասնակցության իրականությունն է, «թևը»՝ աղավնու կերպարանափոխությունը, այսինքն՝ Սուրբ Հոգու:

78 Ցանկ աստվածաշնչական անունների, որոնք նշում են երանության վայրը:

79 Սա Նյուսացու կողմից ցույց տրված հոգևոր կյանքի մեկ նոր երեսն է. ոչ միայն փնտրել Աստծուն, այլև առաջնորդվել նրանով: Սա աստվածային կամքին հանձնվելու վարդապետությունն է:

80 Այն փառավոր հագուստներին, որոնցով զգեստավորվել էին Ադամն ու Եվան դրախտում, հակադրվում են ոչ թե մորթուց պատմուճանները (Ծննդ., 3:1), այլ՝ թզենու տերևները (Ծննդ. 3, 7), որոնք խորհրդանշում են ամոթը, որը հետևում է մեղքին:

81 Նյուսացին հավանաբար ակնարկություն է անում իր կրած անձնական վիրավորանքներին:

82 Այսինքն՝ Մովսեսը հասել էր կատարյալ ինքնատիրապետման: Նա անմատչելի էր աղեղից արձակվող նետերին՝ կրքերին:

83 Նկատելի է, որ Նյուսացին չի խոսում Ելից գրքի առաջին դրվագի մասին (Ելից 17, 1-7), որտեղ ի հայտ է գալիս Ժայռը:

84 Ժայռի երկրորդ դրվագում ընդգծված է զղջման գաղափարը: Այս մեկնությունը հատուկ է Նյուսացուն:

85 Պղնձե օձը՝ որպես խաչի պատկեր, գալիս է Հովհաննես ավետարանչից (տե՛ս Հովհ. 3, 15):

86 Օձը մարմնական ցանկության խորհրդանշանն է: Նրա խայթվածքները հաճույքի խայթվածքներ են: Սա գալիս է Փիլոն Ալեքսանդրացուց, որը մեկնաբանում է այս նույն դրվագը:

87 Փառասիրությունը հոգևոր կյանքում առավել առաջ գնացած մարդկանց փորձությունն է:

88 Եկեղեցական մեքենայություններին վերաբերող այս քննադատությունը ակնարկություն է այն իրադարձություններին, որոնց ականատես է եղել Նյուսացին:

89 Այստեղ առկա է Նյուսացու շատ սիրելի նրբաբանություններից (oxymorons) մեկը, որով միավորվում են իմաստով հակադիր երկու բառեր:

90 «Արքայական ճանապարհ» արտահայտությունը խորհրդանշում է այն ճանապարհը, որն առաջնորդում է դեպի Աստված:

91 «Ճիշտ մեջտեղում» եղած առաքինության այս վարդապետությունը գալիս է Արիստոտելից: Նյուսացին հաճախ է զարգացնում այն:

92 Փենեեսի նիզակը խորհրդանշում է հին մարդու կործանումը մկրտության միջոցով:

93 Ոսկե հորթի խորհրդանշական իմաստն այստեղ տարբերվում է այն իմաստից, որը տրվել էր վերևում:

* *Կիրկե - Ըստ հունական դիցաբանության՝ Կիրկեն արեգակի դուստրն էր, հրապուրիչ կախարդ մի կին, որ մարդկանց մեջ*



*տռփանք առաջացնող դյութական ըմպելիքներ պատրաստելու միջոցով կարողանում էր նրանց կերպարանափոխել անասունների: «Իլիականում» նա, այս միջոցն օգտագործելով, Յուլիսիսի ընկերներին վերածեց խոզերի (Ծնթ.՝ թարգմ.):*

** *Դաթան, Կորե - Պատմությունը վկայում է, որ Ռուբենի ցեղից Դաթանը (որը ծանոթ էր նաև Աբիրոն անունով) և ղևտացի Կորեն (Կորխ) այն երկու խռայելացիներն էին, որոնք գլխավորեցին Մովսեսի դեմ ծագած ապստամբությունը: Պատժվելով Աստծուց՝ նրանք խսկույն մեռան, ինչպես այդ մասին հայտնել էր Մովսեսը (Ծնթ.՝ թարգմ.):*

94 Սրանք այն գծերն են, որոնցով Նյուսացին սովորաբար բնորոշում է Աստծու պատկերը:

95 **Կեսեր** - Այս Կեսերը, որին ուղղված է ներկա աշխատությունը, առաջին անգամ լինելով՝ նշված է այստեղ Նյուսացու ձեռագրերից մեկում: Մի քանի ձեռագրերում նրա անվանը հանդիպում ենք աշխատության վերնագրում: Նրա ինքնությունը հայտնի չէ մեզ:

96 Բարեխոսի այս դերը այն դերն է, որ Նյուսացին ընդգծում էր իր առաջին գրվածքներից մեկում, որտեղ խոսելով Մովսեսի մասին՝ ասում էր. «Հասնելով այդ բարձրությանը՝ մի տեսակ նա գտնվում է մարդկային փոփոխական և աստվածային անփոփոխ բնությունների սահմանագծին և միջնորդ է լինում երկու ծայրերի միջև՝ աղերսանքներ ներկայացնելով Աստծուն մեղքով ապականվածների համար և հայցելով նրա ողորմածությունը նրանց հանդեպ, ովքեր կարիք ունեն այդ ողորմածությանը ... Այդպիսով նա իր բարեսիրությամբ ընդօրինակում է Աստծուն՝ կատարելով այն, ինչ հատուկ է աստվածային բնությանը»:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Գրիգոր Նյուսացու «Մովսեսի կյանքը» . . . . . . . . . . . . . . . . . . .5

Մովսեսի կյանքը
Նախաբան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .11

Մաս առաջին
Մովսեսի պատմությունը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .17

Մաս երկրորդ
Հայացք Մովսեսի կյանքի վրա . . . . . . . . . . . . . . . . . . . . . .45

Եզրակացություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .80

Ծանոթագրություններ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .81

**Համակարգչային ձևավորումը,**
**էջադրումը՝**
**Հրապարակչական բաժնի**

**Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան**